# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄ

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ընդառաջելով Գերմանիայի Հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանի, ինչպես նաև Գերմանիայի Եպիսկոպոսաց ժողովի և Ավետարանական Եկեղեցու խորհրդի հրավերներին, հովվապետական անդրանիկ այցելությամբ հունվարի 24-ից փետրվարի 4-ը եղավ Գերմանիայում:*

*Տասներկուօրյա այցելության ընթացքում Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ Գերմանիայի վարչապետ Հելմուտ Քոլի, արտաքին գործոց նախարար Քլաուս Քինկելի, ինչպես նաև Հյուսիս Հռենոսյան և Արևմտյան Ֆալիայի նահանգապետ Յոհաննես Ռաուլի, խորհրդարանի նախագահ տիկին Ռիտա Սյուսմուտի և պետական, դիվանագիտական բարձրաստիճան այլ գործիչների հետ:*

*Էկումենիկ ծրագրի շրջանակներում Վեհափառ Հայրապետը հանդիպեց նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, համատեղ աղոթեց նրանց հետ:*

*Նորին Սրբության այցելությունը պսակվեց «Պատվավոր դոկտորի» տիտղոսի շնորհումով Հալլեիի «Մարտին Լյութեր» համալսարանի կողմից:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ՖՐԱՆԿՖՈՒՐՏԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ

*Հունվարի 28-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իրեն ուղեկցող Ս. Հռիփսիմե վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Մովսես վրդ. Մովսիսյանի հետ, ժամանեց Ֆրանկֆուրտի օդանավակայան:*

*Նորին Սուրբ Օծությանը դիմավորեցին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Գեր. Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Կենտրոնական Գերմանիայի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Հակոբ ավագ քհն. Գյոքչյանը, Գերմանիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիակոր դեսպան տիար Աշոտ Ոսկանյանը, Թեմական խորհրդի անդամները, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, մեծաթիվ ավգայիններ:*

*Ողջագուրանքից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի օդանավակայանի պատվո սրահ, ուր տրվեց փոքրիկ հյուրասիրություն:*

*Ապա Նորին Սրբությանը բարիգալստյան խոսքեր ասաց թեմական առաջնորդը՝ հայտնելով իրենց ուրախությունը Վեհափառ Հոր օրհնաբեր այցելության առիթով:*

Իր փոխադարձ խոսքում Հայոց Հայրապետը ողջունեց Գերմանիայի հայ համայնքի կավակներին, նշեց, որ նրանց հայրենանվեր գործունեությունը ևս մշտապես բարձր է գնահատվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից:

### ԺԱՄԱՆՈՒՄ ՔՅՈՒՆ

Այստեղից Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Քյոլն քաղաք, «Մաթերնուսհաուզ» հյուրանոց:

Մուտքի մոտ Նորին Սրբությանը և իրեն ուղեկցող շքախմբին դիմավորեցին Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանը, գերմանահայոց հոգևոր դասի և թեմական խորհրդի ներկայացուցիչները:

Բարիգալստյան խոսքերից և ողջագուրանքներից հետո, Նորին Սուրբ Օծությանն ուղեկցեցին դեպի հյուրանոցի իր հարկաբաժին՝ փոքր-ինչ հանգստանալու և ապա մեկնելու տեղի առաջնորդանիստ եկեղեցի:

### ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ՝ ՁԵՌԱՄԲ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ինչպես արդեն նախատեսված էր, հունվարի 24-ին, շաբաթ օրը, տեղական ժամանակով ժամը 15.00-ին, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով առաջնորդվեց դեպի Քյոլնի առաջնորդանիստ Մայր եկեղեցի՝ կատարելու օծման հանդիսավոր արարողությունը: Այստեղ էին հավաքվել մեծաթիվ հավատավոր հայորդիներ՝ դիմավորելու իրենց Հոգևոր Հորը:

Օծման արարողությանը ներկա էին նաև Գերմանիայում Հայաստանի արտակարգ և լիապոր դեսպան Աշոտ Ոսկանյանը, ազգային իշխանությունների և քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք:

Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին կանգերի կվարթ ողողանքներով և շարականների երգեցողությամբ:

Նորին Սրբությունն իր սրբական աջով նախ օծեց հայկական ոճով ու դրվագումներով վերանորոգված նախկին կաթոլիկ Ս. Քրիստափոր տաճարը՝ այն վերանվանելով Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ:

Օծման սրբական արարողակարգից անմիջապես հետո, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը նորաօծ Մայր եկեղեցում իր բարիգալստյան հետևյալ խոսքերը հղեց Գարեգին Ա Կաթողիկոսին.

«Գերմանիոյ Հայոց նորահաստատ թեմի հոգեւորական դասու, ազգային իշխանութեան, եկեղեցական համայնքներու, գաղութի կազմակերպութիւններու եւ միութիւններու, ինչպէս նաեւ մեր սիրելի ժողովուրդի բոլոր դասակներուն քրիստոնէական սիրով ու ազգային սրտատրոփ ապրումներով եւ որդիական ակնածանքով կ'ողջունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի այս հովուապետական այցելութիւնը:

Արդարեւ, հովուապետական այս այցելութիւնը հոգեւոր ցնծութեան եւ ազգային ոգեւորութեան կ'առաջնորդէ մեզ, ինչ որ եզակի ապրում մըն է Գերմանիոյ այս փոքրիկ թեմի մեր ժողովուրդին համար:

*Ի՜նչ ուրախութիւն է տեսնել հայրն ու որդիք, հովուապետն ու եկեղեցւոյ հովիւը միասնաբար գիրկընդխառնուած, հաւատքով եւ յոյսով միաբանուած:*

*Մեր սրտաբուխ ուրախութիւնը եւ յուզումը ունի գլխաւոր երկու պատճառներ, որոնք թոյլ տուէք յիշել այստեղ երկու խօսքով.*

*Մէկն այն է, որ, Վեհափառ Տէր, Դուք կու գաք իբրեւ հայր, փնտռելու Ձեր հօտը Գերմանիոյ մէջ, ուր ապրող Ձեր որդիները հաստատուած այս հողին վրայ շատ քիչ ժամանակ առաջ միայն կարողացան ի մի հաւաքուիլ, բառին բուն իմաստով եկեղեցի մը դառնալ: Եւ Դուք կու գաք այս եկեղեցիին բերելու մեր հայրերու հաւատքին ճշմարիտ լոյսը, իր իսկ աղբիւրէն՝ Արարատի փէշերէն ոչ շատ հեռու՝ աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն եւ մեր պատմական բազմաչարչար Հայրենիքէն:*

*Մեր ուրախութեան երկրորդ պատճառը հաւատքն ու հոյսն է: Այս ժողովուրդը ունեցաւ առաքինութիւնը՝ իր հայրերու հաւատքն ու հայրենաբաղձ յոյսը դարեր շարունակ իր սրտի ամէնէն խոր անկիւններուն մէջ ծրարած երկրէ երկիր տանելու իբրեւ իր տառապանքին բալասան ու իր գոյատեւման որպէս աւիշ: Փառք Աստուծոյ, որ չսխալեցաւ այս ժողովուրդը իր այս սկզբունքին մէջ եւ այդ պատճառով ալ իր հաւատքը միշտ պահեց անեղծ, միշտ իր գլխէն վեր, միշտ իր սրտի ամենաթանկագին գոհարը:*

*Ահա Դուք, Վեհափառ Տէր, 1700 տարիներու այդ հաւատքին ամենաառաջին ու ամենաբարձր պաշտօնեան, Ձեր ձեռքերով օծեցիք այս ժողովուրդին հաւատքի տունը, այսինքն իր գոյութեան խարիսխը:*

*Իսկ ինչ կը վերաբերի յոյսին, այդ ալ իրականութիւն մը գարձաւ վեց տարիներ առաջ մեր Հայրենի հողին վրայ եւ Դուք կը ներկայանաք այսօր այս ժողովուրդին Ձեր մէկ ձեռքին մէջ խաչը՝ իբրեւ հաւատքի խորհուրդ եւ միւս ձեռքին մէջ պետական անկախութեան դրօշը՝ իբրեւ մեր բոլորին յոյսն ու իրականացած երազը:*

*Բարիգալստեան մեր խօսքին կը միացնենք նաեւ մեր սրտաբեղ մաղթանքը, գաղութի մեր ժողովուրդի իւրաքանչիւրի սրտէն բխած մաղթանքը, որ Աստուած երկար ու առողջ կեանք պարգեւէ մեր սիրեցեալ Հայրապետին, որպէսզի ան շարունակէ նոր թափով եւ ուժգնութեամբ իր ծառայութիւնը բերել Հայաստանեայց եկեղեցւոյ մեր սիրելի ժողովուրդին:*

*Բարի եկաք, Վեհափառ Տէր»:*

*Առաջնորդ սրբազան հոր բարիգալստյան խոսքերից անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը Հայրապետական իր պատգամը տվեց ներկա հավատավոր ժողովրդին՝ նշելով, որ այս օրը թե՛ Սուրբ Էջմիածնի և թե՛ գերմանահայության պատմության մեջ պիտի արձանագրվի որպես «գերմանահայության օր» և «նորաօծ Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ այս եկեղեցիով գերմանահայ մեր սիրեցյալ ժողովուրդը հոգևոր մի վերապարթոնք է ապրում՝ կապված լինելով իր ազգային եկեղեցուն».*

*«Սիրելի առաջնորդ սրբազան Գարեգին եպիսկոպոս Բեգչյան, սիրեցյալ սրբազան եղբայրներ, հոգևոր զավակներ, ազգային իշխանությանց ներկայացուցիչներ, սիրեցյալ և հարգարժան դեսպան Հայաստանի Հանրապետության Գերմանիո մեջ, սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս մեր քույր եկեղեցիների և թանկագին հավատացյալներ.*

*Զգիտեմ այս պահին ի՞նչ է անցնում և դառնում ձեր մեջ, յուրա-*

քանչյուրիդ հոգու մեջ, սակայն ես խորապես հուզված եմ ուրախության անփոխարինելի, անգերազանցելի զգացումով: Առավոտյան արթնանալ Նեղոսի ափին՝ Եգիպտոսում և կեսօրից հետո այստեղ օծել մեր որբազան եղբայրների հետ միասին հայոց նոր մի եկեղեցի՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի նման անզուգական զույգի անվամբ: Աստուծո խորհուրդները անհասանելի են: Ես անցյալ չորեքշաբթի կարդացի հետևյալ տողերը Ավետարանից. «Զի հով ուր կամի շնչէ, եւ զձայն նորա լսես, այլ ոչ դիտես, ուստի գայ կամ ուր երթայ»: Հովը փչում է, նրա շարժումը զգում ես, սակայն չես իմանում, թե որտեղի՞ց է դալիս և ուր է գնում: Հոգին Աստուծո, չունչը Աստուծո, որից մարդը ծնվեց՝ այս հոգին ինչպես է ներգործում մեր հայոց պատմության մեջ, աշխարհի պատմության մեջ: Մենք՝ մարդիկս, չենք կարող ճշտել, իմանալ, սակայն զգում ենք նրա շարժումը մեր կյանքի մեջ: Այնտեղ, Եգիպտոսում, դարավոր եկեղեցիներ կան, տասնմեկերորդ դարից սկսած և մինչև օրս օծված այդ եկեղեցիներից մեկ-երկուսն են միայն մնացել կենդանի, ներշնչող և հոգիների մեջ առողջության և առ Աստված հաղորդության ազգային պատկանելության զգացումները տարածող:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բեմի վրա կանգնեցի հունվարի 14-ին, անդրադարձա, որ 70 տարի առաջ էր, երբ այդ եկեղեցին օծվեց: 70 տարի բարյաց շնորհաց աղբյուր դարձավ քանի՛-քանի՛ սերունդների համար: Եվ քանի-քանի եկեղեցիներ էլ քանդվեցին ու գնացին: Մտքովս այս պահին անցնում է, թե ի՞նչ եղան այն հազարավոր եկեղեցիները, որոնք Արևմտյան Հայաստանի և կամ Արևելյան Հայաստանի, կամ հյուսիսի, հարավի այն եկեղեցիները, որ մեր հայրերը կառուցեցին ճարտարապետական սքանչելի ոճով: Շատերը քանդվեցին, փոշու վերածվեցին, և շատերն այսօր ավերակ վիճակում են: Քարը քար է, և փոշու է վերածվում: Բայց, երբ եկեղեցին մեր Հոգու մեջ ապրի և երբ հավատքը կենդանի է, նոր ծնունդ կտա նոր եկեղեցիների: Մարդիկ շատ քարեր կարող են քանդել, սակայն Հոգին չեն կարող քանդել: Ոչքա՜ն քանդեցին, երկրաշարժերը որքան տարան, սակայն քարեն նոր կյանք ստեղծվեց, այն որ, կյանքն իսկ է Աստված մեր մեջ հավատքով, գործով:

Այսօր դուք այստեղ, Գերմանիայում, նոր վկայություն տվեցիք, նոր չոչափելի պերճախոս վկայություն, որ հավատքը կենդանի է ձեր մեջ: Ապրե՛ք, որբազան, թեմական իշխանությանց անդամներ, եկեղեցու հոգաբարձություն, ժողովուրդ, որ դիտեք Աստծու արժեքը պատմության դիմաց, մարդկանց առջև, ձեր գալիք սերունդների առջև վկայել, թե մենք ուր էլ որ դնանք, մեր մեջ Հոգևոր Հայրենիքն է, որ կապրեցնենք, և այն աշխարհագրական, ժամանակագրական սահմանափակումներ չի ճանաչում: Ամեն մեկը ձեզանից այսօր թող անկեղծության մեկ պահ ապրի: Ո՞ւր է ինքն այսօր: Ամեն մեկը ձեզանից իր կենսագրությունը ունի: Ձեզանից շատերը չէին էլ երևակայի, թե մի օր Քյոլնում պետք է լինեին: Շարժումը այնպես եղավ, բախտը ձեզ գցեց օտար հորիզոններ, աշխարհը փոխվեց: Այն երկրները, ուր ապրում էիք, այդտեղ չեք հիմա, սակայն այն եկեղեցին, որով ապրում էիք, որ ձեր մեջ կապրեր, ոչ Թուրքիա է ճանաչում, ոչ Գերմանիա, և ոչ էլ ուրիշ աշխարհագրական տեղանք: Հոգևոր Հայրենիքն է: Եվ այսօր Հայաստանում այդ Հոգևոր Հայրենիքը նոր կյանքով սկսեց ապրել ազատ ու անկախ պետության ընձեռած նոր պայմանների մեջ:

Հոգին առավել է, քան մարմինը, ազգը ավելի մեծ է, քան անհատը և

«ՕՐՀՆԵՍՑԻ ԵՎ ՍՐԲԵՍՑԻ...»

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Եկեղեցին հավերժական և ոչ ոք և ոչ էլ «դրունք դժոխոց զնա ոչ հաղթահարեսցէ»: Դժոխքի դռներն անգամ չեն կարող հաղթահարել Եկեղեցուն: Որքա՜ն թագավորություններ ունեցանք. Արշակունյաց, Բագրատունյաց, Արծրունյաց, Կիլիկյան, միայն քրիստոնեական շրջանին եմ հիշում, քանի նախարարական տներ. Մամիկոնյան, Խորխորունյան, Ռշտունյան, իշխանություններ եկան, գնացին: Ինչ որ մնաց, այդ Եկեղեցին, հավատքը միացած Հայոց հոգու հետ և Հայրենիքի գաղափարի հետ: Այսօր դուք, ձեր եղբայրներից շատերը ուրիշ երկրներում ապրում են ուրիշ քաղաքական, պետական, ընկերային, տնտեսական պայմաններում, սակայն բոլորս էլ ունենք ոսկի շղթա, որ անցնում է բոլոր Հայերի հոգիներով, ուր էլ լինեն նրանք, որտեղ էլ որ ապրեն: Եվ Հայոց բանաստեղծը՝ Վահան Թեքեյանը ի՞նչ է ասում.

Եկեղեցին Հայկական մեն մի քարի տակ գետնի,
Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամբա մը ունի...

Մեր թշնամիները ճանապարհները գտան, գոցեցին, փակեցին, փոշոտեցին, սակայն չկարողացան գտնել և երբեք չեն կարողանալու գտնել մեր հոգիների միջով անցնող այդ գաղտնի ճանապարհը: Մեզ մեր հավատքին, մեր Հայրերի ավանդությանը, մեր Սուրբ Եկեղեցու նվիրական ավանդությանը կապող այն հավատարմությունը, որ Աստված-մարդ հաղորդությունն է, և ո՞վ կարող է Աստծուն հաղթել: Շատերը փորձեցին արևմտյան աշխարհի մեջ, եղան մեծ փիլիսոփաներ, որոնք ասացին, թե Աստված մեռած է: Իրենք մեռան, գնացին, սակայն Աստված ապրում է և պետք է հավիտենապես ապրի: Սովետական Միությունը 70 տարի ամեն ճիգ թափեց, բռնական ամեն միջոցի դիմեց՝ Աստծուց հեռացնելու մարդկանց: Եկեղեցիները փակեցին, եկեղեցականներին աքսորեցին, Կաթողիկոս սպանեցին, մեր Հայոց պատմության գրքերը փոխեցին, Քրիստոսին Հայոց պատմության էջերից ցանկացան հանել, սակայն Աստված անհաղթելի է և հաղթում է մարդկանց: Այսօր նոր շունչ կա մեր ժողովրդի մեջ. իր ինքնությունը, քրիստոնեական ինքնությունը գտնելու շունչ է տալիս, և այդ շունչն է, որ ես ուզում եմ ձեզ այսօր բերել: Ես ուզում եմ առանց իմ Եկեղեցու, առանց իմ ազգի և առանց իմ Հայրենիքի: Եկել եմ այսօր ոչ թե ինքս խոսելու, այլ մեր Եկեղեցին, Հայրենիքը, պետությունը խոսեցնելու:

Սուրբ Էջմիածին: Երեք տարի է արդեն, ինչ ապրում եմ Հայաստանում: Ամեն անգամ, երբ մտնում եմ Մայր Տաճար, ամեն առավոտ, երբ անցնում եմ Տրդատ թագավորի կամարակապ դռան միջով, ամեն անգամ, երբ ծնրադրում եմ այն քարին, ուր Քրիստոս, մուրճը ձեռքին, խփեց և այնտեղից ծնվեց Հայոց առաջին եկեղեցին, հարց եմ տալիս ինքս ինձ. ի՞նչ ուժ էր այն, որ պահեց այդ սուրբ հաստատությունը՝ որպես ներշնչումի, հոգեկան սնուցումի աղբյուր: Էջմիածինը քա՞ր է: Ափսոս նրանց, որոնք իբրև քար են դիտում Էջմիածինը: Էջմիածինը ճարտարապետություն է՞: Ո՛չ: Էջմիածինը հոգի է, քարերի միջից բխող հոգի: Սակայն հոգին լսելու համար հոգով պետք է մոտենալ, հոգի պետք է ունենալ, ճշմարիտ հավատացյալ պետք է լինել՝ այդ քարերի միջից Սուրբ Հոգու շարժումը զգալու և մեր հոգու մեջ այն փոխադրելու համար:

Այսօր եկեք բոլորս անդրադառնանք այն հանգամանքին, որ ապրում ենք պատմակերտ մի օր: Այս օրը, 24-ը հունվարի, ձեզանից յուրաքանչյուրի կյանքի պատմության մեջ պետք է դրվի որպես հոգեկան կերպարա-

նափոխության, պայծառակերպության պահ: Եթե այս եկեղեցու օծումից հետո մնալու ենք նույն անձինք, ապա ինչո՞ւ եկանք, ինչո՞ւ օծեցինք: Քարի օծումը իմաստավորվում է, երբ մեր հոգիները վերոտին օծվեն Սուրբ Մյուռոնով, և մենք վերաթարմացնենք, վերակենդանացնենք մեր մեջ Սուրբ հավատքը Քրիստոսի, մեր Հայրերի դարավոր ավանդության, սրբության ներքո: Աշխարհի մեջ շատ հովիր կգան ու կգնան, բայց մենք իմանանք այն հովին հետևել, որ Աստծուց է գալիս:

Այս օրը ես ուզում եմ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 1700-ամյա պատմության մեջ արձանագրվի որպես Գերմանիայի Հայոց օր: Թող այնտեղ արձանագրվեն այս ոսկեղեն բառերը. Գերմանիո Հայոց Հավատքի վերաթարմության, Հավատարմության օր: Այսպես է պատմություն ստեղծվում: Այլևս մենք, իբրև ազգ, դադարենք պատմությունը միայն հիշելուց, թե մեր Հայրերը այսպես են արել, մենք Վարդանանց ժամանակ այսպես ենք արել...: Անցյալը թողնենք: Ներկան և ապագան են կարևոր: Մենք պետք է շրջափոխություն ապրենք, իրական դարձ, հոգեկան դարձ: Դառնանք ի խավարե ի լույս, հանցյալե ներկա, ի ներկայե ապագա: Մենք այլևս անցյալը հիշող, հիշատակներով ապրող, մխիթարվող, հպարտացող ազգ չմնանք, նորը չինող, կերտող և ապագային ավելի լավը լինելու իղձով առաջանանք: Այս պետք է լինի մեր ազգի նշանաբանը, այլապես ինչի՞ համար այսքան տարի երազեցինք, պայքարեցինք:

Մենք մեր երկրի մեջ գերի էինք, սակայն տեր դարձանք: Մենք մեր Հայրենիքի տերն ենք՝ այդ Հայրենիքի ծառան լինելով: Նա, ով ծառա չէ, ասում է Հիսուս, չի կարող տեր լինել: Կարող է բռնապետ լինել: Դու քո տան տերն ես, տունդ շեն պահիր: Տանդ ծառան լինելով, նախանձախնդրություն ունենալով, կշենացնես այն: Դրա համար ես այսօր այս եկեղեցու օծումը նկատում եմ Գերմանիայի մեր Հայության կյանքի մեջ որպես վերածնության օր: Պետք է բոլորս փոխվենք: Այս եկեղեցին, որի խորանը օծեցինք, այս եկեղեցին չպետք է դատարկ մնա: Պետք է գաք, ծնկի գաք, աղոթեք, Աստծու ուժը զգաք ձեր մեջ, Հայրենիքի ներկայությունը, քանզի մեր եկեղեցին ազգային է: Հանեցեք մեր եկեղեցին պատմությունից, ի՞նչ կմնա: Ո՞վ ստեղծեց գիրը, ո՞վ ստեղծեց հայոց գրականությունը, ճարտարապետությունը, շարականները:

Հետևաբար, այս օծման առիթով շնորհավորում եմ առաջնորդ Սրբազանին իր ժրաջան աշխատանքի համար, բոլոր հոգևորականներին, որոնք գերմանական հողի վրա են ծառայում իր հայրական առաջնորդության ներքո, թեմական բոլոր անդամներին, մեր ազգային բոլոր կազմակերպություններին, առանց խտրականության, մշակութային, բարեսիրական, ընկերային, երիտասարդական: Մեկ խնդրանք ունեմ ձեզանից. եկե՛ք, եղեք հիմքը, պատը, կամարը և գմբեթը: Մի մնացեք առանձին քար: Փողոցի միջի առանձին քարը արժեք չունի: Առանձին ժայռը՝ նույնպես: Սակայն մեկ կտոր ապյուսը պատի մեջ կյանք ունի: Մասնակցե՛ք, սքանչելի երգչախումբ կազմեք, երեխաներին կիրակնօրյա դպրոց բերեք, նրանց հավատք ներշնչեք, դրա մեջ տեսեք ձեր ուրախությունը: Զոհողությունից գտնվող ուրախությունը ավելի մեծ է որևէ տեսակի ուրախությունից: Մենք տակավին երկար խոսելիքներ ունենք, այժմ ցանկանում եմ խոսքս փակել: Վաղը այս եկեղեցում կմատուցվի անդրանիկ Պատարագը: Դեռ ձեզ հետ զրուցելու առիթներ կունենանք, երիտասարդության հետ հանդիպումներ կունենանք և նաև իմ խոսքն պետք է ուղղեմ Գերմանիայի բոլոր քաղաքների մեջ ապրող

*Հայերին: Եկեք բոլորս գալիք շաբաթը դարձնենք մեզ համար կերպարանափոխության ուժով լցված շաբաթ: Երջանկություն և Հաջողություն թող Աստված տա ձեզ, սակայն դուք կարողանաք այն արժեցնել Եկեղեցու, ազգի, Հայրենիքի, ձեր անձից բարձր արժեքների ծառայելով:*

*Թող Աստծու օրհնությունը այսօրվա օծման միջից վերածնի ձեր բոլորի մեջ քրիստոնեական մեր Սուրբ հավատքը և մեր Հայրենիքի պատկանելիության անբեկանելի զգացումը հավիտյանս հավիտենից. ամեն»:*

***

*Օծման և անվանակոչության հանդիսակարգից հետո, առաջնորդանիստ Մայր եկեղեցու սրահում տեղի ունեցավ աջահամբույր:*

*Հերթով Նորին Սուրբ Օծության աջը համբուրեցին և նրա օրհնությանն արժանացան հայ համայնքի մեծաթիվ հավատավոր կավակներ:*

*Հայոց Հայրապետին ներկայացվեցին նաև հայ համայնքի և գերմանահայ միությունների ներկայացուցիչները, ովքեր իրենց ազգապահպան գործունեությամբ մեծ դեր ու նշանակություն ունեն գաղութի կյանքում:*

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

*Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի, «Մաթերնուսհաուզ» հյուրանոցի գեղեցիկ սրահում տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիապոր դեսպան Աշոտ Ոսկանյանը, ազգային իշխանությունների ներկայացուցիչներ, դիվանագիտական այրեր, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Թեմական խորհրդի ու համայնքի անդամներ:*

*Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր, իսկ Հայոց Հայրապետը իր խորին շնորհակալությունը հայտնեց ներկաներին՝ ջերմ ընդունելության, ինչպես նաև սեփական Եկեղեցուն ու Հայրենիքին այսքան նվիրված լինելու համար:*

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐԱՕԾ Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Հունվարի 25-ի կիրակի օրն սկսվեց ժամը 08.30-ին նորաօծ եկեղեցում կատարված առավոտյան ժամերգությամբ, որին ներկա էր նաև հավատացյալների հոծ բազմությունը:*

*Այնուհետև նորաօծ եկեղեցում մատուցվեց անդրանիկ Սուրբ Պատարագը:*

*Ժամը 10.00-ին հանդիսավոր թափորը «Հրաշափառ»-ի երգեցողությամբ և կանգերի ղողանջներով Նորին Սուրբ Օծությանը և պատարագիչ արբական հորը՝ Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ արքեպս. Նագաշյանին, հոգևորականաց դասի հետ, առաջնորդեց դեպի Ս. Սահակ-Ս. Մեսրոպ առաջնորդանիստ Մայր եկեղեցի:*

*Սուրբ և անմահ Պատարագի երգեցողությունը կատարվեց նորաօծ եկեղեցու «Կոմիտաս» երգչախմբի կողմից՝ տիար Արետ Բեգչյանի ղեկավարությամբ:*

*Սուրբ Պատարագին ներկա էին քուրմ Եկեղեցիների ներկայացուցիչներ, քաղաքական, դիվանագիտական այրեր, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծաթիվ հավատացյալ հայորդիներ:*

*Հինգշաբթի Ս. Պատարագի, «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց Ամենայն Հայոց Հայրապետը՝ շեշտելով իր այս այցելության պատմական նշանակությունն ու կարևորությունը: Իր հայրապետական պատգամում Նորին Սրբությունը ի մասնավորի շեշտեց.*

*«Ինչո՞ւ Քրիստոս եկավ, ինչո՞ւ Աստված մարդացավ. մեկ բանի համար՝ սիրո համար: Աստված այնքան մեծ սեր ունի մարգոց հանդեպ, որ ուղարկեց Իր Միածին Որդին, որպեսզի Ան մեզի փոխանցե Աստուծո հոգին ու սերը:*

*Սերը շինարար և ստեղծագործիչ է, իսկ ատելությունը՝ քանդիչ:*

*Ամենահանճար Տեր Աստված սիրով ստեղծեց մարդուն, ուղարկեց Իր Որդուն՝ Քրիստոսին, մարդկությանը, որ զանոնք փրկե:*

*Եկեղեցիին ծառայելը խոնարհություն մըն է Աստուծո, եթե եկեղեցին մեր կյանքեն հանենք, մենք կրյանք միայն հող, փոշի, խոտ:*

*Այս օրերուս մեր մեջ սկսած է վերանորոգության շրջան մը: Այս Սուրբ Խորանեն կողջունեմ մեր վերածնունդը ու վերականգնումը:*

*Մի՛ խնդացնեք մեր թշնամիները, եթե անոնք մեզ տեսնեն, որ պառակտված ենք, բաժանված ենք, կուրախանան:*

*Միացե՛ք եկեղեցիի երդիկին տակ, բոլորվեցե՛ք ձեր Առաջնորդին շուրջ և մի՛ մոռնաք ձեր Մայրենի Հողը, Հայրենիքը:*

*Աստուծո խորհուրդները անսահմանելի և անճանաչելի են: Ո՞ւմ մտքով կանցներ, որ այսօր մենք այստեղ հանդիպելու էինք և այս երկու կամարների ներքև միասին աղոթելու: Իսկապես, նախ փառք եմ տալիս Աստուծո, որ շնորհ արեց ինձ, որ կարողանամ ձեզ հետ հաղորդակցվել, հոգեկանորեն զգալ ձեր ներկայությունը, ձեր հավատքը, ձեր սերը հանդեպ մեր Ս. Եկեղեցին և մեր ազգը, որ դարեր շարունակ քայլեց հավատարմորեն Քրիստոսի ուղեգծած ճանապարհով և Ավետարանի լույսով: Ձեզանից ամեն մեկը կարող է մտածել, թե ինքը ո՞ւր էր և ո՞ւր է այսօր: Ցուրաքանչյուրս թող մտածի, թե ինքը տարիներ առաջ որտե՞ղ էր, իսկ այժմ ուր է: Ո՞ւմ մտքով կանցներ, որ մենք պատմության դեպքերի բերումով պետք է գտնվեինք այս հողում և վայելեինք այս ժողովրդի սերը և հարգանքը: Կյանքը փոփոխություն է, սակայն քրիստոնեական հավատքը անփոփոխ է, որ հոգեկան ուժ և զորություն է երջանկության: Հայաստանը փոխվեց: Տասը տարիներ առաջ Հայաստանը ուրիշ էր, այսօր՝ ուրիշ: Պատմությունը փոփոխությունների ընթացք է: Մենք 20-րդ դարը արյունով, ջարդով, ցեղասպանությամբ սկսեցինք, սակայն այսօր մենք ազատ և անկախ հայրենիք ենք և Եկեղեցի:*

*Դարեր-դարեր շարունակ մենք դժվար օրեր ապրեցինք, սակայն Աստված միշտ եղավ մեր ազգի հետ, քանզի ջանացինք հավատարիմ մնալ Քրիստոսի հավատքին և Ս. Ավետարանին: Ինչպես ես եմ զգում՝ պատմական օր ենք ապրում:*

*Առաջին անգամն է մեր դարավոր պատմության մեջ, որ Ս. Էջմիածնից Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելում է Գերմանիա և գտնում իր ժողովրդին իր հավատքի մեջ ամուր և Եկեղեցու ավանդությանը սերտորեն կապված:*

*Ապրե՛ք, հազա՛ր ապրեք: Դուք ինձ երջանկացրիք ձեր հավատքի զորությամբ:*

*Ինչներիս է պետք ազատությունը և անկախությունը, եթե տերը չլինենք նրա: Ամեն մեկը բաժին ունի բերելու: Դուք այս եկեղեցին չեն պահեք: Ձեր եկեղեցական կյանքը ծաղկուն պահեք և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու Հայաստանին կապված զգացեք: Ձեզանից ամեն մեկը թող քրտինքի կաթիլ թափի Հայ հողի վրա, թող քար դնի քարի վրա, որ ազգակերտման գործի մեջ լինի մի անձ, որը բաժին է բերում պատմությանը: Ցոթ տարիներ առաջ այստեղ չկար մի անձ, որը ներկայացներ ազատ և անկախ Հայաստանը, իսկ այսօր մենք ունենք անկախ Հայաստանի դեսպան: Պիտի իմանանք փոխվել: Եթե չփոխվենք, աշխարհի փոփոխությունը ո՞ւմ է պետք: Դրա համար ես նոր սերունդին կոչ եմ անում՝ կարող է լինել մեկը, որ հայերեն լեզուն լավ չխոսի, սակայն թող ճիգ անի, ջանք թափի, որ կարողանա իմանալ հիմնական բառերը հարաբերվելու: Մի պատճառաբանեք չիմանալը ուսարության մեջ ապրելով: Ես էլ եմ ուսարության մեջ ապրել:*

*Եվ այսօրը ձեզ համար թող լինի վերանորոգության օր: Հիշեք այս օրը և այս օրով խմորեք ձեր մյուս օրերը, որպեսզի կարողանաք ձեր հավատքը կենդանի պահել հավիտյանս հավիտենից, ամեն»:*

*Վերջում Նորին Սուրբ Օծությունը իր անդրանիկ այցելության և նորաօծ եկեղեցու ուրախ առիթով առաջնորդ սրբազանին հանձնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից տարված արծաթա մի սկիհ և մի խաչքար՝ Մայր եկեղեցու Սուրբ Խորանի առջև կետեղելու համար:*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի, Առաջնորդարանի սրահում տեղի ունեցավ Վեհափառ Հոր հանդիպումը քույր Եկեղեցիների (Ղպտի, Ասորի, Հույն, Կաթոլիկ, Ռուս, Ավետարանական) ներկայացուցիչների հետ:*

*Երկուստեք ծավալված մտերմիկ զրույցի ընթացքում շոշափվեցին ոչ միայն քույր Եկեղեցիների առջև ծառացած հոգևոր խնդիրները, այլև դրանք էկումենիկ շրջանակներում լուծելու առավել հնարավոր ուղիները:*

*Նորին Սրբությունը մեծ ուրախությամբ նշեց Հայ Եկեղեցու կատարած և կատարելիք գործերը Եկեղեցիների համբեղբայրության ճանապարհին՝ ի նպաստ քրիստոնյա աշխարհի և քրիստոնյա բոլոր ժողովուրդների:*

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ «ՄԱԹԵՐՆՈՒՍՀԱՈՒԶ» (MATERNUSHAUS) ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

*Օրվա եկրորդ կեսին, ժամը 14.30-ին, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի, «Մաթերնուսհաուզ» հյուրանոցի սրահում տրվեց պաշտոնական ճաշ, որին մասնակցում էր ավելի քան 300 մարդ:*

*Ճաշկերույթին ներկա էին նաև Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիակոր դեսպան Աշոտ Ոսկանյանը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական, քաղաքական, դիվանագիտական, հոգևոր այրեր, հայ համայնքի մեծաթիվ անդամներ:*

Նորին Սրբութեանն իր շքախմբի հետ հյուրասրահի առջև դիմավորեցին Քյոլնի Հայ մանկանց պարախմբի անդամները՝ իրենց գեղեցիկ պարով:

Բացման աղոթքից հետո, ողջունելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնաբեր այցը Գերմանիա, թեմի առաջնորդ Տ. Գարեգին եպս. Բեզջյանը ներկայացրեց գերմանահայ համայնքի ներկա կացությունը: Գերմանիայի շուրջ քսան քաղաքներում ներկայումս բնակվում է 35.000 հայ: Նրանք դեռևս 60-ական թվականներից ներգաղթել են Թուրքիայից, Իրանից, Սիրիայից, Լիբանանից, վերջին տարիներին՝ նաև Հայաստանից: Գերմանիայի առաջնորդական թեմը հիմնվել է 1991-ին՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով.

«Վեհափառ Տէր.

Թոյլ տուէք այս սիրոյ սեղանին շուրջ անգամ մը եւս յանուն Գերմանիոյ թեմի ազգային իշխանութեան, մեր համայնքներու, շրջանի ընկերային եւ այլ կազմակերպութիւններու, ժողովուրդի եւ ներկաներու, Ձեր հովուապետական այցելութիւնը ողջունել եւ Ձեզի մաղթել բարի գալուստ:

Դուք այսօր այցի կու գաք մեզի, Գերմանիոյ Հայոց թեմը, Ձեր հօտին: Դուք կ'այցելէք Ձեր այս զաւակները, որոնք նոյն սիրով, նոյն հաւատքով, նոյն յոյսով ու կամքով իրարու շաղկապուած կը ներկայացնեն համայնական կեանք մը, որ կը կոչուի եկեղեցի: Եւ այսօր Դուք կու գաք մեզ ճանչնալու մեր համայնական կեանքին մէջ: Այսօր Դուք կու գաք մեր ցաւերը, մեր տառապանքը, բայց նաեւ մեր ձգտումներն ու իրագործումները աւելի մօտէն ճանչնալու: Այլ խօսքով հաղորդուելու մեզի հետ այնպէս, ինչպէս որ ենք:

Հովուապետական այցելութիւնը կաթողիկոսական ծառայութեան, այլ խօսքով կաթողիկոսական գոյութեան իրաւունքը կազմող առաքելութեան ամենէն շօշափելի, ամենէն կենդանի արտայայտութիւններէն մէկն է: Այսպէս կ'ըմբռնէք Դուք Ձեր հովուապետական այցելութիւնը, այսպէս կ'ապրիք ու այսպէս կ'արտայայտէք Ձեր ծառայութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ ու Հայ ժողովուրդին մէջ: Ձեր ընտրութենէն մինչեւ այսօր տարբեր բնագաւառներու մէջ եւ Գերմանիոյ Ձեր հօտի շարժումներուն մօտէն հետեւող, Դուք Վեհափառ, վստահ եմ այսօր մեզի ըսելիք ունիք: Թոյլ տուէք սակայն, որ մենք ալ մեր կարգին այսօր Ձեզի մեր ըսելիքը ներկայացնենք:

Մեր առաջին ըսելիքը Գերմանիոյ թեմի ժողովուրդի անունով մեր խոր երախտագիտութիւնն է հանդէպ Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ անոր արժանաւոր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոսին:

Սուրբ Էջմիածնի մէջ կայք հաստատած Կաթողիկոսութեան դարաւոր Աթոռը, յոյսի, առաքելութեան ու ծառայութեան մշտավառ փարոս մըն է: Հայ ժողովուրդն է իր ծառայութեան դաշտը, հայ ժողովուրդն է իր գոյութեան իրաւունքը, հայ ժողովուրդն է իր ոյժի միակ աղբիւրը: Ան, իր ծառայութիւնը մեր ժողովուրդին գործով կ'արտայայտէ եւ իր առաքելութիւնը կը տանի մեր ժողովուրդի համայնական կեանքին մէջ: Ծառայութիւնը սակայն մարդով կ'իրագործուի: Ս. Էջմիածինը այսօր, Վեհափառ Տէր, Ձեր անձով ու Ձեր անձին մէջէն նոր առաքելութեամբ, նոր շեմարանով ու նոր տեսուչով, նոր աշակերտ ու նոր անձնակազմով, նոր ծրագրերով ու նոր հեռանկարներով լծուած է անհրաժեշտ մարդը պատրաստելու, իր առջեւ դրուած սրբազան աշխատանքը յաջողութեամբ պսակելու համար: Ուրիշ խօսքով, առաջին հերթին կը պատրաստուի հոգեւորական նոր սերունդը՝ մեր ապագայ հովիւներն ու առաջնորդները:

Նուիրական գործ կը կատարուի Ս. Էջմիածնի մէջ: Բայց այս գործին ղեկանակիչ ոյժը, առաջնորդողն ու ղեկավարողը մեր սիրելի Վեհափառն է: Թոյլ տուէք սա պահուն նաեւ ըսելու, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ կատարուած գործէն աւելիովն ու աւելիովը օգտուողը, ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, մեր սիրելի ժողովուրդն է:

Այսօր, այս առիթով, պիտի ուզէի մեր ժողովուրդին, որ Մայր Աթոռի նկատմամբ մեր կապուածութիւնը, մեր հաւատարմութիւնն ու մեր երախտագիտութիւնը մենք ոչ միայն խօսքով արտայայտենք, այլ նաեւ կենդանի գործով, կենդանի վկայութեամբ: Որովհետեւ այս Կաթողիկոսութիւնը իր եկեղեցական ու աշխարհական ղեկավարութեամբ, ոչ միայն Հայաստանի մէջ, այլ ամբողջ Սփիւռքի հայ ժողովուրդին մէջ կենդանի, իրական ու մնայուն ներկայութիւն մըն է ու աւելիովը պիտի ըլլայ մեր ժողովուրդի աջակցութեամբ:

Մեր երկրորդ ըսելիքը, Վեհափառ, այն է որ գերմանահայ թեմը այսօր հաւաքական վերակազմակերպման ճիգին մէջն է: Ու մեզի համար վերակազմակերպումը միայն խօսք կամ տեսիլք չէ, այլ գործ է թեմական նոր պահանջներուն բոլոր կալուածներէն ներս:

Նանօթ էր, որ այս գաղութը, բացի տասնեակ մը ուսանողներէ եւ գերմանացիներու հետ ամուսնացած հայ ընտանիքներէ, մօտիկ անցեալին, վաթսունական թուականներուն աշխատաւոր հայերէ բաղկացած գաղութ մըն է: Թուրքիայէն, Պարսկաստանէն, Սուրիա-Լիբանանէն եւ այսօր ալ Հայաստանէն հետզհետէ հաւաքուած, Գերմանիոյ շուրջ քսան քաղաքներուն մէջ ցրուած երեսունհինգ հազար հայութեան եկեղեցական ու ազգային մարզին մէջ առաջին նախաձեռնութիւնը եղաւ մշակութային փոքր միութիւններ կազմել, իրենց իսկ նիւթական չնչին միջոցներով, որպէսզի կարենան այդ միութիւններուն շնորհիւ յաջեցնել իրենց կարօտը հայեցի այն կեանքին, որ ապրած էին իրենց եկած մեծ ու աւանդական գաղութներու մէջ:

Այս հայերը յաջորդաբար ունեցան եկեղեցական համայնքներ եւ մէկ հոգեւորական, որ տարիներ շարունակ, քաղաքէ քաղաք ճամբորդելով, որքան որ կարելի է, կը հասնէր ժողովուրդի հոգեւոր կարիքներուն: Մինչ այդ կազմուեցան ընկերային ու մարզական միութիւններ, ապա տեղեկագրական ու 1915-ի հայ եղեռնի հետազօտական հիմնարկներ:

Եօթանասունական եւ ութսունական թուականներուն գաղթականական նոր ալիքներ եկան Գերմանիա: Յետոյ 1988-ի Հայաստանի երկրաշարժէն ու 1990-ական թուականներուն սկսաւ Արցախի շարժումն ու տեղի ունեցաւ դժուար, բայց երջանիկ ծնունդ մը՝ Հայաստանի Հանրապետութեան: Գաղթականական, երկրաշարժի, Արցախեան ցաւերու եւ Հայաստանի Հանրապետութեան վերականգնման շարժումներէն անմասն չմնաց եւ գործնական մասնակցութիւն բերաւ նաեւ այս գաղութը, նիւթական օժանդակութիւններով կամ բարոյական թիկունքով:

Վերջապէս, 1991-ին, Ձեր նախորդի, Վեհափառ Տէր, հանգուցեալ Վազգէն Ա Կաթողիկոսի որոշումով կազմուեցաւ Գերմանիոյ առաջնորդական թեմը, նկատի ունենալով հետզհետէ բարձրացող հայութեան քանակը եւ զանոնք որպէս եկեղեցական համայնքներ՝ մեր աւանդութիւններու ուղղութեամբ կարգ ու կանոնի մէջ, մէկ տանիքի տակ հաւաքելով կազմակերպելու: Նոյն տարին էր, որ Կաթողիկէ Եկեղեցւոյ օգնութեամբ եւ համայնքի աչքի զարնող քանի մը նուիրեալներու ջանքերով, Քէօլնի

համայնքը ունեցաւ մշտական եկեղեցի եւ յարակից համալիրը. Գերմանիոյ մէջ երկրորդը՝ Կէօփինկէնի Ս. Խաչ եկեղեցիէն ետք: Շնորհիւ այս համալիրին, նոր Առաջնորդարանը հաստատուեցաւ այս շէնքին մէջ:

Թեմական կեանքի մէջ կազմակերպչական մեր առաջին մտահոգութիւնն էր գտնել համապատասխան անձերը, նիւթական հնարաւորութիւնները, լուծել կանոնագրային հարցերը եւ մանաւանդ նոր հոգեւորականներով օժտել թեմը: Փառք Աստուծոյ, մեր սիրելի ժողովուրդին, եթէ ոչ ամբողջական, բայց իր եկեղեցիով, իր աւանդութիւններով եւ իր բարոյական արժէքներու պահպանման մտահոգութիւնը ունեցող կարեւոր մէկ հատուածին գոհողութիւններով, կրցանք հետեւիլ մեր դրած նպատակներուն:

Մենք, ինքնագոհ եւ իր ինքնութեան անկեղծօրէն կապուած այս հատուածը բաղկացնողներով ենք հպարտ: Մենք անոնցմով ենք զորեղ եւ մենք այս անձերով պիտի կազմակերպենք ու վերականգնենք այս գաղութը: Այս թեմի կազմակերպման ու վերականգնման ճիգին ու կամքին իրենց բաժինը բերողներէն շատեր այստեղ են .այսօր եւ մենք անոնց բոլորին անխտիր մեր երախտիքը կը յայտնենք եւ կը հայցենք Աստուծմէ, որ վարձահատոյց ըլլայ անոնց ծառայութեան:

Իսկ անոնք, որոնք անդարձօրէն բաժնուած են մեզմէ եւ եղած են հիմնադիրները այս գաղութի, անոնց հոգիներուն համար ալ կ՚աղօթենք, որ Տէրը իրենց հանգստեան օթեւաններուն մէջ շնորհէ այս ազնիւ հոգիներուն խաղաղութիւն եւ ողորմածութիւն:

Այսօր այս թեմը աւելի քան երբեք գիտակից իր առաքելութեան, լծուած է շրջանի հայութեան վերականգնումի անյետաձգելի եւ հրամայական աշխատանքներուն: Պատիւ մեր սիրելի ժողովուրդին, պատիւ անձնուրաց ու նուիրեալ վարչական անդամներուն եւ ծառայողներուն, պատիւ մեր հոգեւորական դասուն:

Գերմանիոյ թեմը, Վեհափառ Տէր, իր այս իրագործումներով հպարտացող գաղութ մը չէ: Բայց աւելորդ համեստութիւններու ալ պէտք չունի: Այս գաղութը, իր առջեւ ցցուած հարցերու յաղթահարման համար ճիգ չխնայող եւ պայքարող, ինչպէս նաեւ ապագային նայող գաղութ մըն է: Միայն թէ կազմակերպումը խօսքով չրլլար սակայն: Ապագան միայն գեղեցիկ խօսքերով չի կերտուիր: Այլ անձնուրաց ու քրտնաջան, վաւերական ու մնայուն աշխատանքով: Ու գործը կը հաստատուի տեսիլք ու կամք ունեցող մարդոցմով: Մենք այսօր, ինչպէս ուրիշ գաղութներ, մարդու պակաս ունինք: Պատրաստուած, իր առաքելութեան գիտակից, հաւատացեալ, անկեղծ ու նուիրեալ հոգեւորականներու պէտք ունինք: Մանաւանդ հոգեւորականներու, որոնք ամէն բանէ առաջ իրենց ժողովուրդի եւ իրենց եկեղեցւոյ հարցերով տագնապին, իրենց եկեղեցին ու ժողովուրդը սիրեն, իրենց եկեղեցիի եւ ժողովուրդի ամէն մէկ հարցը իրենց անձերու հարցը նկատեն, երթան դուռէ դուռ, մխիթարեն, կրթեն եւ հոգեւոր սնունդ բաշխեն անոնց, քաջալերեն եւ խրախուսեն իրենց հօտը: Վեհափառ Տէր, հոգեւորական մարզին մէջ, մեր պակասը լրացնելու համար մեր կողմէ Ձեզի կատարուած դիմումները մինչեւ այսօր քաջալերեցէք, որուն համար ընդունեցէք մեր բոլորին սրտագին շնորհակալութիւններն ու երախտիքը: Կասկածէ վեր է, որ մօտ ապագային դարձեալ պիտի զարնենք Ձեր դուռը եւ վստահ ենք, որ ան պիտի բացուի, քանի որ պատգամը աւետարանական է, որ կ՚ըսէ. «Խնդրեցէք եւ պիտի տրուի ձեզի. թակեցէք եւ պիտի բացուի ձեզի» (ՂՈՒԿ. ԺԱ 9):

*Վեհափառ Տէր, մեր երրորդ ըսելիքը այն է, որ մեզ չմոռնաք: Բայց Դուք հիւր չէք. Վեհափառ. Դուք այս եւ մեր բոլոր հաստատութիւններուն, մեր բոլոր տուներուն տանտէրն էք: Վստահ ենք, որ մեզ պիտի չմոռնաք: Վստահ ենք, որ մենք Ձեր մտքին ու սրտին մէջ, թեկուզ եւ չնչին, սակայն մնայուն անկիւն մը ունինք: Բայց որպէսզի երբեմն-երբեմն Ձեր աչքերուն դիմաց ալ տեղ մը ունենանք, պիտի ուզէինք մեր պատուարժան թեմական խորհուրդի անունով Ձեզի նուէր մը փոխանցել: Այս նուէրը յուշանուէր մըն է միայն, որուն վրայ դրուած թուականը Ձեզի յիշեցնէ, թէ արդէն ժամանակն է Գերմանիոյ Ձեր զաւակները գարձեալ այցելելու: Որպէսզի յուշէ Ձեզ, որ հոս ալ կայ հայութիւն մը, թէեւ աղքատ իր լեզուով, իր գրպանով եւ քանակով, բայց ունի սիրտ, որ կը բաբախէ հաւատքով ու եկեղեցիով, հայութեամբ ու հայութեան համար: Կայ նաեւ ժողովուրդ մը, որ աչքի լոյսին պէս կապուած է իր Մայր Աթոռին՝ Սուրբ Էջմիածնին ու անոր գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետին: Ժողովուրդ մը, որ կը հասկնայ ու բարձր կը գնահատէ իր Հայրապետին արժէքը, անոր հաւատքը, հայրենասիրութիւնը, շինարարական ու մանաւանդ դաստիարակչական ընագաւառներուն մէջ իր երախտաշատ ներդրումները, ինչպէս նաեւ Հայրենիքին բերած պատիւը՝ իր. եկեղեցական ու քաղաքական շրջանակներու մէջ ունեցած միջազգային համբաւով:*

*Ահա, Վեհափառ Տէր, մեր դաղութի ժողովուրդին այս զգացումներուն ու գիտակցութեան, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին նկատմամբ իր երախտիքին որպէս թարգմանը, թեմական խորհուրդս Ձեզի կը ներկայացնէ «Բարեփոխումներու Մարտահրաւէր» տիտղոսով հրատարակած գիրքը, որուն պարունակութիւնը կը կազմեն՝ Ձեր կենսագրութիւնը՝ եկեղեցական ու գրական անդաստանին մէջ Ձեր հիմնական ներդրումներով, Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Գերմանիոյ թեմի հակիրճ պատմութիւնները:*

*Վեհափառ Տէր, հաճեցէք ընդունիլ այս յուշանուէրը ու նուէրին հետ մեր մաղթանքը, որ Աստուած Ձեզի երկար, առողջ կեանք պարգեւէ՝ ի ծառայութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին:*

*Մենք նախընտրեցինք մեր համեստ կարողութեամբ ներկայանալ Ձեզի եւ խուսափեցանք մեր մաղերը ներկելէ, որպէսզի ներկածին տակէն, քիչ ժամանակ յետոյ իր իսկական գոյնը յայտնուելով ամօթով չմնանք Ձեր առջեւ: Մենք կը խնդրենք Ձեր աղօթքն ու օրհնութիւնը միայն, որպէսզի աճի մեր անդաստանը եւ Ձեր յաջորդ այցելութեան առաջ բերքով կարենանք ներկայանալ Ձեզի:*

*Այժմ ոտքի կանգնած մեր բաժակը բարձրացնենք Հայոց Վեհափառ Հայրապետի արեւշատութեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան անսասանութեան ու յաւերժութեան համար:*

*Առիթը օգտագործելով կ՚ողջունենք նաեւ ՀՀ Գերմանիոյ դեսպան մեծայարգ Տիար Աշոտ Ոսկանեանը եւ Գերմանիոյ մէջ իր պաշտօնի սկիզբին յանուն մեր թեմի ժողովուրդին կը մաղթենք իրեն լիակատար յաջողութիւններ»:*

## ՊԱՐԳԵՎՆԵՐ ԳԵՐՄԱՆԱՀԱՅ ԱԶԳԱՆՎԵՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ

*Հավարտ Սրբազան Հոր խոսքի, ներկաների ծափողջույնների ներքո, Վեհափառ Հայրապետը յուրովի վերարժևորեց գերմանահայ համայնքի*

հայրենասեր ու ազգապահպան գործիչներին և ի գնահատություն ազգանվեր ու հայապահպան գործունեության, Նորին Սրբությունը «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրեց գերմանահայ համայնքի ներկայացուցիչներ տիար Հերման Օդաբաշյանին, դոկտոր Սարգիս Քեհյայանին և տիար Մուրադ Աքելուլին: Տիկին Մինու Նիքբային արժանացավ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանի:

Շքանշանների հանձնումից հետո, Ամենայն Հայոց Հայրապետը բարեջնորհ սարկավագներ Սրման Փիլիպոսյանին, Կարապիս Գարագավաֆին, Մերուժան Սետեֆյանին, ինչպես նաև տիարք Մինաս Բոյաջյանին, Վահե Գույումջյանին, Կարապետ Գոտաքին, Սերովբե Օտաբաշյանին, Գրիգոր Սաղլամերին, դոկտոր Նուրի Եաղճին և տիկնայք Հայտմարի Գալպճյանին, Անգին Պահարյանին, Արաքսի Գունտուրեճյանին շնորհեց «Օրհնության գրեր»՝ այս կերպ քաջալերելով ազգային, մշակութային բնագավառներում նրանց կատարած գործունեությունը գերմանահայ թեմում (տե՛ս էջ 138):

Սպա Վեհափառ Հայրապետը իր պատգամը տվեց հավաքված գերմանահայերին: Նորին Սրբությունը ներկաներին կոչ արեց առաջնորդվել վերանորոգության, ապագան սեփական ձեռքերով կերտելու գիտակցությամբ.

«...Կա՞ արդյոք այսօր մի ազգ, որ կարենա քրիստոնեությունը պետական կրոն ճանաչման իր 1700-ամյակը տոնել: Ո՛չ: Միմիայն մեր ազգն է, հայ ազգը: Սակայն ի՞նչ պատկերով պիտի ներկայանանք աշխարհին: Այն վիճակով, որ այսո՞ր է: Բավական է անցյալի փառքով հպարտանալ: Այսօր Հայաստան աշխարհի մեջ կան ավելի քան 43 քարուքանդ եկեղեցիներ, որոնց դռները բաց են դեռևս: Գյուղեր կան, որոնք քահանա չունին: Ունինք ճարտարապետական հարուստ արվեստ. եկեղեցիներ, պատմական հուշարձաններ: Սակայն քարի դարը չէ այսօր: Քարերու լեզուն պետք է մարդկային լեզվի փոխել: Մարդու պետք ունինք: Դյուրին գործ չէ՝ 70 տարիներու հակաստվածության կործանիչ մտածողությունը բարեփոխել: Վերականգնելու պահն է այսօր: Եթե մարդը ըլլա, առիթն ալ պիտի ըլլա: Եթե ինձի առիթը չնորհվեր մեր եկեղեցու ժամագիրքը վերախմբագրել, ժամագիրքի սկիզբի խոստովանության բաժնին մեջ, ուր կհիշվին յոթ մահացու ծանր մեղքերը, որ կըսվի. «Այլեւ մեղայ եօթնիցս յանցանօք՝ մահացու մեղօք. հպարտութեամբ եւ մասամբք նորին, նախանձու եւ մասամբք նորին...», պիտի ավելացնեի ութերորդ մահացու մեղք մը. ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: «Անտարբերութեամբ եւ մասամբք նորին»: Դատապարտելի և մահացու մեղք է Հայ եկեղեցվո, միութենական կազմակերպությանց, Մայր Հայրենիքի ծավալած գործունեությանց նկատմամբ անտարբեր ըլլալը: Մենք Աստուծո մեզի տվածին հաշիվը չէ, որ տալու ենք, այլ անոր, որ ի՞նչ ավելցուցինք մենք մեր սեփական աշխատանքով: Փառք Աստուծո, որ Հայոց երկիրը, ժողովուրդը և եկեղեցին 1915-ի ցեղասպանությենեն ետքը, գարուս վերջավորության վերագտան իրենց ազատությունն ու անկախությունը իրենց Մայր Հայրենիքին՝ Հայաստանի մեջ: Մենք կուգանք ձեզի ոչ այն երկիրեն, ժողովուրդեն և եկեղեցիեն, որ միայն տառապանք ու ջարդ է տեսած, այլ այսօր կը վայելէ հարության, վերածնդյան նոր շրջանը: Հայաստան աշխարհն այսօր ինքնակերտումի երկիր է և ոչ թե ողորմության երկիր»:

*Շարունակելով իր խոսքը՝ Վեհափառ Հայրապետը շեշտեց նաև արվեստի կարևորությունը, որն այսօր, դժբախտաբար, ժամանակակից անկումային անվանվող արվեստին տրված հետաքրքրության պատճառով, անկում է ապրում:*

*Հավարտ պատգամի, Նորին Սուրբ Օծությունը մեծ ուրախություն պարգևեց ներկաներին իր անակնկալ բարի լուրով: Գարեգին Ա Կաթողիկոսը չմոռացավ գնահատել նաև վերջին վեց տարիներին, Առաջնորդարանի կազմավորմամբ, իր ազգանվեր, եկեղեցաշեն ու անձնուրաց ծառայությունը բերող Գերմանիայի Հայոց թեմի բարեջան առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգլյանին: Ընդառաջելով Թեմական խորհրդի առաջարկին՝ Նորին Սրբությունը հայտնեց, որ սույն տարվա Ծաղկազարդին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդին շնորհելու է Արքության պատիվ:*

*Վեհափառ Հայրապետին ուղղած իր բարեողջույնի խոսքում Գերմանիայում Հայաստանի արտակարգ և լիակոր դեսպան Աշոտ Ոսկանյանը հակիրճ տեղեկություններ տվեց Հայաստանի ներկա վիճակի մասին և գոհունակությամբ հայտնեց, որ թեև այսօր Հայաստանում Եկեղեցին ու պետությունը գործում են միմյանցից անջատ, սակայն ծառայում են ժողովրդին նույն ուղղվածությամբ ու ներդաշնակությամբ, նույն նպատակի համար:*

*Ճաշկերույթին, ի պատիվ Նորին Սրբության, կազմակերպվել էր նաև գեղարվեստական գեղեցիկ հայտագիր՝ Քյոլնի «Կոմիտաս» և «Միլվա Կապուտիկյան» մանկանց և մեծահասակների միացյալ երգչախմբերի մասնակցությամբ:*

*Օրվա հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌԻՏԱ ԶՅՈՒՍՄՈՒՏԻ ՀԵՏ

*Հունվարի 26-ին, ժամը 14.00-ին, Նորին Սուրբ Օծությանն ընդունեց Գերմանիայի Խորհրդարանի նախագահ Ռիտա Զյուսմուտը:*

*Երկուստեք ծավալված մտերմիկ ու ջերմ զրույցի ընթացքում տիկին Զյուսմուտը բարձր գնահատեց Վեհափառ Հայրապետի անգնահատելի ավանդը եկեղեցիների համեղբայրության ասպարեզում, ինչպես նաև Հայ Առաքելական Եկեղեցու դերը սեփական ժողովրդի հոգևոր և ազգային ինքնության պահպանության գործում՝ արտահայտելով իր մտահոգությունը՝ Գերմանիայում հավատքի թուլացման և հոգևոր բնագավառում նկատվող տագնապահարույց մի շարք խնդիրների առնչությամբ:*

*Իր հերթին Նորին Սրբությունը նախ շնորհակալության խոսք ուղղեց Գերմանիայի հյուրընկալ ժողովրդին՝ Հայ Եկեղեցու նկատմամբ որդեգրած բարյացակամ վերաբերմունքի համար՝ ի մասնավորի նշելով, որ ինքը ևս իր հոգևոր ծառայության տարիներին սերտ հարաբերություններ է ունեցել գերմանացի պետական և եկեղեցական աչքի ընկած գործիչների հետ, այդ թվում՝ Գերմանիայի նախկին նախագահ Ռիչարդ Ֆոն Վայցսեգերի և էլի ուրիշ շատ-շատերի:*

*Ապա Հայոց Հայրապետը ներկայացրեց Հայաստանի Հանրապե-*

*ության ներկա իրավիճակը, տնտեսական կացությունը, Ղարաբաղյան հիմնախնդիրը՝ վերջինիս խաղաղ լուծման ճանապարհին կարևորելով երկխոսության անհրաժեշտությունը:*

*Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԵԼՄՈՒՏ ՔՈԼԻ ՀԵՏ

*Նույն օրը, ժամը 16.00-ին, Նորին Սուրբ Օծությանն ընդունեց Գերմանիայի վարչապետ Հելմուտ Քոլը:*

*Ավելի քան մեկ ժամ տևած հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը, հանուն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի, շնորհակալություն հայտնեց Գերմանիայի պետությանը և ժողովրդին՝ հատկապես ահեղ երկրաշարժից հետո Հայաստանին ցուցաբերած օժանդակության ու կորակցության համար:*

*Գարեգին Ա Կաթողիկոսը նշեց, որ Գերմանիան առաջին եվրոպական պետություններից մեկն էր, որ ունեցավ իր դեսպանությունը քաղաքամայր Երևանում: Խոսվեց նաև Հայաստանյայց Եկեղեցու վերակարգոնքի մասին: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ Գերմանիայի թե՛ Կաթոլիկ և թե՛ Ավետարանական Եկեղեցիներն իրենց աջակցությունը կբերեն վերականգնման կենսական ուղին բռնած Հայոց Եկեղեցուն՝ այս առիթով ներկայացնելով Հայաստանի հոգևոր, տնտեսական, ընկերային և մշակութային իրավիճակը, կարևորելով Եկեղեցիների փոխհարաբերությունների սերտացումը, ինչպես նաև պետական իշխանությունների հետ երկխոսության անհրաժեշտությունը: Առ այդ Նորին Սրբությունն առաջարկեց նման մոտեցում նաև Գերմանիայի պետության կողմից՝ մանավանդ քաղաքական հարցերին վերաբերվող:*

*Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին և տարածաշրջանի քաղաքական իրավիճակին՝ Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ թե՛ ինքը և թե՛ Հայաստանի իշխանությունները հավատում են խաղաղ ճանապարհով խնդրի լուծմանը:*

*Իր հերթին պրն. Հելմուտ Քոլը շեշտեց Գերմանիայի և Հայաստանի հարաբերությունների կարգացման կարևորությունը և հույս հայտնեց, որ առաջիկայում դրանք ավելի պիտի սերտանան: Միևնույն ժամանակ բարձր գնահատեց Վեհափառ Հայրապետի հայտնած դիտարկումները հոգևոր կյանքի աշխուժացման, միջեկեղեցական հարաբերությունների կարգացման, ինչպես նաև Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման ուղիների մասին: Վերջում պրն. Քոլը իր գնահատությունը հայտնեց գերմանահայության բերած նպաստի և օրինավոր ու պատվավոր քաղաքացիներ լինելու վերաբերյալ՝ համարելով այն որպես օրինակելի և կայմակերպված համայնք:*

*Վարչապետ Հելմուտ Քոլի հետ հանդիպմանը ներկա էին նաև Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը, Գերմանիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիակոր դեսպան Աշոտ Ոսկանյանը, թարգմանիչ տիար Բաֆֆի Քանդյանը:*

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԲՈՆՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Օրվա երկրորդ կեսին, երեկոյան ժամը 18.00-ին, Գարեգին Ս Վեհափառ Հայրապետն իր շքախմբով առաջնորդվեց դեպի Բոննի Ավետարանական Սուրբ Խաչ եկեղեցի:*

*Այստեղ ջերմ սիրով Նորին Սրբությանը դիմավորեցին Ավետարանական Եկեղեցու Խորհրդի նախագահ Մանֆրեդ Քոկը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, մեծաթիվ հավատացյալներ:*

*Բարեողջույնից հետո եկեղեցում տեղի ունեցավ միջեկեղեցական աղոթք՝ քրիստոնյա բոլոր դավանանքների ներկայացուցիչների մասնակցությամբ:*

*Հավարտ հավաքական աղոթքի, Նորին Սրբությանը ողջույնի խոսք հղեց Ավետարանական Եկեղեցու Խորհրդի նախագահը՝ իր խոսքում քաջալերելով եկեղեցական համայնքների և քրիստոնեական նախաձեռնությունների միջոցով ապաստանյալներին բնակություն տալու հանգամանքը: Մանֆրեդ Քոկը պաշտպանեց նաև այն տեսակետը, թե հալածված մարդկանց օգնելը անհրաժեշտություն է, որպեսզի այս կերպ հնարավորություն տրվի նրանց՝ ապրել իրենց կրոնական կյանքը: Խորհրդի նախագահը հիշեց դեպքեր, երբ հայերը ապաստան են գտել Գերմանիայի Ավետարանական եկեղեցական համայնքներում:*

*Շարունակելով մանրամասնել իր ասելիքը, Մանֆրեդ Քոկը շեշտեց, որ Հայ Եկեղեցին իր պատմության ընթացքում ճաշակել է հալածանքների բոլոր տեսակները: Այս հալածանքների ընթացքում եղել են հայեր, ովքեր ապաստանել են Գերմանիայում: Ըստ Խորհրդի նախագահի, Գերմանիայի Ավետարանական և Կաթոլիկ Եկեղեցիներն ամեն ինչ անում են, որպեսզի Գերմանիայի Սահմանադրության մեջ ապաստանյալների համար նախատեսված կանոնները չարժեզրկվեն և չփոխարինվեն իրավական այլ տնօրինումներով, ինչը պետական մարմինների կողմից երբեք հավանության չի արժանանում:*

*Մանֆրեդ Քոկը հայտնեց նաև այն տեսակետը, թե Եկեղեցու առաջնային պարտականությունը պետք է լինի պաշտպանել Կիրակի օրերի սրբությունը. «Եվրոպայի բոլոր Եկեղեցիները պետք է ամեն ջանք գործադրեն, որպեսզի Կիրակի օրերը չփոխարինվեն տնտեսական առավելություններով և աշխատանքային օրերի վերածելու ցանկությամբ»:*

*Ապա ներկա հավատացյալներին իր պատգամը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը.*

*«Սիրեցյալ եղբայրներ և քույրեր ի Քրիստոս.*

*Զգիտեմ, դուք ինչպես եք զգում այս պահին, բայց ես զգում եմ, որ առաջին այս հովվապետական այցելության ընթացքում Գերմանիո մեր թեմին, այսօրվա մեր հանդիպումը այս եկեղեցու մեջ, էկումենական այս աղոթքը հատուկ, մասնավոր տեղ ունի այցելությանս մեջ:*

*Առաջին հերթին պարտք եմ զգում իմ խորին շնորհակալությունները հայտնել ՔԱՏԷ-ին, որ այս առիթը տվեց, որպեսզի իմ այցելությունը էկումենական տարածք ստանա և ավելի հարստանա: Կարծես մի բան պակաս եմ զգում իմ մեջ, եթե երբեք իմ հայ ժողովրդին եմ այցելում մի երկրում և այդ երկրի մյուս քրիստոնյաների հետ իմ՝ ի Քրիստոս միությունը*

չապրեմ, որովհետև ես այնպես եմ ըմբռնում էկումենիզմը, թե պարտականություն չէ, այլ կոչում: Ես կուզեի ասել նաև իմ գերմանացի քույրերին և եղբայրներին, որ Հայ անունը, Հայաստան անունը ընդհանրապես նույնացված է ցավի, տառապանքի, հալածանքի, չարդի և ցեղասպանության հետ: Ես ձեզ մոտ եմ գալիս նույն Հայաստանից, նույն հայ ժողովրդից, բայց ուրիշ կյանքից: Այսօր Հայաստանը մահվան հովիտ չէ: Ես գալիս եմ մի երկրից, որ վերանորոգության, վերականգնման մեջ է գտնվում: Ես զավակ եմ ծնողների, որոնք չարդերից մազապուրծ են եղել: Եվ երբ ես յոթ տարեկան էի Սիբիայի Քեսաբ գյուղում, հայրիկս աշխատում էր Mission Orient կոչվող գերմանական որբանոցում՝ Յոհաննես Լեփսիուսի կողմից հաստատված: Այսօր այս երկրում գերմանացի իմ եղբայրների և քույրերի առջև շնորհակալություն եմ հայտնում և փառք տալիս Աստուծո, որ մեր նեղ և դժվար օրերին գերմանական եկեղեցիները և ժողովուրդը զորավիգ կանգնեցին վերականգնման գործում:

Հայ եկեղեցին ինձ համար մեկնաբանությունն է Ավետարանի: 1700 տարիներ Ավետարանը կյանքով թարգմանեցինք մեր կյանքի մեջ: Եվ մեկ ոան փաստվեց մեկ անգամ ևս, ինչպես ուրիշ քրիստոնյա ժողովուրդների, նույնպես և հայ ժողովրդի կյանքում, թե հավատքը անհաղթահարելի է: Նեղությունը, տառապանքը, խաչը՝ վերջը չեն կյանքի, այլ Հարությունը, որ գալիս է պակելու տառապանքը և իմաստավորելու այն:

Ես ցանկանում եմ խոսքիս երկրորդ մասում ասել, թե հարության կյանքն է ծագել Հայաստանի և հայ ժողովրդի վրա: Մենք ապրում ենք էկումենական դարում և պարտավոր ենք ապրել էկումենական ոգով, որովհետև միմյանց հավատքը կիսելով, մենք կզորացնենք Քրիստոսի ներկայությունը Տիեզերքի մեջ:

Ինչպես իմ սիրեցյալ եղբայր Քոկը ասաց, թե Քրիստոս ասում է. «Սավուղ, Սավուղ ինչո՞ւ ես հալածում ինձ» (Գործք. Թ 4): Մենք՝ քրիստոնյաներս ենք հալածում Տիրոջը մեր անմիաբանությամբ ու պառակտումներով: «Ինչո՞ւ ես հալածում ինձ»,- ասում է Հիսուս: Մենք շատ ենք խոսում խաչի մասին, բայց չենք ապրում և չենք զգում խաչելությունը: Քրիստոնեությունը ասես մեզ համար սովորական հագուստ է դարձել: Բայց Ե դարի հայ աստվածաբաններից մեկը ասել է. «Քրիստոնեական հավատքը ոչ թե հագուստ է իմ վրա, այլ կաշվիս և մորթուս գույնն է»: Մոտենում ենք 2000-ամյակին: Երկու տարի հետո տոնելու ենք Քրիստոսի ծննդյան 2000-րդ ամյակը: Ես ուզում եմ, որ էկումենիզմը դառնա այնպիսի մղում, որ մենք կարողանանք իրար մեջ տեսնել մեկմեկու և գտնենք Քրիստոսին բոլորիս մեջ:

Եվ իմ խոսքն ուզում եմ ավարտել այն հատվածի ընթերցմամբ, որը մենք՝ հայերս, ամեն անգամ Սուրբ Պատարագ մատուցելիս երգում ենք: Եկեք այն արտասանենք միասին գերմաներեն. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Եվ եկեք միմյանց ողջունենք այդ սիրով:

«Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթայք ի խաղաղութիւն եւ Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. Ամէն»:

***

Սուրբ Խաչ եկեղեցում կատարված հանդեսից հետո, ի պատիվ Նորին Սուրբ Օծության, Ավետարանական Եկեղեցու Խորհրդի նախագահ Փրեցես Մանֆրեդ Քոկը կապվակերպեց սիրո ճաշ՝ ագապե,

*որին ներկա էին քույր Եկեղեցիների մեծաթիվ հավատացյալներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, դիվանագիտական այրեր, պաշտոնատար անձինք:*

*Սիրո ճաշն անցավ ջերմ մթնոլորտում, հնչեցին ջերմագին խոսքեր, որոնցում շեշտվում էր անհրաժեշտությունը քույր Եկեղեցիների առջև ծառացած խնդիրները լուծել էկումենիկ հարաբերությունների շրջանակներում, առավել խորացնել փոխադարձ համագործակցությունը և բարեկամական կապերը:*

## ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲՈՒՐԳ, ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Հունվարի 27-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանի ընկերակցությամբ, մեկնեց Համբուրգ՝ հանդիպելու «Ավետարանական Եկեղեցու հոգևոր առաքելություն» կազմակերպության /Evangelisches Missionswerk/ ներկայացուցիչների, տեղի փոքրաթիվ հայ համայնքի հետ:*

*Համբուրգի օդանավակայանում Նորին Սրբությանը և սրբազան հորը դիմավորեցին Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ և Լիոնի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Հյուսիսային Գերմանիո հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսահակյանը, ինչպես նաև տեղի համայնքի մի խումբ հավատացյալներ:*

*Օդանավակայանից Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջնորդեցին դեպի հիմնարկի կենտրոնատեղի, ուր Նորին Սրբությանն ընդունեցին մեծ շուքով ու ջերմությամբ: Դիմավորողների թվում էին նաև տեղի հայ համայնքի շուրջ 50 անդամներ և հիմնարկի ողջ պաշտոնեությունը:*

*Բարի գալուստ մաղթելով Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, տեղի եպիսկոպոսուհի Մարիա Եփսենը կարևորեց քույր Եկեղեցիների բարեկամությունը, էկումենիկ հարաբերությունների խորացումը և այդ բնագավառում Նորին Սուրբ Օծության կատարած մեծ դերը: Եպիսկոպոսուհին ուրախությամբ նշեց քրիստոնյա բոլոր ժողովուրդների միակամությունը՝ դեպի Տերը տանող դժվարին, սակայն քաղցր ճանապարհին:*

*Այնուհետև ներկաներին իր ողջույնի խոսքը հղեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը.*

*«Սիրելյալ եղբայրներ և քույրեր,*

*Մինչ ես կպատասխանեմ քրիստոնեական սիրո և բարեկամության ձեր պերճախոս ելույթներին, կցանկանայի մեկ բոպե ոտքի ելնել և սկսել խոսքս աղոթքով՝ հղված առ Աստված:*

*Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու -ես իմ երախտագիտությունն եմ հղում Քեզ, ով Տեր, միմյանց հետ հանդիպելու այս առիթը մեզ շնորհելու, Քո հավատքի, հույսի և սիրո հանդեպ մեր միջև եղած միասնության, բարեկամության, եղբայրության և համերաշխության կապերը վերանորո-*

գելու համար: Աղաչում եմ Քեզ, ով Տեր, թե այս երկրում՝ Գերմանիայում և թե իմ երկրում՝ Հայաստանում, տեղի ունեցող այն բոլոր փոփոխությունների ընթացքում անխափան պահել մեր հոգու հավատարմությունը հանդեպ Քո խոսքին և Քո առաքելությանը և Քո Եկեղեցուն և համայն մարդկությանը՝ առանց խտրության և խտրականության: Մենք խոնարհաբար խոստովանում ենք մեր թերություններն ու թերացումները: Աղաչում եմ Քեզ, ով Տեր, Մեր Երկնավոր Հայր, վերանորոգել մեր քրիստոնեական ոգին, որը մեզ այնքան հաճախ հիշեցնում է մեզ հավատարիմ մնալ մեր ինքնությանը, անհատականությանը:

Ով Տեր, Դու իջար երկնքից, մերկացրեցիր Քո էությունը երկնային փառքից և նույնացրեցիր Քո անձը մեզ՝ մարդկային էակներիս հետ, մեր մեղքերի հետ: Վերանորոգեցիր մեր մեջ ծառայության ոգին, քանզի Քո ծառայության մեջ է Քո խոսքի իրագործումը, քանզի Դու դարձար ծառա՝ դարձնելու մեզ Աստծու սպասավորներ մարդկությանը: Ամեն:

Ես իրոք հոգեպես խիստ հուզված եմ՝ կյանքումս ևս մեկ անգամ այն մարդկանց միջև գտնվելու առիթով, ում ես ճանաչել եմ երկար տարիներ՝ կապված «Ավետարանական Եկեղեցու հոգևոր առաքելություն» կազմակերպության գործունեության և ծառայության հետ հանուն Աստծու՝ մեր Երկնավոր Հոր և հանուն Միածին Որդու և հանուն Սուրբ Հոգու: Ես այսօր ձեզ մոտ եմ եկել որպես այն նույն անձնավորությունը, ինչպես որ եկա 12 տարի առաջ, սակայն ուսերիս ավելի ծանր պարտականություն վերցրած: Դա այն բոլոր փոփոխություններն են, որ տեղի են ունեցել մեր երկրում և հենց մեզ հետ:

Խոսեցինք փոփոխությունների մասին, և դա ինձ հիշեցրեց Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքը՝ ըստ Սբ. Հովհաննեսի Ավետարանի. «Հովը ուր ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես որտեղից է դալիս կամ ուր է գնում. այսպես է և ամեն ոք, որ Հոգուց է ծնված» (ՀՈՎՀ. Գ 7-8): Այդ Հովը Սուրբ Հոգին է: Ես ծնվել եմ մի փոքրիկ գյուղում, Հյուսիսային Սիրիայում, ապա ուսում առել Լիբանանում: Մասնակցել եմ համաշխարհային էկումենական շարժմանը, սակայն երբեք չեմ մտածել, թե օրերից մի օր կտեսնեմ Հայաստանը, որն իմ հայրը չտեսավ, հորս սերնդակիցները չտեսան, սակայն ավանդեցին մեզ մեր երկիրը տեսնելու, ազատության աստվածատուր շնորհը վայելելու երազանքը: Դուք չգիտեք, թե որքան վշտացնող զգացում է տեսնել, որ քո երկիրը, քո ժողովուրդը չի որոշում՝ ինչ անել և ինչպես ապրել, հպատակեցված է օտարի տիրապետությանը: Դուք նշեցիք, որ այս դարը խավարով սկսվեց մեր հայ ազգի պատմության մեջ, սկսվեց արյամբ, սակայն ավարտվում է վերաշինության, վերանորոգման, վերածննդի, հարության պայծառ լույսով: Այս դարի սկզբին հայ ժողովուրդը կորցրեց ավելի քան մեկուկես միլիոն զավակներ, երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվեցին 300 000 հայեր, որոնք կռվում էին Խորհրդային Միության կողմից, քանի որ Հայաստանն այն ժամանակ Խորհրդային Միության մասն էր կազմում:

Այժմ, դարավերջին, քրիստոնեության պատմության երկրորդ հազարամյակի ավարտի չեմին տեսնել, որ մեր երկիրը դալիս է մի նոր իրավիճակի, ոչ միայն բերկրանքի առիթ է, այլ նաև ապագայի հանդեպ պատասխանատվության, պարտականության մարտահրավեր: Ես ինչ-որ տեղ կարդացել եմ հետևյալ գեղեցիկ ասույթը. «Ազատությունն առանց պատասխանատվության ազատություն չէ»: Այսօր այս 30000 քառ. կմ

*հողը, որ 70 տարի Խորհրդային օտարերկրյա բռնապետական ամբողջատիրական ռեժիմի տակ էր գտնվում, այժմ դարձել է մեր՝ հայերիս պատասխանատվությունը, և իրոք, մեզ վրա է դրված այս նոր պայմանների ներքո այս նոր երկրում մեր կյանքը կարգավորելու ծանր բեռը համապատասխան քրիստոնեական ոգուն, որը կերտել, ձևավորել է մեր անհատականությունն իբրև հայ ազգ: Մեր եկեղեցին Հայաստանում եղած բազում եկեղեցիներից մեկը չէ, մեր եկեղեցին մեր երկրի եկեղեցին է: Մենք ասում ենք՝ Ազգային եկեղեցի, այսինքն՝ հայ ազգը ունեցել, պահպանել է քրիստոնեական հավատքն իր սրտում: Ինչ քար էլ որ շրջես, վրան խաչ է պատկերված, ինչ ձեռագիր էլ որ բաց անես, առկա է քրիստոնեական հավատքի վկայությունը, ապացույցը, և ինչպես մեր նախագահն ասաց, մենք չենք կարող լինել ազգ առանց եկեղեցու, որովհետև մենք չենք էլ եղել ազգ առանց եկեղեցու: Ուստի, բարեկամներ, այսօր եկել եմ ձեզ մոտ կերպարանափոխված, վերաշինված երկրի, ազգի, եկեղեցու պատկերով: Դուք խոսեցիք միավորված Գերմանիայի մասին: Մենք բերկրանք ենք ապրում, որ այդ բաժանիչ պատնեշը՝ Բեռլինի պատը խորտակվեց: Ազգը չի կարող բաժանվել, տարանջատվել հակառակ իր կամքի, և հենց դա էլ տեղի ունեցավ մեզ հետ: Հայաստանում ոչ թե քարե, այլ երկաթյա վարագույր կար, և ինչպես մի անգամ ընթերցեցի Ֆրանսիական «Լը Մոնդ» ("Le Monde") թերթում, այդ երկաթյա վարագույրը դարձավ ապակյա, թափանցիկ: Ահա թե իմ կարծիքով ինչ տեղի ունեցավ իմ երկրում, երբ Հայաստանը ստրկացված էր, օտարի տիրապետության տակ և փակված էր սփյուռքահայության համար: Այսօր այդ պատը, լինի մետաղից թե բետոնից, խորտակվել է, սակայն մեր խնդիրը չէ լոկ հրճվել պատի փլուզմամբ, այլ՝ կամուրջներ կառուցելը: Պատի փլուզումը ոչ մի նշանակություն չի ունենա առանց նոր կամուրջներ կառուցելու: Իմ կարծիքով, իմ այս այցելությունն օժանդակում է Հայաստանի եկեղեցու և Գերմանիայի եկեղեցիների, լինեն դրանք Կաթոլիկ, Ավետարանական թե Ուղղափառ, միջև այդպիսի կամուրջներ հաստատելուն:*

*Դուք խոսեցիք այն օրերի մասին, երբ մեր ժողովուրդը ենթարկվում էր կոտորածի: Հայերիս մոտ դեռևս որոշակիորեն կա այն զգացումը, թե փորձության ժամին մենք մենակ մնացինք: Եվ ինչպես ես ասացի Ֆրանսիայի նախագահին այս տարվա հունվարին, ինչպես նաև անցյալ տարվա փետրվարին, իսկ երեկ էլ՝ Գերմանիայի վարչապետին՝ Հելմուտ Քոլին, եկեք ոչ թե միայն հետ նայենք պատմությանը, այլև նայենք ներկային և ներկայի միջով՝ ապագային: Այո, այդ ժամանակ մենք մենակ մնացինք, սակայն այժմ դարի սկիզբը չէ: Ըստ իս, այսօր եկեղեցիների կյանքում էկումենիկ շարժումը քրիստոնեական ոգու մղիչ ուժն է: Ոչ թե լոկ հավատարմություն սեփական ավանդույթին, այլ՝ հավատարմություն սեփական ավանդույթին՝ դիտարկելով այն որպես քրիստոնյա աշխարհի անբաժան մի մաս: Եվ էկումենիկ շարժման միջոցով մենք ձգտում ենք նոր կամուրջներ ստեղծել, նոր կամուրջներ կառուցել: Այսօր անձամբ ես զգում եմ, որ այստեղ եմ գտնվում սեփական ցանկությամբ: Ավելի վաղ, երբ Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի մեր թեմի հոգևոր առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Բեգէյանից ստացա այցելությանս ծրագիրը, նամակ գրեցի նրան՝ պնդելով և խնդրելով, որ նա կապ հաստատի «Ավետարանական եկեղեցու հոգևոր առաջնություն» կազմակերպության հետ, որովհետև ես չէի կարողանա աղոթել Գերմանիայում առանց*

տեղեկանալու կազմակերպության աշխատանքներին, քանզի այդ հաստատությունն ինձ համար այն պատուհանն էր, որից ես ուսումնասիրում էի Գերմանիայի Եկեղեցիների փորձը: Իհարկե, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում ես շատ ընկերներ էի ունեցել, սակայն իրականում իմ գործունեությունը Գերմանիայի հետ սկսվեց «Ավետարանական Եկեղեցու հոգևոր առաքելություն» կազմակերպության հետ գործունեությամբ: Ահա թե ինչու այսօր այստեղ մարդիկ կան, որոնք ինձ հիշում են Լիբանանում գտնվելուս և աշխատելուս տարիներից:

Դուք նշեցիք, որ մենք հինավուրց եկեղեցի ենք, և հիշատակեցիք մեր եկեղեցու 1700-ամյա հոբելյանը: Այո, մենք հինավուրց եկեղեցի ենք, սակայն կարծում եմ, որ Արևելյան եկեղեցիների պատկերացումները դեռևս պահպանվում են այդ եկեղեցիների՝ հնացած, արխայիկ լինելու իմաստով: Ահա դա է, ինչին ես փորձում եմ ընդդիմանալ: Այո, մեր եկեղեցիները հինավուրց են: Հայաստանում ուր էլ որ գնաս, կտեսնես եկեղեցի՝ կառուցված 4-րդ դարում, մեկ այլ եկեղեցի՝ կառուցված 7-րդ դարում, մեկ ուրիշը՝ 9-րդ, 10-րդ, կամ էլ 13-րդ դարերում: Դա ճշմարիտ է: Սակայն մարդիկ ապրող, կենդանի մարդիկ են, այլ ոչ թե մարդիկ, որոնք միայն հիշում են անցյալի բոլոր ուրվականներին, այլ դիմագրավում են մարտահրավերներ: 70 տարիների մարտնչող աթեիզմը փորձել է արմատախիլ անել եկեղեցու ներկայությունը մարդկանց հասարակական կյանքի կառույցներից: Ի՞նչ կլիներ Գերմանիայի հետ, եթե 70 տարի շարունակ բոլոր եկեղեցիները փակված լինեին, չգործեր հոգևոր ճեմարանը, չգործեին աստվածաբանական ֆակուլտետները, եթե Հիսուսի անունը 70 տարի չհիշատակվեր մամուլում, եթե բոլոր հոգևորականներին աքսորեին, կամ էլ բռնի կերպով արտաքսեին, կամ էլ ստիպեին թողնել քահանայական ծառայությունը: Ի՞նչ դուրս կգար դրանից, ինչի՞ կվերածվեր այդ ժամանակվա սերունդը: Այժմ, երբ այցելում եմ Հայաստանի թեմերը, երբ որևէ նոր եկեղեցու հիմնաքարերն ենք դնում, կամ էլ երբ վերանորոգում ենք որևէ հինավուրց եկեղեցի և մարդիկ ներկա են գտնվում արարողությանը, ես դիմում եմ մարդկանց և ասում. «Իսկ այժմ եկեք միասին արտասանենք Տերունական աղոթքը», և երբ կատարում եմ խաչի նշանը, ոչ ոք չի շարժում ձեռքը: Մարդիկ մոռացել են և չեն արտասանում Տերունական աղոթքի խոսքերը: Երեկ՝ կիրակի օրը, երբ ես Քյոլնի նորաձև եկեղեցում մեր հայ ժողովրդի հետ էի, դիմեցի մարդկանց և առաջարկեցի միասին արտասանել Տերունական աղոթքը, բոլոր մարդիկ երգում էին, որովհետև նրանք դաստիարակվել են քրիստոնեական հավատքի ոգով: Մինչդեռ Հայաստանում 70 տարի շարունակ անհնարին էր ծավալել որևէ տեսակի առաքելական աշխատանք եկեղեցու կյանքում: Եթե ցանկանայի մի համառոտ ձևակերպում անել այստեղ, ապա Խորհրդային Միությունում եկեղեցուն թույլատրվում էր գոյատևել որպես ներքին ուղղվածություն ունեցող, ինքնամփոփ, ինքնապարփակ Եկեղեցի, միայն թե՝ կառավարության զգոն, հսկող հայացքի ներքո, հայտարարելու աշխարհին, որ իրենք էլ են հարգում խղճի ազատությունը: Զկար Առաքելական եկեղեցի, եկեղեցին բացակայում էր մարդկանց առօրյա կյանքում:

Հիշում եմ, երբ ես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն էի, իմ ավագ եղբոր և իմ նախորդի՝ այժմ արդեն երջանկահիշատակ Վազգեն Ա-ի հրավերով այցելելու էի Հայաստան, մի նամակ գրեցի նրան և հայտնեցի, որ Հայաստանում գտնվելուս 8 օրերի ընթացքում կցանկանայի գնալ և այցելել

7-րդ դարի մի հինավուրց վանք: Ժամանակին այդ վանքն ունեցել էր 500 միաբաններ, և այդ հանգամանքն ինձ համար պատմական և աստվածաբանական ներշնչման և ներըմբռնման աղբյուր էր հանդիսացել: Երբ ես Բեյրութից ժամանեցի Հայաստան, Սբ. Էջմիածին և հանդիպեցի երջանկահիշատակ Վազգեն Ա-ին, նա ասաց. «Ահա 33 տարի է, ինչ ես Ամենայն Հայոց Կաթողիկոսն եմ, սակայն չեմ տեսել Հայաստանի այդ վանքը, չեմ այցելել իմ երկրի հարավային մասը: Այժմ դու կմեկնես որպես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս, և ես էլ, որ դեռ չեմ տեսել այդ վանքը, որոշել եմ մեկնել քեզ հետ»: Եվ երբ նա բարձրացավ ավերված վիճակում գտնվող այդ հինավուրց վանքի խորանին, ասաց. «Իմ սիրեցյալ ժողովուրդ, առաջին անգամն է, որ ես տեսնում եմ ձեզ, դուք էլ՝ ինձ: Ահա արդեն 33 տարի է, ինչ ես ձեր Հոգևոր Հայրն եմ: Զգիտեմ արդյո՞ք ճիշտ եմ եղել, թե սխալ, թող Աստված դատավոր լինի, սակայն գիտեմ, որ եթե նախկինում երբևէ գայի, ապա ինձ թույլ չէին տա տեսնել ձեզ: Ես եկած կլինեի որպես զբոսաշրջիկ»:

Լինել եկեղեցու առաջնորդ, որն այցելում է իր եկեղեցին որպես զբոսաշրջիկ: Ինչպիսի՜ ծաղրանք, հեգնանք է այն իրավիճակը, որ ես փորձում եմ նկարագրել:

Այսօր այլևս չեմ ուզում խոսել անցյալի մասին: Հայաստանում ես հաճախ եմ դիմում այն մարդկանց, ովքեր ասում են. «Մի մեղադրեք մեզ: Դուք չէք պատկերացնում, թե ինչպես ենք մենք ապրել 70 տարի այդ աթեիստական իրավիճակի ներքո»: Ես ասում եմ. «Մի խոսեք շարունակ այդ 70 տարվա մասին: Հիմա նայեք ձեր ներկային և ապագային, որովհետև անցյալը պարապվելը նշանակություն չունի: Կա մի հայտնի ասույթ, որը ես համոզված եմ, որ բոլորդ էլ գիտեք. «Ավելի լավ է մի մոմ վառել, քան թե նզովել խավարը»: Ահա թե ինչ պետք է դուք անեք: Ավելի լավ է վառենք մոմը, քան թե խոսենք անցյալ դժբախտությունների մասին, որոնց բովով անցել ենք:

Մեկ այլ թեմա, որի շուրջ ես կուզենայի այսօր խոսել, հայի պատկերն է:

Բարեկամներ, եղբայրներ, քույրեր, հայի պատկերը փոխվել է: Փառք Աստծուն, մենք այլևս հալածված, կոտորածի, ջարդի, սպանդի ենթարկված, տառապած, սովի մատնված ազգ չենք: Դա փախստականների պատկերն է: Առաջնություն տալը մակերեսային արժեքներին հենց այն է, ինչն աղավաղում է այդ պատկերը: Դուք ինքներդ էլ այս երկրում տառապել եք ծայրահեղ աշխարհականությունից: Ահա թե ինչու մենք պետք է փոխենք այս մթնոլորտը առողջ մթնոլորտով: Դա է իմ վճռական տեսակետը: Չեմ ուզում ավելի երկար խոսել, սակայն կկամենայի ասել ևս մի բան:

Մենք կբավարարվենք այն ամենով, ինչ մեզ տվել է Աստված ընդունակությունների, կարողությունների, ժամանակի, էներգիայի, ուժի, կորովի եռանդի և նյութական միջոցների ձևով, սակայն եկեղեցին ոտքի է կանգնում համարյա թե ոչինչ չունենալով: Ինչու՞ եմ ես սա ասում: Որովհետև այն ամենն, ինչը ունեցել է եկեղեցին որպես սեփականություն, խլվել, բռնագրավվել է խորհրդային պետության կողմից: Եկեղեցու Հոգևոր կենտրոն Սբ. Էջմիածինը չունի որևէ տեսակի սեփականություն, կամ էլ եկամտի աղբյուրներ: Ամեն ինչ խլված էր: Այժմ նոր կառավարությունը հետ է վերադարձնում մեր եկեղեցիները, սակայն ի՞նչ անել այդ եկեղեցիների հետ, որոնք գտնվում են ավերված վիճակում:

Դուք պատմեցիք ձեր այցելության մասին Արևելյան Թուրքիա, որտեղ

տեսաք այդ հինավուրց եկեղեցիներն ավերված վիճակում: Հայաստանի եկեղեցիները, հինավուրց եկեղեցիները դեռևս այնքան ավերված վիճակում չեն, որքան Թուրքիայի եկեղեցիները, սակայն դրանք անմխիթար վիճակում են, անուշադրության մատնված, ամայացած: Պետությունը պահպանում էր դրանք որպես ազգային հուշարձաններ, սակայն դրանք պետք է վերածվեն գործուն եկեղեցիների: Եկեղեցիների վերանորոգում, նոր եկեղեցիների կառուցում նոր քաղաքներում, որոնք կառուցվել են խորհրդային տարիներից հետո, և որտեղ չկան հինավուրց եկեղեցիներ, ինչպես նաև նոր հոգևորականների առաքում գյուղական վայրեր, որպեսզի մարդիկ զգան եկեղեցու լույսի առկայությունը: Ահա թե ինչն է մեր այսօրվա խնդիրը:

Մեր եկեղեցին էկումենիկ ընտանիքից բացի համերաշխության, համախմբվածության, միասնության այլ աղբյուր չունի: Մենք չունենք Վատիկան, և չենք էլ ուզում ունենալ: Մենք չունենք Էմիսիոն Խորհուրդ, ինչպես որոշ Բողոքական եկեղեցիներ Միջին Արևելքում ունեն հովանավոր Էմիսիոն Խորհուրդներ, կամ էլ ինչպես Ամերիկայի Էմիսիոն Խորհուրդները, որոնք ես շատ լավ գիտեմ: Այն ամենն, ինչ մենք ունենք, այս էկումենիկ ընկերակցությունը, եղբայրությունն է, երբ տարբեր եկեղեցիներ ներկայացնող մարդիկ կարող են իրենց վրա պարտավորություններ վերցնել հանուն համերաշխության, միասնության: Ահա թե որտեղ է, որ ես պետք է իմ ժողովրդին հաղորդեմ այն զգացումը, որ աշխարհում մեր եղբայրներն ու քույրերն այսօր մտահոգված են մեզանով, մեր քրիստոնեական հավատքով աշխարհի այդ մասում: Պարզապես պատկերացրեք, թե որտեղ է Կովկասը, որտեղ է Հայաստանը: Այն ձեր կողմից Արևելյան Եվրոպա անվանվող աշխարհամասի համարյա թե ծայրին է, մեր եկեղեցին սահմանային եկեղեցի է: Հայաստանից անդին Իրանն է, Ադրբեջանը, ու նաև մյուս երկրները, որոնք քրիստոնեական չեն: Երկու երկրներ կան, որոնք պահպանել են իրենց քրիստոնեական ինքնությունը: Դրանք Հայաստանը և Վրաստանն են: Փոքր Ասիան դուք լավ գիտեք, այժմ այն կոչվում է Արևելյան Թուրքիա: Դուք տեղյակ եք, թե ինչ կատարվեց նաև Միջին Ասիայում, Եգիպտոսում, որը քրիստոնեական երկիր էր: Ես ժամանել եմ հենց Եգիպտոսից, անցյալ շաբաթ ես այնտեղ էի և կկամենայի ձեզ ցույց տալ այն տեքստը, որ մենք իմ ի Քրիստոս եղբոր՝ Ղպտի Ուղղափառ եկեղեցու առաջնորդ Շենուդա Գ Պատրիարքի հետ միասին ստորագրեցինք: Ես հանդիպեցի նաև մուսուլմանների գլխավոր հոգեւոր կենտրոն Ալ-Ազհարի առաջնորդ Շեյխ Թանթաուիի հետ, Եգիպտոսի նախագահ Մուբարաքի հետ, արտգործնախարար Մուսայի հետ: Կուզենայի, որ դուք այնտեղ գտնվեիք և լսեիք, թե ինչպիսի մեծ ուշադրություն էին նրանք դարձնում Ղպտի եկեղեցուն, կամ էլ Հայ եկեղեցուն Եգիպտոսում: Եվ ես կրկնում եմ այն, ինչ ասացի այն ժամանակ, թե՝ փոքրամասնությունը չպետք է հասկանալ զուտ թվական առումով, այլ ըստ այդ քրիստոնեական փոքրամասնությունների ավանդի, ներդրման Միջին Արևելքի երկրներում: Նայեցեք, թե ինչ էին Իրանը, Իրաքը, Սիրիան և այլ երկրներ: Իսկ այդ երկու կղզիները՝ Հայաստանը և Վրաստանը, մնացին քրիստոնեական երկրներ և այսօր էլ կամենում են վերստին դառնալ այն, ինչ եղել են սկսած առաջին դարից: Ուստի, այժմ միմյանց նկատմամբ էկումենիկ պարտավորությունների ստանձնման ժամանակն է:

Խնդրում եմ ձեզ դալ և այցելել մեր երկիրը, որպեսզի ես կարողանամ ասել իմ ժողովրդին, որ մեզ չեն մոռացել մեր վերածննդի, վերանորոգության

*օրերին: Եթե մեզ մոռացել էին մեր փորձության ժամին, ապա չեն մոռացել այսօր մեր ինքնաճանաչման, ինքնահաստատման ժամին: Համաշխարհային պատմության մեջ և իմ կյանքում ինձ համար ամենաերջանիկ օրն այն օրն էր, երբ ես տեսա Հայաստանի անունը՝ փորագրված Միացյալ Ազգերի Կազմակերպության շենքում, Նյու Յորքում, իսկ մեր Եռագույն դրոշը՝ այլ ազգերի դրոշների կողքին: Այս ամենը ես իգուր կհամարեի, եթե ազգի ինքնությունը չարտահայտվեր անկախ պետականությամբ:*

*Դուք նույնպես Գերմանիայում թեւակոխել եք նոր ուղի Արևմտյան և Արևելյան Գերմանիաների միավորմամբ: Դուք էլ ունեք ձեր պրոբլեմները և կհասկանաք մեզ ավելի լավ, քան այլ քրիստոնյա ազգեր Եվրոպայում: Ինչու՞: Որովհետև դուք, ձեր ժողովրդի մի մասը կյանքի այդ փորձն ունի՝ լինել եվրոպական մի երկիր, որտեղ խղճի ազատությունը չէր ճանաչվում պետության կողմից շուրջ 40 տարի, եթե չեմ սխալվում: Սակայն մենք ավելի երկար ենք տառապել այդ հեռավոր մասում՝ Կովկասում, հեռու Եվրոպայի աչքից: Արևելյան Գերմանիան, որտեղ ես այցելել եմ այն ժամանակ, երբ այն դեռևս Արևելյան Գերմանիա էր, այլևս գոյություն չունի: Ես եղել եմ Բաթշարոուում, Դրեզդենում, շփման մեջ եղել Եպիսկոպոս Հենքելի և շատ այլ մարդկանց հետ՝ Արևելյան Գերմանիայից: Հիշում եմ, վերադառնալով Բաթշարոուից և ժամանելով Բեռլին, Արևմտյան Գերմանիայում հանդիպեցի Եպիսկոպոս Շարին, ու նա հարցրեց. «Ինչպե՞ս են իմ եղբայրակիցներն Արևելյան Գերմանիայում»:*

*Ես կկամենայի ամփոփել խոսքս այս էկումենիկ ընտանիքին ասելով հետևյալը: Եկեք մի նոր էջ բացենք Հայաստանի և «Ավետարանական Եկեղեցու հոգևոր առաքելություն» կազմակերպության միջև էկումենիկ հարաբերությունների պատմության մեջ:*

*Շնորհակալություն ուշադրության համար:*

*Եթե հարցեր կան, ապա ցանկացած ժամանակ ես պարզ, շիտակ և անկեղծ կլինեմ քննարկումների, զրույցների ընթացքում, և մենք միմյանցից ավելին կսովորենք, որպեսզի կարողանանք ապրել ճշմարտությամբ, գործել ճշմարտությամբ և հանուն ճշմարտության»:*

*«Ավետարանական Եկեղեցու հոգևոր առաքելություն» կազմակերպության վարչության հետ շուրջ մեկժամյա աշխատանքային հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց անցյալ տարիներին Հայաստանյայց Եկեղեցուն ցուցաբերած մեծ օժանդակության համար, ապա կազմակերպությանը ներկայացրեց խնամքով մշակված մի ծրագիր՝ մեկ առ մեկ թվարկելով այն կետերը, որոնց իրականացումն անհետաձգելի պահանջմունք է Ամենայն Հայոց Կաթողիկոսության նոր առաքելության կարգացման ճանապարհին: Ակնկալված օժանդակությունը կնպաստի Հայաստանյայց Եկեղեցու հոգևոր-մշակութային, դաստիարակչական և տպագրական գործունեության կարգացմանը:*

*Վարչության անդամները խոստացան ուսումնասիրել ներկայացված առաջարկները և սատար կանգնել Նորին Սուրբ Օծությանը:*

*Վերջում եպիսկոպոսուհի Մարիա Եփսենը և Հայոց Հայրապետը փոխանակեցին հուշանվերներ:*

## ՓԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*Նույն օրը, երեկոյան ժամը 17.30-ին, Նորին Սրբությանն իր շքախմբի հետ հյուրընկալեց Գերմանիայի Հույն Ուղղափառ Եկեղեցու Բոննի միտրոպոլիտ Օգոստինոսը:*

*Դիմավորելով Նորին Սրբությանը, Օգոստինոս միտրոպոլիտը բարձրաստիճան հյուրերին առաջնորդեց դեպի Հույն Ուղղափառ Եկեղեցու Սուրբ Երրորդություն Մայր Տաճար, ուր հայերենով կատարվեց փառաբանական միասնական աղոթք: Արարողությանը մասնակցեցին քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, հավատացյալ ժողովուրդը, ինչպես նաև Քյոլնի հայ համայնքի «Կոմիտաս» երգչախումբը:*

*Հավարտ էկումենիկ աղոթքի, ներկաներին իր շնորհակալությունն ու երախտիքը հայտնեց Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը՝ միաժամանակ ողջունելով նաև Ամենայն Հայոց Հայրապետին.*

*«Վեհափառ Տէր,*
*Գերաշնորհ Սրբազան Հայրեր,*
*Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրեր,*
*Ծարգարժան հիւրեր եւ ներկաներ,.*

*Այսօր ինքզինքս բախտաւոր կը զգամ Գերմանիոյ Աւետարանական եւ Կաթուղիկէ մեծ եկեղեցիներէն ետք • ուղղափառ մեր եղբայրներու մէջ գտնուելով: Ուրախ եմ ողջունելու Հայ Եկեղեցւոյ Պետն ու Ամենայն Հայոց Հայրապետը յունական այս հոյակապ տաճարին մէջ: Մենք ասկէ աւելի մեծ ուրախութիւն մը չէինք կրնար վայելել: Սուրբ Գիրքը այսպէս կը ընորոշէ քրիստոնեայ եղբայրներու միասնութիւնը վերնատան մէջ, երբ կ՚ըսէ. «անոնք միասին էին» (ԳՈՐԾՔ. Բ Ա):*

*Վեհափառ Տէր, այսօր եթէ մենք կարողացանք այս Սուրբ եկեղեցւոյ մէջ միասին ըլլալ ու միասին աղօթել, զայն կը պարտինք նախ Աստուծոյ, որ ստեղծեց Գերմանիա Ձեր այցելութեան առիթը: Այս պատճառով քիչ առաջ փառաբանեցինք զԱստուած եւ մեր աղօթքներով յայտնեցինք մեր շնորհակալութիւնը եւ խնդրեցինք, որ Տէրը անպակաս ընէ Իր Հովա՛հն բոլոր մեր եղբայրներուն, ինչպէս նաեւ աշխարհի մարդկութեան վրայէն, ամրապնդելով անոնց սրտին մէջ ճշմարիտ սէրն ու եղբայրութիւնը:*

*Մեր շնորհակալութիւնը կ՚երթայ նաեւ Աւետարանական եւ Կաթուղիկէ եկեղեցիներու պետերուն ու կեդրոններուն, որոնք Գերմանիոյ մէջ առաջին օրէն մեր եկեղեցւոյ առջեւ լայն բացին իրենց դռները՝ երկարելով իրենց եղբայրական ձեռքը եւ Ձերդ Սրբութեան հովուապետական այս այցելութեան առթիւ ջանք չխնայեցին զայն լաւագոյնս կազմակերպելու:*

*Իսկ հիացումով միայն կրնամ՝ արտայայտուիլ Գերմանիոյ Ցոյն Ուղղափառ Եկեղեցւոյ Պետին՝ Օգոստինոս Միթրոփոլիթին՝ իմ մեծ եղբօր մասին, որ աղօթքի այս պահը իր Մայր եկեղեցւոյ մէջ, իրականացնելու առաջարկէն անդին, մեր Եկեղեցւոյ նկատմամբ կը ներկայացնէ մեծ եղբօր մը հանգամանքը եւ մշտական օրինակ կը հանդիսանայ մեզի թէ՛ իր տարած միջեկեղեցական աշխոյժ ջանքերով եւ թէ՛ իր հովուական բոլոր աշխատանքներով: Այս առթիւ Գերմանիոյ մեր թեմի անունով կու գամ խորին շնորհակալութիւններ յայտնել բարձրաշնորհ Օգոստինոս մեր*

Սրբազան եղբօր՝ իր ցուցաբերած բարեացակամ վերաբերմունքին համար եւ մաղթել իրեն առողջութիւն և երկար կեանք, մանաւանդ երբ ի մօտոյ մեծ հանդիսութեամբ պիտի նշուի նաեւ իր ծննդեան 60-ամեակը եւ իր եպիսկոպոսութեան 25-ամեակը:

Սրտանց շնորհակալութիւններ:

Ահաւասիկ, Վեհափառ Տէր, կը գտնուիք այսպիսի եղբօր մը կամ եղբայրներու տան մէջ, որոնք շրջապատած են Ձեզ սա պահուն եւ եկած՝ լսելու Ձեր պատգամը եւ ստանալու Ձեր օրհնութիւնը:

Մինչ այդ թոյլ տուէք որ հրաւիրեմ Օգոստինոս Սրբազանը, որպէսզի Ձերդ Սրբութեան բարի գալստեան եւ ողջոյնի իր խօսքը արտասանէ»:

Գարեգին Սրբազանից հետո, իր ողջոյնի խոսքը Գարեգին Ա Կաթողիկոսին և բոլոր ներկաներին հղեց Օգոստինոս միտրոպոլիտը.

«Հայոց վիշտը անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին»:

Հովհաննես Թումանյանի վերոհիշյալ խոսքերով եմ ողջունում Ձերդ Սրբությանը և Ձեր շքախմբին՝ Գերմանիայի Հույն Ուղղափառ Առաջնորդանիստ Մայր եկեղեցում, որ Սուրբ Երրորդություն է կոչվում: Ինձ համար մեծ պատիվ է նաև այս առիթով փոխանցել Ձեզ Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդողիմեոս Ա-ի ողջույնները, ում իշխանության տակ է գտնվում մեր Առաջնորդությունը:

Մենք Ձեզ ողջունում ենք ճշմարիտ ակնածանքով և խոնարհվում ենք հայ մեծ ժողովրդի տառապանքի առջև, որ նա ապրեց այս դարի ընթացքում՝ հալածանք ու ցեղասպանություն, գաղթ և աքսորներ...: Ձեր ժողովրդի ապրածը տառապանքի մի ճշմարիտ ծով է: Մեզ ծանոթ են այս բոլորը և մեծագույն հարգանք ունենք Ձեր անսասան հավատքի նկատմամբ:

Ինչպես գիտեք, այս երկրում բնակվող հույն ժողովրդի պատմությունը ևս ունեցել է գերության ու տառապանքի փորձություններ: Հավանաբար այստեղից է բխում մեր համակրանքն ու հիացումը Ձեր ժողովրդի և նրա հավատքի նկատմամբ:

Գերմանիայում այսօր բնակվում են կես միլիոնից ավելի քրիստոնյաներ, որոնց մեծամասնությունը Տիեզերական Պատրիարքությանը պատկանող մեր Առաջնորդության իշխանության տակ է գտնվում: Նրանք այստեղ են եկել որպես փախստականներ, կամ, այսպես ասած, որպես քանվորներ, և Գերմանիան այսօր դարձել է նրանց երկրորդ Հայրենիքը: Իրենց Եկեղեցին, այսինքն՝ Ուղղափառ Եկեղեցին, որ այս երկրի երկու մեծ Եկեղեցիների կողքին երրորդն է իր մեծությամբ, մասամբ համարվում է տեղական Եկեղեցիներից մեկը: Գերմանիայի բոլոր նահանգների դպրոցներում քրիստոնեական դասընթացների մաս է կազմում ուղղափառների կրոնը: Սյունխենում և Սյունթերում գործում են ուղղափառների աստվածաբանական ֆակուլտետներ, որոնք ստանձնել են ապագա եկեղեցականների պատրաստությունը: Առաջնորդությունը ներկայացված է միջեկեղեցական բոլոր կառույցներում և բոլոր մակարդակներում տանում է դրական աշխատանքներ:

Հիշյալ կառույցների շրջանակներում է, որ մենք հանդիպումներ ենք ունենում Ձեր եկեղեցու աչքի ընկնող ու նշանավոր ներկայացուցիչների հետ, մասնավորաբար 1992-ին Հայ Առաքելական Եկեղեցու Գերմանիայի Հայոց թեմի կազմավորվելուց հետո, հոգ չէ, որ թվաքանակով փոքր է,

սակայն բաղդատական ընթացքի մեջ է և փորձում է իր տեղը գտնել գերմանական եկեղեցական ու ընկերային իրականությունում: Հանձին Գարեգին եպիսկոպոսի, որ Ձեր եկեղեցու առաջնորդն է Գերմանիայում և բնակվում է Հարևան Քյոլն քաղաքում, Հույն Ուղղափառ եկեղեցու Առաջնորդությունը գտել է ճշմարիտ մի գործակից և վստահելի բարեկամ: Նաև իրեն ենք հայտնում մեր ողջույնն ու շնորհավորանքը՝ անցնող տարիների ընթացքում միջեկեղեցական բնագավառում Հայ եկեղեցու տարած աշխատանքների համար:

Իսկ հանձին Ձեզ, Գերմանիայի ուղղափառ քրիստոնյաները ողջունում են ոչ միայն Սուրբ Էջմիածնի եկեղեցու պետին և Ամենայն Հայոց Կաթողիկոսին, այլ նաև միջեկեղեցական մոտեցման և փոխըմբռնման առաջամարտիկին:

Երբ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն էիք, Միջին Արևելքի Միջեկեղեցական խորհրդի շրջագծից ներս Դուք տվեցիք Ձեր եկեղեցու և ժողովրդի բարեկամական և խաղաղարար դրսևորման մեծագույն վկայությունը: Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, Սուրբ Էջմիածնում ևս շարունակում եք Ձեր այս ըմբռնումը ճիշտ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Ձեր երկիրը դարձյալ գտնվում էր պատերազմի ու տնտեսական շրջափակման մեջ, քաղցածության և աղքատության սպառնալիքների ներքո: Ողջ աշխարհի ուղղափառ քրիստոնյաները Ձեր ընտրությանը, ինչպես նաև այս առաջընթացներին մեծ ուշադրությամբ ու բարեխոսական աղոթքներով հետևեցին: Անցյալ տարի Տիեզերական Պատրիարք Բարդողիմեոս Ա-ն առիթ ունեցավ այցելել Ձեր երկիրը և այս առիթով փոխանցեց բոլորիս ուրախությունը Ձեր ժողովրդին, նաև բարեմաղթանքները՝ ժողովրդավարական ճանապարհին Հայաստանի վերստին չահած ազատության համար:

Աստված օրհնի Ձեր երկիրը Սուրբ Հովհաննես Ոսկեբերանի բարեխոսությամբ, ինչպես նաև բարեխոսությամբ Հայաստանյայց Եկեղեցու մեծ Հայրապետի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի, ում մեր եկեղեցին այսօր ևս մեծարում է ըստ արժանվույն, :

Աստված օրհնի Ձեր եկեղեցին,

Աստված օրհնի Ձեր այցելությունը ի Գերմանիա, բարի գալուստ»:

Հավարտ Օգոստինոս Սրբազանի խոսքի, Հույն Ուղղափառ Միտրոպոլիտության Մայր Տաճարում ներկաներին իր հայրապետական ուղերձը հղեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ի մասնավորի նշելով.

«Ձերդ Սրբազնութիւն,

Գերաշնորհ Սրբազան Հայրեր,

Հոգեշնորհ եւ Արժանապատիւ Հայրեր,

Ցարդարժան ու մեծապատիւ ներկաներ,

Սրտի խոր գոհունակութեամբ եւ քրիստոնէական եղբայրական սիրոյ զգացումներով է լեցուած մեր սիրտը այս պահուն, երբ կը գտնուինք այս սուրբ յարկին տակ Ձեզի եւ Ձեր հոգեւորականներու դասին հետ միասին աղօթքի սրբարար մթնոլորտին մէջ: Այստեղ մենք մեզ կը զգանք մեր հարազատ տան մէջ: Այստեղ անգամ մը եւս կը վերապրենք այն հոգեկան միութիւնը, որ կը բխի մեր քրիստոնէական հաւատքէն, մեր հասարակաց Տիրոջմէն՝ Յիսուսէ Քրիստոսէ եւ մեր ուղղափառ սուրբ հայրերու դարաւոր աւանդութենէն:

*Առաջին հերթին պարտք կը զգանք մեր եղբայրական ամենաջերմ զգացումները փոխանցել Ձեր մէջէն Կոստանդնուպոլսոյ Տիեզերական Պատրիարքին՝ Նորին Սրբութիւն Բարթողիմէոս Ա Պատրիարքին, որուն հետ մեր երկար տարիներու անձնական սերտ բարեկամութիւնը կը նկատենք հոգեկան զօրութեան և զօրակցութեան աղբիւր:*

*Մենք անմոռանալի քաղցրութեամբ կը յիշենք մեր այցելութիւնը ի Կոստանդնուպոլիս եւ Նորին Սրբութեան՝ Տիեզերական Պատրիարքին պատմական աննախընթաց այցելութիւնը ի Հայաստան եւ ի Սուրբ Էջմիածին: Ամէն տեղ, ուր այցելած ենք մենք, որպէս Հովուապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ, աշխարհի չորս ծագերուն միշտ սերտ կապեր ենք հաստատած Յոյն Ուղղափառ Եկեղեցիներուն, անոնց պետերուն եւ ներկայացուցիչներուն հետ: Մեր ջերմ փափաքն է, որ թեմերու եւ ծխական եկեղեցիներուն տեղական մակարդակներու վրայ յառաջ գնան այդ փոխադարձ յարաբերութիւնները, որոնք ցանկալի են եւ հաճելի առ Աստուած եւ այնքան կենսական մեր քրիստոնէական առաքելութեան համար, մանաւանդ 20-րդ դարու վերջին հանգրուանին, երբ կը հասնինք Քրիստոսի ծննդեան 2000-րդ տարեդարձին:*

*Մենք ուրախ ենք, որ այստեղ, Գերմանիոյ մէջ, այդ յարաբերութիւնները օրինակելի եղբայրական ոգիով կը մշակուին Ձեր եւ մեր Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Պեքճեանին եւ թեմական եկեղեցիներուն միջեւ:*

*Այսօր, հազար փառք Աստուծոյ, որ Հայոց երկիրը, ժողովուրդը եւ Եկեղեցին 1915-ի Ցեղասպանութենէն ետք, դարուս վերջաւորութեան վերագտան իրենց ազատութիւնն ու անկախութիւնը իրենց Մայր Հայրենիքին՝ Հայաստանի մէջ: Մենք կ'ուզանք Ձեզի ոչ այն երկիրէն, ժողովուրդէն եւ Եկեղեցիէն, որ միայն տառապանք ու ջարդ է տեսած, այլ այսօր կը վայելէ յարութեան, վերածննդեան նոր շրջանը:*

*Յոյն եւ Հայ Եկեղեցիները յաճախ պատմութեան մէջ դէմ յանդիման գտնուած են նոյնատեսակ կացութեանց եւ եղած են մէկ. այսօր պէտք է ըլլան միասնական եւ զօրակից իրարու ազատութեան եւ անկախութեան այս շրջանին, վերաշինութեան, վերանորոգութեան, վերականգնումի այս օրերուն:*

*Ներկայ դարը կը պահանջէ բոլոր քրիստոնէական Եկեղեցիներէն համագործակցութիւն: Էքիւմենիք շարժումը անհրաժեշտ գործիք մըն է, որ մեծ բարիքի կը վերածուի, երբ բոլոր քրիստոնեաներս, յատկապէս Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներս կարենանք ցոյց տալ գործնապէս մեր հաւատքի միութիւնը, որովհետեւ «զօրութիւնը միութեան մէջ է», ինչպէս կ'ըսէ հայկական առածը:*

*Ձեզի եւ Գերմանիոյ Յոյն Ուղղափառ բազմահազար հաւատացեալներուն կը մաղթենք մշտատեւ եւ յարաճուն բարիքներ, նորանոր նուաճումներ հոգեւոր ծառայութեան համար ի փառս Աստուծոյ եւ ի բարին մարդկութեան, Գերմանիոյ եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցիին»:*

Հետփառաբանական աղոթքի, ի պատիւ Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի, տրվեց սիրո ճաշ, որին մասնակցեցին էկումենիկ աղոթքին ներկա բոլոր քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչները, ինչպես նաև Գերմանիայի հայոց Առաջնորդարանի հոգևորականները:

Վերջում Նորին Սուրբ Օծությունը քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ ունեցավ մտերմիկ զրույցներ:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՄԼՈ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԵՏ

*Նույն օրը, հունվարի 28-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հարցապրույց տվեց Ավետարանական մամլո ծառայության աշխատակցին՝ Ֆրանկ Կյուրշներ-Բելքմանին, «Ավետարանական առաքելության Հաստատությունը* (Evangelische Missionswerk) *1998-ի մամուլի հայելու մեջ» խորագրի շրջանակներում:*

*Մամլո ծառայության աշխատակիցը այն վերնագրել էր այսպես՝ «Հայաստանը քարոզչության դաշտ չէ»: Ստորև ներկայացնում ենք հարցապրույցն ամբողջությամբ՝ իր փոքրիկ բացատրականով հանդերձ.*

## ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ 1998-Ի ՄԱՄՈՒԼԻ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ

### «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԴԱՇՏ ՉԷ»

*Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր պետ Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը հունվարի վերջերին և փետրվարի սկզբներին այցելեց Գերմանիա՝ խորացնելու միջեկեղեցական հարաբերությունները Գերմանական եկեղեցիների հետ: Հայաստանում Հայ եկեղեցին ունի շուրջ 3,5 միլիոն, Սփյուռքում՝ շուրջ 4 միլիոն անդամներ: Գերմանիայում ապրում են մոտ 40 հազար հայեր, որոնց գերակշիռ մեծամասնությունը քրիստոնյաներ են: Քրիստոնեությունը 301 թվականին Հայաստանում ճանաչվել է պետական կրոն և հետևաբար, Հայաստանյայց եկեղեցին պատկանում է աշխարհի հնագույն, բայց կանոնն եկեղեցիների թվին:*

*Գարեգին Ա Կաթողիկոսն ընտրվել է 1995-ի ապրիլին՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս: Մինչ այդ, նա Կաթողիկոս էր Լիբանանում: Նա աշխատակցել է բազմաթիվ միջեկեղեցական հանձնաժողովների հետ, եղել է ԵՀԽ-ի փոխնախագահ, անցյալ տարի Գրացում ուղեցուցիչ մի ելույթով կատարեց Միջեկեղեցական համաժողովի բացումը:*

*ՀԱՐՑ.- Ի՞նչ նախընտրություններ ունեք Դուք՝ Հայաստանի ներսում եկեղեցու վերակառուցման համար Ձեր երկրում անկախության վերատիրացումից հետո:*

*ՊԱՏԱՍԽԱՆ.- Մեր առաջին նախընտրությունը մեր եկեղեցին նոր սպասավորներով օժտելն է՝ թե՛ հոգևորական և թե՛ աշխարհիկ, կին, թե տղամարդ: Նրանք պետք է Ավետարանի ավետիսը տարածեն մարդկանց մեջ իրենց ամենօրյա կյանքի ընդմեջեն: Տեսական ու ընդհանուր քարոզները մարդկանց չեն հասնում: Մենք պետք է քարոզի և ուսուցման նոր ձևեր զարգացնենք, որոնց միջոցով քրիստոնեական հավատքը կթափանցի մարդկանց կյանքի մեջ:*

*ՀԱՐՑ.- Ինչպիսի՞ մարտահրավերների առջև է կանգնած հասարակությունը Հայաստանում և, հետևաբար, նաև եկեղեցին:*

*ՊԱՏԱՍԽԱՆ.- Հասարակության մեջ եկեղեցական հարցերի նկատմամբ մի տեսակ անտրամադրվածություն և անտարբերություն է նկատվում, որովհետև 70 տարի շարունակ եկեղեցական դաստիարակություն չեն ստացել: Միաժամանակ, սակայն, շատ մարդիկ փնտրում են հոգևոր խոր արժեքները: Եթե եկեղեցին այս հոգևոր փնտրտուքի պատասխանը չգտնի այսօր, ապա դրա տեղը կարող է զբաղեցնել որևէ աշխարհիկ մշակույթ, որը*

*և կիշխի մարդկանց պատկերացումներին ու կյանքին: Սա ի զորու է հատկապես նոր սերնդի համար: Մենք պետք է թույլ չտանք, որ կյանքը պարապության վերածվի, այլ այն պետք է լցնել քրիստոնեական հավատքով:*

*ՀԱՐց.- Արևմուտքում կան եկեղեցիներ և քարոզչական հաստատություններ, որոնք այն համոզմունքն ունեն, թե իրենք Հայաստանում քարոզչական պարտավորություն ունեն: Ինչպե՞ս եք Դուք հակազդում քարոզչական նման նախաձեռնություններին:*

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** *Ես չեմ կարող ողջունել ծայրահեղ եկեղեցիների ավետարանական այսպիսի նախաձեռնությունները, որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից մեզ ուսուցանված առաքելության գաղափարն այն է, որ մենք գնանք Ավետարանը քարոզելու նրանց, ովքեր քրիստոնյա չեն: Մատթեոսի Ավետարանի 28-րդ գլխի վերջին համարներում ասվում է, որ առաքյալները պարտավոր են գնալ նրանց մոտ, ովքեր Ավետարանը դեռ չեն լսել: Քրիստոս երբեք չի ասել, որ մենք պետք է քրիստոնյային տարահամոզենք՝ իր դավանանքից մի ուրիշ դավանանքի անցնել:*

*Արևելյան Եվրոպան և ի մասնավորի Հայաստանը որպես քարոզչության դաշտ տեսնելը պատմական մի սխալ է: Մեզ համար շատ վիրավորական է, երբ մարդիկ Հայաստան են գալիս՝ որպես քարոզչության շրջանի: Ես նրանցից ոմանց ասել եմ. եթե դուք իրապես ուզում եք հետևել Հիսուսին, ապա գնացեք ուրիշ երկրներ, որովհետև քրիստոնեական հավատքը մեզ մոտ արմատավորված և տնավորված է: Եթե դուք ուզում եք մեր երկրներում զորացնել քրիստոնեական հավատքը, ապա օգնեցեք տեղի Եկեղեցուն, այլ ոչ թե զուգահեռ ու մրցակից կառուցվածքներ ստեղծեք:*

*ՀԱՐց.- Ձեր եկեղեցին հնագույններից մեկն է և ունի շատ հին Ավանդություն: Ի՞նչ իմաստ ունի այդ Ավանդությունը եկեղեցու համար ներկա Հայաստանում:*

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** *Մեր Ավանդությունը մեզ համար շատ արժեքավոր է, և մենք խնամքով ենք պահպանում այն: Այդ Ավանդությունը մեզ շարունակականության և հարատևության գիտակցությունն է տալիս և սա մեզ համար շատ կարևոր է: Այդ իսկ պատճառով մենք Ավանդությունը գրում ենք գլխագիր, բայց ոչ՝ ավանդույթները: Ավանդույթները կարող են փոխվել, բայց կենարար Ժառանգությունը, որը բխում է Քրիստոսից և մեզ է փոխանցվել առաքյալների ու եկեղեցական հայրերի կողմից, պետք է նոր կենդանություն ստանա: Սա ոչ միայն պետք է պահպանվի, այլ պետք է վերածվի գործի և նոր լեզվով բերվի ժամանակակից աշխարհ: Ներկա աշխարհը կարիք ունի հարատևության ու մնայուն արժեքների, և բոլոր արժեքները չէ, որ կարելի է հարմարեցնել կյանքի փոփոխական իրավիճակներին:*

## ԺԱՄԱՆՈՒՄ ՀԱԼԼԵ ՔԱՂԱՔ

*Հունվարի 28-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 7.30-ին, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով մեկնեց Հալլե քաղաք, ուր դիմավորվեց տեղական իշխանությունների, քույր Եկեղեցիների, ինչպես նաև հայկական համայնքի ներկայացուցիչների կողմից:*

*Ջերմ ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց դեպի Հալլե-Վիտտենբերգի Մարտին Լյութեր համալսարան: Այստեղ*

Նորին Սրբությանը դիմավորեցին համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի տնօրեն պրոֆեսոր Ուտո Շնելլեն, Ուղղափառ Եկեղեցիների ամբիոնի և հայագիտական ինստիտուտի վարիչ հայագետ պրոֆեսոր Հերման Գոլցը, նույն ամբիոնի աշխատակից դոկտոր Խաչիկ Գալերը, ինչպես նաև համալսարանի դասախոսական ու պրոֆեսորական կազմը:

Ողջագուրանքներից հետո, համալսարանի ընդունարանում տնօրենը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծանոթացրեց ներկաներին: Ջերմ ընդունելության ընթացքում ծավալվեց մտերմիկ զրույց, իսկ վերջում պրոֆեսոր Շնելլեն, հանուն համալսարանի տնօրինության, ձեռագրեր և գրքեր նվիրեց Վեհափառ Հայրապետին:

## ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ՀԱԼԼԵ-ՎԻՏՏԵՆԲԵՐԳԻ ՄԱՐՏԻՆ ԼՅՈՒԹԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄ

Քիչ ուշ, ժամը 11.00-ին, համալսարանի մեծ դահլիճում, քառաձայն երգչախմբի գեղեցիկ ելույթով բացվեց օրվա հանդիսությը, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգզյանը, Լիոնի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, Հյուսիսային Գերմանիայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը, հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը, հոգեշնորհ Տ. Սշոտ աբեղա Մնացականյանը, արժանապատիվ Տ. Մյուռոն քհն. Սարգիսյանը, Հալլե քաղաքի քաղաքապետ դոկտոր Կլաուս Ռաուենը, համալսարանի տնօրինությունը, դասախոսական կազմը, պաշտոնատար այլ անձինք, աստվածաբանական ֆակուլտետի ուսանողներ, հյուրեր:

Բացման խոսքով հանդես եկավ համալսարանի տնօրեն պրոֆեսոր Ուտո Շնելլեն՝ բարի գալուստ մաղթելով Վեհափառ Հայրապետին:

Նորին Սուրբ Օծության համառոտ կենսագրությունն ու հոգևոր ծառայությունը ներկայացրեց հայագետ պրոֆեսոր Հերման Գոլցը.

«Ձերդ Վսեմափառ Գայծառություններ, Ձերդ Գերազանցություններ, Մեծարգո Ռեկտոր, հարգարժան Դեկան, հարգելի գործընկերուհիներ և գործընկերներ, ուսանողուհիներ և ուսանողներ, տիկնայք և պարոնայք և գլխավորապես

Վեհափառ Հայրապետ, Ձերդ Սուրբ Օծություն:

Այս հայկական դիմելածևը գերմաներենում կարելի է մոտավորապես հետևյալ կերպ արտահայտել.

„Eure Majestät Herr Patriarch, Eure Heiligkeit"!

(հայերեն բառացի թարգմանությամբ.

Ձերդ Մեծություն, Տեր Պատրիարք, Ձերդ Սրբ(ազն)ություն)

Ես պետք է խոստովանեմ, որ այս տիտղոսները բողոքականի շուրթերով դժվար է արտաբերել: Ուստի կա՞մ պետք է լռել կա՞մ ավելի խոր մտածել, թե ի՞նչ ես ասում:

Ես կկամենայի այս ընծայաճառում երկրորդ ուղին ընտրել և հարցնել, թե արդյոք ի՞նչ Մեծություն է այսօր մեր համալսարան եկել և այս հանդիսասրահն իր այցելությանն արժանացրել: Արդյո՞ք սա բյուզանդական-

հռոմեական Բասիլևսի մեծությունն է, հզորությունը մի կայսեր, որն իշխում էր մեծ ու բազմազգ մի կայսրության վրա: Ո՛չ, այս Մեծությունը մեծությունն է մի ժողովրդի, որը կայսրությունների ջրաղացքարերի արանքում հազարամյակներ ի վեր փորձում է ողջ մնալ: Սա Մեծությունն է փոքրյալների, որոնք դեռևս այս հազարամյակում մազապուրծ լինելով լիակատար բնաջնջման երախից, վերարդխեցին:

Արդյո՞ք սա մեծությունն ու հզորությունն է գերմանական կայսրերի, որոնցից վերջինը Արևելքի հովանավորն էր հավակնում դառնալ: Ո՛չ, սա Մեծությունն է այն ժողովրդի, որը գերմանական և թուրքական կայսրությունների կողմից ռազմական անհրաժեշտությունների ընծայարանին զոհաբերվեց: Իսկ ի՞նչ Սրբազնություն է մեզ այցի եկել: Արդյո՞ք սա Սրբությունն է այն հզորության, որը դողի մեջ է պահում աշխարհն ու շլացնում: Ո՛չ, սա Սրբությունն է մի ժողովրդի, որը միայնակ էր, լքյալ և բռնության պատարագիչների առջև լռեցվեց: Սա Սրբությունն է այն ժողովրդի, որը պարսկական մեծ տերությունից կրած պարտության մեջ իսկ իր հավատը պաշտպանեց: Սա Սրբությունն է այն ժողովրդի, որն իր հավատը չուրացավ և թուրք-մահմեդական հալածիչների առջև այն արյամբ վկայեց:

Արդյո՞ք սա Սրբությունն է ազգի: Ո՛չ, ո՛չ միայն ազգի: Սա Սրբությունն է պանդուխտների, որոնք սփռված են ողջ երկրագնդով մեկ և որոնք Աստուծո Սրբության մեջ են ապաստան գտնում:

Սա Մեծությունն է ս. Խաչի: Սա, ինչպես Մարտին Լութերը կասեր, օտար սրբություն է, Սրբությունը Աստուծո և ո՛չ մարդու: Խաչի այդ Մեծությունը ակներևորեն զարդարում է Ձեզ, Վեհափառ, և նրանով զարդարված ենք մենք բոլորս միասին: Աստուծո օտար Սրբությունը լուսավորել է տալիս այս աշխարհի խավարում Ձեզ և մեզ այստեղ բոլորիս, ովքեր միաբանորեն Քրիստոսին, մեր Տիրոջն են դավանում:

Մենք երախտապարտ ենք Աստծուն, որ այս Մեծությանն ուղղեց դեպի մեզ բերող ճանապարհով: Մենք փառաբանում ենք օտար Սրբությանը, որին մեզ երկինքն ուղարկեց:

Ընդհանրապես սիրվում և հարգվում է այն, ինչ մոտ է և ընտանի, վստահություն ներշնչող: Տիրոջն ու Աստծուն ուղղված հավատը մոտեցնում է մեզ՝ իրարից հեռու գտնվողներիս, և միմյանց նկատմամբ վստահություն ներշնչում մեզ՝ իրար չվստահողներիս: Ձեր՝ ինձ վստահելու ընծան արդեն երկար ժամանակ է, ինչ վիճակվել է ինձ, քանզի ձեր ուշադրությունից չեն վրիպել Հայոց Եկեղեցու աստվածաբանության և պատմության ուղղությամբ տարվող մեր աշխատանքները, հայ-գերմանական հարաբերությունների, նաև խաթարումների վերաբերյալ մեր ուսումնասիրությունները: Դուք պատկանում եք քրիստոնյա աշխարհի այն դեմքերին, որոնք ժամանակին պողպատյա վարագույրի ետևում մեզ միայնակ չթողեցին: Այդ վարագույրի ժանգոտումից շատ առաջ Դուք մեզ այստեղ այցելեցիք որպես ԱՄՆ-ի Հայոց եպիսկոպոս, և այդ ժամանակից ի վեր ծայր է առնում Ձեր հոգածությունը մեր այստեղի աստվածաբանական աշխատանքների նկատմամբ:

Դուք ծնվել եք Հեռուներում, ասորական Քեսաբում, Հայկական Սփյուռքում, ուր ճակատագրի ալիքները նետել էին ցեղասպանությունից խուսափածներին: Սակայն այդ Հեռուները Ձեզ համար միայն Հեռուներ չէին, քանզի այնտեղ էին աշխատում Հայերի բարեկամ Յոհաննես Լեփսիուսի աշխատակիցները: Այնպես, որ Դուք Հայ-գերմանական կապերին արդեն այն վաղ ժամանակներում եք հաղորդակցվել:

Հայ փախստականների մեկ այլ հանգրվանում, Բեյրութից հյուսիս գտնվող Անթիլիասում, որտեղ փախստականների վրանները ժամանակի ընթացքում վերածվեցին դպրոցի, իսկ այնուհետև աքսորյալ կիլիկյան հայերի հոգևոր հայրենիքի, որտեղ և Դուք ստացել եք Ձեր աստվածաբանական կրթությունը: Նաև այս Հեռուներում Դուք հեռու չմնացիք Գերմանիայից: Ձեր մեծ ուսուցիչ, Նաթանիել Գարեգին Հովսեփյանը Գերմանիայում ստացած իր ուսումնառության հայ-գերմանական ոգին բերեց նաև Լիբանան, իսկ Մելքոն Քրիշչյանը, Անթիլիասի մեկ այլ ուսուցիչ, աստվածաբան Լեփսիուսի գործակիցն էր:

Այնտեղից, ասորա-լիբանանյան ապաստարանից Դուք 1957 թվականին հոգևոր կապ հաստատեցիք Օքսֆորդի հետ և շուտով, 1960 թվականին դարձաք Անթիլիասի աստվածաբանական հոգևոր ճեմարանի տեսուչ: Օքսֆորդում ուսանած տարիներին Դուք գրեցիք Ձեր գրչի տակից դուրս եկած աստվածաբանական դասական երկի՝ The Council of Chalcedon and the Armenian Church գրքի ստեղծման հիմքերը, որն հետագայում 1965 թվականին լույս տեսավ լոնդոնյան Society of Promoting Christian Knowledge հրատարակչությունում: Մի հրատարակչություն, որի հետ XVII դարից ի վեր, իրենց հերթին, սերտ կապերի մեջ էին գտնվում Հալլեի պիետիստները: Ձեր այդ ուսումնասիրության մեջ մի մոտիվ է հնչում, որը Ձեր կյանքի և գործունեության լեյտմոտիվն էր դառնալու և այսօր էլ կրկին, մեկ այլ միջավայրում առաջնորդում է Ձեզ: Դա քրիստոնեության մեջ ալեքսանդրյան և բյուզանդական քրիստոսաբանության միջև եղած ճեղքվածքի դարմանումն է: Մի ճեղքվածք, որը շատ ավելի հին և ամենաքիչը ճիշտ այնքան ճակատագրական էր, որքան դրանից հետո 600 տարի անց Արևմտյան և Արևելյան եկեղեցիների միջև տեղի ունեցած պառակտումը: Արդեն, իսկ այն ժամանակ Ձեր գիտական անդրանիկ երկը տոգորված էր Արևելյան եկեղեցիների վերաիմաստավորման տենչով, որը բնականաբար նաև ողջ քրիստոնեության իղձն է: Այդ գաղափարը ուղեկցել է միշտ Ձեզ Ձեր հովվական, միջեկեղեցական աշխատանքի ընթացքում և ահա կրկին առաջնորդում է Ձեզ նոր նախանշանների ներքո քաղաքական, ազգային և կրոնական տեսակետից պառակտված Անդրկովկասում, որտեղ այժմ Ձեր նստավայրն է գտնվում: Դուք Ձեր աստվածաբանական աշխատանքով, հովվական, եկեղեցական և համաքրիստոնեական գործունեության միջոցով մեծապես նպաստել եք Արևելյան եկեղեցիների միջև երկխոսությանը: 1990 թվականի սեպտեմբերին Ժնևից ոչ հեռու գտնվող Շամբեզի քաղաքում բյուզանդական և հին արևելյան ծեսի եկեղեցիների կողմից քրիստոսաբանության փոխադարձ ճանաչումն այդ վերամիավորման նախաճաշակումն էր: Այն մասին, թե որքան օգտակար է Ձեր գիրքը նաև Արևմուտքի աստվածաբանության համար, վկայում է այն հանգամանքը, որ այն երկու անգամ վերահրատարակվել է, վերջին անգամ, եթե հավատալու լինենք internet-ի անցյալ գիշեր տված տեղեկություններին, 1997 թվականին Նյուհորքում: Ձեր գրչի տակից դուրս եկած այս գործն այստեղ որպես նմուշ ներկայացնելու է կոչված Ձեր ողջ ստեղծագործությունը, մի իսկական փոքրիկ գրադարան, որն այսօր ես հաճույքով կթերթեի, եթե ժամանակը ներեր:

Մինչև այսօր էլ դեռ հոդնություն չտեսած գիտական ջերմեռանդության այս ժամանակների բովում Դուք խոնարհվեցիք եպիսկոպոսական պաշտոնի լծի ներքո և 70-ական թվականներին ծառայեցիք Իրանի Հայկական համայնքներին, ամենից առաջ Իսֆահանի շրջակայքում, որտեղ արդեն 17-

*րդ դարի սկզբում պարսից Շահ Աբասի կողմից բռնի ուժով տեղափոխվել էին պահանջվող շատ արհեստավորներ, արվեստագետներ և վաճառականներ: Ինչպես այսօր, հիշում եմ, թե ինչպես Դուք Ծնեւում մի հանդիպման ժամանակ ինձ հաղորդեցիք այնտեղ, քաղաքական մարտնչող իսլամի հարուցած ծանր դժվարությունների ներքո ձեռք բերած մի գիտելիքի մասին. այն դաղափարը, որ քրիստոնյաներն Արևելքում արևմտյան քրիստոնեության նկատմամբ մի անկախ և ինքնուրույն մեծություն են և որպես այդպիսին են ներակայանում իսլամի առջև, ուղղակի կենսական արժեք ունի: Որքա՜ն այս դեպքերում «խելացի» ժամանակակիցներ կան Արևմուտքում, որոնք քրիստոնեությունն իր էությամբ արևմտյան մշակութային մեծություն են համարում: Դրանով նրանք անմիջականորեն գործում են նրանց օգտին, որոնք մինչև այսօր էլ քրիստոնեությունն Արևելքում արմատախիլ են անում, քանզի այն դիտում են որպես արևմտյան տերությունների «հինգերորդ զորասյուն» (պահեստային ուժեր): Որպես այդպիսին, արևելյան քրիստոնեության որոշ մասեր իսկապես չարաչարվեցին Արևմուտքի կողմից, երբեմն էլ խաչակրաց արշավանքների մարտադաշտում մահմեդականների հետ միասին կոտորվեցին: Քրիստոնեությունը որպես արդեն իսկ բազմակողմանի մեծություն,- քրիստոնեությունը, որն իր ներքին բազմազանությամբ արդեն իսկ հանդուրժողականորեն և մարդկության համակեցության մի նախասեմինար է,- քրիստոնեությունը, որն իրեն պետք է փոխադարձաբար ճանաչի որպես ինքնուրույն կենսակիցների և զրուցակիցների մի համայնություն. սա Ձեր Արևմուտքի և Արևելքի միջև վարած կյանքի դասերից մեկն է, որը ես ընդունել եմ Ձեզանից և ձգտում եմ ավանդել ուրիշներին:*

*Երբ ես ասում եմ «Արևմուտքի և Արևելքի միջև վարած կյանքի», ապա ի նկատի ունեմ Ձեր հաջորդ կայանն Իրանից հետո, որն անմիջական լուսաբանումն է տարբեր աշխարհների միջև այս տարաձնացության: Աշխարհներ, որոնցից յուրաքանչյուրը Ձեզ ինչ-որ բան տվեց և որոնցից յուրաքանչյուրին Դուք ասելիք ունեցաք: 1973 թվականից ի վեր Ձեր եպիսկոպոսական Աթոռը գտնվում էր ԱՄՆ-ում, Նյու Յորքում: Հյուսիսային Ամերիկայում չորս տարի շարունակ աշխատելուց և փորձառություն ունենալուց հետո, Դուք Ձեր աշխատանքի պտուղներն ու ստացած գիտելիքների պաշարները բերեցիք և ամբարեցիք Ձեր Մայրենի Եկեղեցու պահեստներում, Սիրիայում և Լիբանանում, որտեղ Դուք 1977 թվականից ի վեր սկզբում Կիլիկիո Կաթողիկոսի աթոռակիցն էիք, ապա 1983-ից սկսած մինչև 1995 թվականն ինքներդ Սիսի արքեպիսկոպոս էիք, իսկ այնուհետև Թուրքիայից Սիրիա, իսկ այնտեղից Լիբանան արտագաղթած Հայոց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը: Եթե համեմատելու լինենք այս տարեթվերը Մերձավոր Արևելքի այդ շրջանի քաղաքական պատմության հետ, ապա կարող ենք պատկերացնել, թե Դուք քաղաքացիական պատերազմի այդ տարիներին ի՜նչ աշխատանքներ եք տարել Լիբանանում՝ փրկված հայության պատառիկներին պաշտպանելու ուղղությամբ, որոնց սպառնում էր պատերազմական կացությունների միջև տրորվելու վտանգը: Գուցե այստեղ ոչ բոլորին է հայտնի ընդհանուր ճանաչում գտած այն իրականությունը, որ Լիբանանի հայոց համայնքում շատերն իրենց կյանքով պարտական են Ձեր հովվական գործունեությանը պատերազմի կրակներում:*

*1995 թվականի ապրիլին, Աստծու շնորհով և հայ ժողովրդի կամքով, ինչպես դիպուկ կերպով արտահայտված է հայոց կաթողիկոսական*

տիտղոսներում, Դուք ընտրվեցիք և նշանակվեցիք որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և Մայրագույն Պատրիարք Սուրբ Էջմիածնի Աթոռին, Հայկական Սփյուռքի կամրջագործից վերածվելով Մայր Հայրենիքը Սփյուռքին միացնող կամուրջների վարպետի: Դրանով Դուք այսօր այս հողագնդի մարդկանց մեջ համաշխարհային մշակույթի կենսունակ և անփոխարինելի մասը կազմող հայ քրիստոնյա մշակույթի պահպանման գլխավոր երաշխիքն եք դարձել և ինչպես Ձեր այս դիրքում, այնպես էլ դրանից առաջ արդեն մեծ գործ եք կատարել հանուն աշխարհով մեկ սփռված հայության միասնականության պահպանման:

Արևելքի և Արևմուտքի փոխադարձ մեկուսացման վտանգը նաև պողպատյա վարագույրի ժանգոտումից հետո դեռ ամենևին չի վերացված, Հնարավոր է նույնիսկ, որ այն ավելի է մեծացել, քանզի այդ պողպատյա վարագույրը նաև պարադոքս գործիքի նման մի բան է եղել կարոտալից համայնական երազների, որոնք թե՛ արևելյան, թե՛ արևմտյան շատ դիմազերծ իրողությունների անմիջական ծանոթությունից հետո ի գերև ելան: Ուստի Ձեր կյանքի արևելա-արևմտյան հայրենիքը և Ձեր կյանքի ու հավատի փորձը օգտակար են ոչ միայն հայերի, այլև ողջ քրիստոնեության համար, որին Դուք այդ մասին մանրամասնորեն տեղեկացնում եք: Ձեր մինչ այժմ վարած միջեկեղեցական գործունեության պտուղը հանդիսացավ անցյալ տարի Գրացում արտասանած Ձեր խոսքը Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի (CEC) և Եվրոպական Եպիսկոպոսական Խորհրդի (CCEE) կողմից կազմակերպված Եվրոպական միջեկեղեցական համաժողովին, որտեղ Դուք, ի դեմս ինչպես Արևելքում, այնպես էլ Արևմուտքում տարածված միջեկեղեցական շարժման դեմ ուղղված արհավիրքային «ազատության», հոգևոր համաքրիստոնեական գիտակցության բարձրացված գլխավոր ձայներից մեկը դարձաք:

Դա պատահական չէր, եթե ի նկատի առնելու լինենք համաքրիստոնեական շարժման ասպարեզում Ձեր երկարատև գործունեությունը պատկերող սանդղակը, որի վրա Ձեզ արդեն 1963–1965 թվականներին կարելի է տեսնել որպես Արևելյան Ուղղափառ եկեղեցիների կողմից առաքված պաշտոնական դիտորդի Վատիկանի Երկրորդ Տիեզերաժողովին: Անգլիկանների Լամբեթյան համաշխարհային կոնֆերանսին Դուք արդեն ճանաչված ներկայացուցիչ եք, իսկ ժնևը 1968 թվականից ի վեր արդեն Ձեր հայրենական հանգրվաններից մեկն է դարձել այս աշխարհում, որտեղ Դուք երկար տարիներ եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կենտրոնական և գործադիր հանձնաժողովներում պատասխանատու պաշտոններ եք վարել:

Ձեր Վարքի (vita) մարգարտաշար մանյակի պատկերից ելնելով, կարելի է կարծել, թե Դուք աշխարհների միջև մի միայնակ ճամփորդ եք եղել: Ով այդպես է մտածում, ուրեմն չի հասկացել Ձեր Վարքի էական բնութագիրը: Դուք Ձեր ողջ էությամբ, Ձեր գոյության յուրաքանչյուր մասնիկով ՎԱՐԴԱՊԵՏ եք: Այս հայկական բառը, որը հավանաբար պարսկական ծագում ունի, Հայոց Առաքելական Եկեղեցու հոգևոր աստիճաններից մեկի անվանումն է և նշանակում է «եկեղեցական ուսուցիչ»: Մի անվանում, որն այս կերպ այլ եկեղեցիներում, որքան ինձ հայտնի է, այլևս գոյություն չունի (այն այսօր հաճախ ոչ համապատասխան կերպով թարգմանվում է հունարեն «արխիմանդրիտ» տիտղոսով) և գալիս է հունարեն Նոր Կտակարանի ԴԻԴԱՍԿԱԼՈՍ-ից: Դուք, Վեհափառ, Ձեր ողջ հոգով և մարմնով ՈՒՍՈՒՉԻՉ եք, լինի դա Անթիլիասի կամ Անթիլիասից վեր գտնվող

Բիբֆայայի աստվածաբանական դպրոցում Ձեր դեկան եղած ժամանակներում, թե Սուրբ Էջմիածնում, որտեղ Դուք արդեն հավերժացել եք պատմության մեջ՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ միասին նորից բաց անելով հռչակավոր Գևորգյան Ճեմարանը, որն այդպես է կոչվում այն հիմնադրած Կաթողիկոսի անվամբ: Հայկական կթական համակարգի վերականգնման այս աշխատանքների շնորհիվ Դուք կրկին իրական հնարավորություններ եք ստեղծում հայ և գերմանական գիտությունների, մասնավորապես հայ-գերմանական աստվածաբանության, ավանդական սերտ համագործակցության զարգացման համար: Ես չեմ կարող ժամանակի խիստ սղության պատճառով այստեղ խոսել մինչև առաջին համաշխարհային պատերազմը տևած այդ համագործակցության հարուստ ավանդույթների մասին: Ես կարող եմ միայն երախտագիտությամբ հիշատակել այն փաստը, որ Դուք, Վեհափառ Հայրապետ, Հայլեի համալսարանի մեր ֆակուլտետում 80-ական թվականների սկզբին ծայր առած հայագիտական-աստվածաբանական աշխատանքներին հենց սկզբից բարոյապես և նյութապես օժանդակություն եք ցույց տվել: Այդ օժանդակությունը մենք զգում ենք դր. Յոհաննես Լեփսիուսի արխիվի ուսումնասիրության և հրատարակության, Հայոց Եկեղեցու նկատմամբ (հատկապես ստալինյան շրջանի) պատմության հետազոտության, Հայաստանի նկատմամբ լիբերալ բողոքականության դիրքորոշման լուսաբանման և Հայոց Շարակնոցի գրաբարից գերմաներեն ամբողջական թարգմանության նախապատրաստման աշխատանքների (որն այստեղ, Հայլեում մենք Գերմանական Հետազոտական ընկերության օժանդակությամբ ավարտեցինք) ընթացքում:

Ձեր օգնությամբ կրկին հայ ուսանողներ են գալիս Հայաստանից կամ Սփյուռքից՝ Գերմանիա ուսանելու: Այդ ուսանողները հիշեցնում են առաջին համաշխարհային պատերազմից առաջ այստեղ ուսանած հայ ուսանողների շարքը, որն անսպասելիորեն ընդհատվեց Թուրքիայում հայերի Ցեղասպանության պատճառով, քանզի այստեղ Գերմանիան համընթաց դառնալով Թուրքիային՝ հայերի առջև կորցրեց իր դեմքը, մի վիճակ, որը մինչև այսօր էլ դեռ շարունակվում է: Միակ «մխիթարությունն» այն է, որ Հայաստանն առաջին համաշխարհային պատերազմից հետո դժվարությունների հանդիպեց նաև այնպիսի հայասեր համարվող երկրների կողմից, ինչպիսին, օրինակ, Մեծ Բրիտանիան էր:

Թույլ տվեք, Վեհափառ, Ձեր քսանամյա օժանդակությանը պատասխանել երկու ավետաբեր լուրերով և այս ընծայաճառի ավարտն ուղղել ապագային:

1) Ամենայն հավանականությամբ այս տարվա մայիսին իր աշխատանքներն է սկսելու Գերմանա-Հայկական հետազոտությունների և հանդիպումների կենտրոնը Վիտտենբերգում, Leucorea համալսարանական հիմնադրամին կից: Այս աշխատավայրը սերտորեն համագործակցելու է Հայլեի համալսարանի մեր հայագիտական խմբի հետ և մեր աշխատանքների նկատմամբ երկրամասի կառավարության ցուցաբերած հետաքրքրության արտահայտությունն է, քանզի Սաքսոնիա-Անհալտ երկրամասը Բոննից վերցրել է Հայաստանի հետ գիտական, մշակութային կապերի կոորդինացիայի ֆունկցիան:

2) Հաջորդ երկու տարիներին մեր հայագիտական աշխատանքների գլխավոր նպատակը մեր համալսարանում և «Լոյկորհա»-ում (Վիտտենբերգ) Հայ Առաքելական Եկեղեցու (301-2001) 1.700-ամյա հոբելյանին

նվիրված ՀԱՅԱՍՏԱՆ միջազգային համաժողովի կազմակերպումն է, որը տեղի է ունենալու հոբելյանական տարվա նախօրյակին, 2000 թվականի սեպտեմբերին:

Իհարկե, այդ համաժողովի մի շատ կարևոր նպատակը մեզ համար, Ձեզ, ամենաուշը այդ ժամանակ այստեղ Հայաստում և Վիտտենբերգում կրկին տեսնելու ցանկությունն է: Մենք շատ ուրախ կլինեինք և խնդրում ենք Ձեզ՝ մեր հրավերն ընդունել:

Վերջում, թույլ տվեք խոսքը տալ ուրիշներին, որոնք Ձեզ շնորհավորական ողջույններ և մաղթանքներ են հղել մեր ֆակուլտետում հնարավոր ամենաբարձր ակադեմիական աստիճանի՝ Աստվածաբանության Դոկտորի (DOCTOR SACROSANCTAE THEOLOGIAE HONORIS CAUSA) կոչման շնորհման առթիվ:

Առաջին շնորհավորանքները եկան նույնպես մի առաքելական վայրից, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից: Այդ շնորհավորանքներին միացավ Եվրոպական եկեղեցիների Կոնֆերանսի (CEC) գլխավոր քարտուղար Քեյթ Քլեմենսը, CEC-ի ժնևյան հանձնախմբին պատկանող 120 բողոքական՝ Ուղղափառ և հին Կաթոլիկ եկեղեցիների կողմից: Շնորհավորական մաղթանքներ են ուղարկվել նաև պրոֆեսոր տիկին Գաբրիելե Վինկլերի՝ Թյուբինգենի կաթոլիկ աստվածաբանության ֆակուլտետի և Հռոմի Pontifico Istituto Orientale ինստիտուտի հայտնի ծիսագետի և հայագետի կողմից, Շվեյցարիայից՝ Բեռնի ավետարանչական աստվածաբանության ֆակուլտետից, Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարանից և շատ այլ վայրերից:

Ձեզ, Վեհափառ, և Ձեզ բոլորիդ, Alma mater halensis et vitebergensis համալսարանի նոր Պատվավոր Դոկտորի պատվին այստեղ այսպես ստվար շարքերով հավաքվածներիդ, ես իմ շնորհակալությունն եմ հայտնում ուշադրության համար»:

Պրոֆեսոր Հերման Գոլցի ընծայաճառից հետո, Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ուղղեց նաև Զաքսեն Անհալթ նահանգի Լուսավորության նախարարության աշխատակից Կլաուս Ֆաբերը:

Ապա, ձեռամբ տնօրեն Ուտո Շնելեի, Նորին Սուրբ Օծությանը շնորհվեց համալսարանի աստվածաբանության Պատվո Դոկտորի տիտղոսի վկայականը: Ասենք, որ այս կոչումը տրվում է միայն գիտահետազոտական աշխատանքների այքի ընկած հեղինակներին, իսկ Վեհափառ Հայրապետին շնորհվեց Հայաստանյայց Եկեղեցու աստվածաբանության բնագավառում արված բազմաթիվ աշխատությունների համար:

Վկայականի շնորհումից հետո, «Էկումենիկ հոսանքները Հայ Եկեղեցում» (ECUMENICAL TRENDS IN THE ARMENIAN CHURCH) խորագրով դասախոսություն կարդաց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որը բարձր գնահատվեց ներկաների կողմից: Սակայն մինչ դասախոսությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր խորին շնորհակալությունը հայտնեց նման բարձր պատվին արժանանալու համար և ընդգծեց, որ սա իր կյանքի ամենակարևոր պահերից մեկն է:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԼԼԵ-ՎԻՏՏԵՆԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

# ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(Համառոտ դիտողություններ)

### Ա

*Այս դարում, որը մոտենում է իր ավարտին, «էկումենիզմ» բառը տիրապետող կիրառություն է ձեռք բերել մեր ժամանակակից բառապաշարում։ Այն մի նոր հոդված է ավելացրել այնքան շատ «իզմ»երի արդեն իսկ խճողված ցանկում, որից աշխարհն սկսել է ձանձրանալ։ Այն նույնիսկ խախտում է իր քրիստոնեական ու կրոնական սահմանադիծը՝ թափանցելու համար մարդկային աշխարհիկ կյանքի բնագավառները, երբ մարդիկ խոսում են համայնքների, կազմակերպությունների և ընկերային խմբերի զանազան ձևերի միջև եղած հարաբերությունների մասին։*

*Մենք բոլորս գիտենք, որ այս բառն իր նախնական քրիստոնեական կիրառությամբ և ընդդրկումով վերաբերում է քրիստոնեական միության արտահայտությանը, ցանկությանը, մաաձուտին ու ջանքերին։ Քանզի, այն իսկությունը, որ մենք նկատի ունենք «էկումենիկ» բառով, գալիս է մեր Տեր Հիսուս Քրիստոսից, ով Իր Մարմնացյալ Անձով, Իր արտասանած խոսքերով ու գործերով միացրեց մեզ՝ տարբեր գույնի, լեզվի, սեռի, ազգության, ընկերային կենցաղակերպի ու դասակարգային զանազանություններ տեր մարդկանց։ Ուստի, էկումենիզմն Ավետարանի և Եկեղեցու ներհատուկ բաժինն է։ Ժողովները, որոնք ճանաչվեցին որպես «էկումենիկ» (Տիեզերական), Եկեղեցու միության ամբողջականության արտահայտությունն էին։ Այն նոր շեշտադրումը, որ այս բառը ձեռք բերեց ի դարի քրիստոնեական կյանքի, աստվածաբանության և բառապաշարի մեջ, պայմանավորված էր օրինական ու նախանձախնդիր անհանգստությամբ այն լայնատարած ու բազմադեմ բաժանումների նկատմամբ, որոնց ենթարկվել էր Քրիստոսի Եկեղեցին անցած դարերի ընթացքում։*

*«էկումենիկ» բառն այսօր ավելի լայն իմաստ է ձեռք բերել, որ տարածվում է քրիստոնյա Եկեղեցիների միջև ներչփումների, հարաբերությունների, համատեղ աղոթքների, աստվածաբանական քննարկումների և գործնական համագործակցության ողջ շղթայի վրա։*

*Այս համառոտ դիտողություններն անելով որպես ներածական մաս, այժմ ես անցնում եմ իմ այսօրվա ելույթի կենտրոնական նյութին։ Ես միայն փորձելու եմ նշել, առանց վերլուծական մշակման հնարավորության, էկումենիկ բնույթի որոշ հատանքները Հայ Եկեղեցու երկար ու հակասական պատմության մեջ, և հատուկ ուշադրություն եմ դարձնելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և գերմանական աստվածաբանական ֆակուլտետների, համալսարանների ու Եկեղեցիների միջև եղած հարաբերություններին, որոնք էկումենիկ հարաբերությունների ծիրի մեջ մի կարևոր էջ են կազմում ԺԹ դարի վերջին և Ի դարի առաջին երկու տասնամյակում։*

### Բ

*Հայ Եկեղեցին, քրիստոնեական պատմության վաղ դարերում իր ծագումից ի վեր, ձևավորվեց ու աճեց որպես Քրիստոսի մարմնի բաղկացուցիչ և անբաժան մաս։ Նրանք, ովքեր ծանոթ են Հայ Եկեղեցու ձևավորման վաղ փուլերին ու ժամանակներին, շատ լավ գիտեն, որ քրիստոնեությունը Հայաստանում*

տարածվեց, և Եկեղեցին կազմակերպվեց սերտ հարաբերության մեջ լինելով հարևան երկրների քրիստոնյա եկեղեցիների, մասնավորապես ասորի, հույն, վրաց և պարսից եկեղեցիների հետ։ Քրիստոնյա կյանքի, մտքի ու քարոզչական ծավալման այնպիսի կենտրոններ, ինչպես Կապադովկյան Կեսարիան, Անտիոքը, Մծբինը, Եդեսիան, Ալեքսանդրիան և ավելի ուշ՝ Կ. Պոլիսը (Բյուզանդիոն), սերտորեն կապված էին և ներդրում ունեցան Հայ Եկեղեցու ավանդության ձևավորման գործընթացի մեջ մինչև Ե դարի վերջը, որ Ոսկեդարն է հայ պատմության՝ մասնավորապես կրոնական, աստվածաբանական և մշակութային բնագավառներում։

Հաղորդակցության հանդեպ անկեղծության ու պատրաստակամության այդ միտումը շարունակվեց նույնիսկ Զ դարի սկզբից հետո, երբ Հայ Եկեղեցին որոշեց չընդունել Քաղկեդոնի ժողովը, որտեղ Լևոնի Տումարն ընդունվեց որպես քրիստոսաբանական դոգմայի հիմնական փաստաթուղթ՝ «Քաղկեդոնյան բանաձև» անվամբ հայտնի ձևակերպման հետ միասին։ Քրիստոնեական Եկեղեցու մեջ բաժանման այս առաջին ցնցումից հետո, որն սկսվեց Քաղկեդոնի ժողովով և խորացավ Ե ու Զ դարերի ողջ ընթացքում, Հայ Եկեղեցու կյանքն ու վկայությունը չշարունակվեց որպես «մեկուսացում» Արևելյան քրիստոնեության մնացյալ հատվածից։ Նույնիսկ սուր վեճերի ու հակամարտությունների ժամանակ հարաբերությունները շարունակվեցին մասնավորապես Հույն Եկեղեցու, Կ. Պոլսի բյուզանդական Պատրիարքության, Ասորի Եկեղեցու և Վրաց Եկեղեցու հետ։ Ավելի ուշ, Խաչակրաց շարժումից հետո, հարաբերությունն ընդգրկեց նաև Լատին Եկեղեցին՝ Հռոմի Պապի իշխանության ներքո։ Անշուշտ, Հայաստանում կային որոշակի աշխարհագրական տարածքներ և հայ ազգաբնակչության հատվածներ, որտեղ հույն ուղղափառ (քաղկեդոնական) ապրեցությունը գործադրվում և երբեմն էլ նույնիսկ պարտադրվում էր բյուզանդական կայսրերի կողմից։ Զանազան աստվածաբանական հոսանքներ կային նաև ասորական քրիստոնեության մեջ, ինչպես «սևերական» (Սևերիոս Անտիոքացի չափավոր միաբնակություն) և «հուլիանական» (Հուլիանոս Հալիկառնասցի երևութականություն) քրիստոսաբանական դպրոցները, որոնք արձագանք գտան Հայաստանի տարբեր վայրերում։ Սակայն Հայ Եկեղեցին անխախտ պահեց իր հակաքաղկեդոնական դիրքորոշումը և անաստան՝ իր անկախությունն ու ինքնությունը։

Հայ աստվածաբանական ավանդության այս հարատև միջեկեղեցական, էկումենիկ հոսանքի ընդամենը մի քանի օրինակ բերելու նպատակով ես կկամենայի նշել

ա) Է դարի սկզբին «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմավորումը՝ հայրաբանական տեքստերի մի ծաղկաքաղ, որտեղ կան ընդհանրական և Հայ Եկեղեցու գրեթե հիսուն հայրեր, որոնց մեջբերումները հավաքվել և ի մի են բերվել հայ ուղղափառ դիրքորոշմանն օժանդակելու և քաղկեդոնական քրիստոսաբանական տեսակետին հակադրվելու նպատակով։ Գերմանիայում ուսանած հայ մեծ գիտնական Կարապետ Տեր-Մկրտչյանը՝ ձեռագրի հայտնաբերողն ու հրատարակիչը, ցույց է տվել այս ծաղկաքաղի աստվածաբանական հարստությունը և դրա կարևորությունը ուրիշ Եկեղեցիների հետ էկումենիկ երկխոսության մեջ։ Երկար ու մանրամասն գիտական ներածության (110 էջ) մեջ նա ասում է. «Կնիք հաւատոյ» ժողովածուն, կոթող Հայոց Եկեղեցու ընդունած այն դաւանական դրութեան, որ իւր կատարեալ զարգացման աստիճանին հասել է Է դարի սկզբում, երկարատև պայքարից և երերումներից յետոյ վերահաստատուել Ը դարի սկզբում» (Կնիք հաւատոյ, Ներածութիւն, էջ CVII, էջմիածին, 1914)։ Հատորը հստակորեն ցույց է տալիս և պերճախոս կերպով վկայում է հայ աստվածաբանության շարունակական էկումենիկ հոսանքի մասին։

բ) Ստեփանոս Սյունեցու (Ը դար) մեծահարուստ աստվածաբանական ժառանգությունը, մասնավորապես կեղծ-Դիոնիսիոսի անվամբ հայտնի գործերի թարգմանություններով ու մեկնություններով։ Այսպիսով, Ե դարից հետո դրված և Դիոնիսիոս Արիսպագացուն (տես Գործք ԺԷ 34) վերագրված գործերի հավաքածուն, որ ներառնում է այնպիսի գործեր, ինչպես «Աստվածային անունները», «Խորհրդական աստվածաբանությունը», «Երկնային ու եկեղեցական նվիրապետությունը», անշուշտ ներդրում ունեցան հետքաղկեդոնական աստվածաբանական բանավեճերի մեջ, հաճախ մասնավորապես հեղինակության հավասար ճանաչմամբ օգտագործվելով, այսպես կոչված, և՛ «երկաբնակների», և՛ «միաբնակների» կողմից։

գ) Ասորի եկեղեցու հետ հարաբերություններն անխափան կերպով շարունակվեցին բոլոր հաջորդ դարերի ընթացքում։ Հայտնի պատմական փաստ է, որ երկու եկեղեցիները հաճախ դիմադրավեցին միևնույն մարտահրավերներին և անցան նմանատիպ ներքին հակամարտությունների միջով։ Ը դարում Հովհան Օձնեցի կաթողիկոսի ցուցաբերած փոխըմբռնման հաշտարար դերը՝ Մանազկերտի հայտնի ժողովում, իսկապես շատ կարևոր ուղենիշ էր երկու եկեղեցիների էկումենիկ հարաբերությունների պատմության մեջ։

Ավելի ուշ, ԺԲ և ԺԳ դարերում, երբ Հայ եկեղեցին հարաբերության ամենաեռանդուն ու որոշիչ շրջանի մեջ մտավ Բյուզանդական Ուղղափառ եկեղեցու հետ, Ասորի Ուղղափառ եկեղեցին նույնպես միացավ քննարկումներին՝ հայերի կողքին, քանի որ նրանք կիսում էին միևնույն քրիստոսաբանական դիրքորոշումը։ Իսկապես, այս ԺԲ և ԺԳ դարերը սերտ հարաբերության շրջաններ եղան երկու եկեղեցիների համար ոչ միայն դավանական դետնի վրա, այլև մասնավորապես մեծարժեք մշակութային շփումների մակարդակի վրա, որոնք ընդգրկեցին Ասորի Ուղղափառ եկեղեցու այնպիսի մեծ դեմքերի, ինչպես Միքայել Ասորին, հաճախ հայտնի որպես Միքայել Մեծ (1166-1199), Գրիգոր Բար Հեբրաուսը և Հայ եկեղեցուց Ներսես Պահլավունի կաթողիկոսը, որը հայտնի է որպես Ներսես Շնորհալի (1166-1173), և Գրիգոր Տղան (1173-1193)։

Ասորերեն լեզվի, պատմության, մշակույթի և եկեղեցական հարաբերությունների բազմահմուտ մասնագետ Լևոն Տեր-Պետրոսյանը մի շատ արժեքավոր ուսումնասիրություն ունի՝ «Ասորիների դերը Կիլիկյան Հայաստանի մշակույթի մեջ ԺԲ և ԺԳ դարերում» խորագրով (Վենետիկ, 1988)։ Իր խտացված եզրակացության մեջ նա ասում է. «Հայ-ասորական հարաբերությունների պատմության ընթացքում 12-13-րդ դարերը բնորոշվում են որպես երկու ազգերի միջև անմիջական հարաբերությունների և սերտ համագործակցության ժամանակաշրջան։ Դրա պատճառը Կիլիկիո Հայոց թագավորության աշխարհագրական դիրքն է և ասորի ու հայ ժողովուրդների համակեցությունը Կիլիկիայում, ինչպես նաև նրան սահմանակից գավառներում։ Պաշտոնական և կրոնական երկար տարիների խորը և ամենօրյա հարաբերությունները ասորիների ու հայերի միջև, իրենց հետքն են թողել այդ ժամանակահատվածի մշակութային կյանքում» (էջ 16-17)։

դ) Դեպքերի ամենակարևոր ու ներդրումային զարգացումը տեղի ունեցավ ԺԲ դարի երկրորդ կեսին՝ Հայ և Բյուզանդական եկեղեցիների միջև ներհուն աստվածաբանական գրույցներով ու նամակագրությամբ։ Այն սկսվեց 1165-ին, երբ Հայ եկեղեցու ամենատաղանդավոր ու զարգացած աստվածաբաններից մեկը լուրջ և բացատրական գրույց ունեցավ բյուզանդական կայսր Մանուել Կոմնենոսի (1143-1180) ներկայացուցիչ Դուքս Ալեքսի հետ։ Իր բացատրությունն այնքան հստակ էր և այնքան համոզիչ էր հնչում, որ իշխանը զարմացավ՝ հասկանալով, որ այն, ինչ Բյուզանդական կայսրության եկեղեցական ու պետական հեղինակու-

թյունները, աստվածաբաններն ու պարզ ժողովուրդը մտածում էին Հայ Եկեղեցու քրիստոսաբանական դիրքորոշման մասին, շատ հեռու էր այն բանից, ինչ Ներսես Շնորհալի եպիսկոպոսը ներկայացրել էր նման ճշտությամբ ու պարզ հստակությամբ։ Նա ցանկացավ դրավոր ունենալ այն, ինչ Ս. Ներսեսը խոսել էր բանավոր կերպով։ Իր ցանկությունը կատարվեց (Տես տեքստը «Թուղթ Ընդհանրական», էջ 87-107)։

Բյուզանդիայում Մանուել Կոմնենոս կայսրն ու Միքայել Պատրիարքը խորապես ազդված էին Ս. Ներսես Շնորհալու կողմից ձևակերպված հայ քրիստոսաբանության դավանական շարադրանքի պարզությամբ և հնչեղությամբ։ Երկու եկեղեցիների միջև նամակագրության մի ողջ շարք հաջորդեց 1166-1179 թվականների ժամանակահատվածում, երբ երեք կաթողիկոսներ Գրիգոր Գ. Պահլավունին (1113-1166), Ներսես Շնորհալին (1166-1173) և Գրիգոր Տղան (1173-1193), հաջորդաբար ներգրավվեցին քննարկման գործընթացի մեջ, որոնցից երեքն էլ կիսում էին աստվածաբանական մտքի և անկեղծ էկումենիկ տրամադրության միևնույն ոգին ու հայացքը։

Հիմնական գետինը, որի շուրջ լուռ համաձայնություն գոյացավ, այն էր, որ հայերը կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանական բանաձևի («Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ») համաձայն «մեկ բնություն» ասելով չեն խառնում երկու աստվածային և մարդկային բնությունները, կամ ընդունում մեկը և մերժում մյուսը, այլ դրանք անխառն ու անբաժան միացած են դավանում, և, որ մյուս կողմից բյուզանդացիները, «երկու բնություն» ասելով, Քրիստոսին երկու մասի չեն բաժանում, ինչպես Ս. Ներսես Շնորհալին է ասում իր առաջին դավանական խոստովանության մեջ։

Նամակագրության և պատվիրակությունների միջոցով տարված բանակցությունները հայկական կողմում հանգեցին Բյուզանդական Եկեղեցու ուղղափառությունը ճանաչելու պատրաստակամության, եթե վերջինս կատարելապես ուղղափառ համարեր հայկական դիրքորոշումը, առանց պնդելու Քաղկեդոնի ժողովի և ուրիշ հույն ծիսական և բյուզանդական կանոնական կամ նվիրապետական ավանդությունների ընդունման վրա, և դա նախապայման չհամարեր նման ճանաչման համար։ Սա այն եզրակացությունն էր, որին հանգեց 1179-ին Գրիգոր Տղա կաթողիկոսի կողմից հրավիրված եպիսկոպոսաց ժողովը Հռոմկլայում, ուր այդ ժամանակ գտնվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսության Աթոռը։

Սակայն նախքան Հայ Եկեղեցու պաշտոնական պատասխանն ստանալը, կայսրը մահացավ, և Բյուզանդիայում քաղաքական դեպքերն այնպիսի ընթացք ստացան, որ 1165-1179 թվականներին երկու Եկեղեցիների կողմից այնքան երազված ու հետապնդված միությունը չոչափելի արդյունք չտվեց Եկեղեցիների իրական կյանքում։

Ե) Հետագա դարերում, երբ Կիլիկյան թագավորությունը սերտ հարաբերության մեջ մտավ Կիլիկյան Դռներով անցնող Խաչակիրների իրարահաջորդ ալիքների հետ, Հայ Եկեղեցին հարաբերությունների զանազան ձևեր զարգացրեց Արևմուտքի Լատին Եկեղեցու հետ, քանզի Խաչակիրների ղեկավար շրջանակներում կային պապական նվիրակներ ու պատվիրակներ, ովքեր շարունակական կապ պահեցին հայ եկեղեցական հեղինակությունների հետ։ Հայտնի փաստ է, որ այս հարաբերությունների մեծ մասն առաջ էին տարվում քաղաքական նկատառումներով, որոնք հաճախ քաջալերվում էին Կիլիկյան Հայաստանի թագավորների ու քաղաքական գործիչների կողմից՝ այն հույսով ու ակնկալությամբ, որ նման եկեղեցական մերձեցման միջոցով ժամանակի արևմտյան ուժերն իրենց աջակցությունը կցուցաբերեն Կիլիկիայի հայկական թագավորությանն ու ժողովրդին օժանդակելու մեջ։




ՀԱԼԼԵԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ
ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵԼՄՈՒՏ ՔՈԼԻ ՀԵՏ

Պապերն ակտիվորեն հետամուտ էին նման հարաբերությանը՝ մեկ հատակ և անվիճելի նպատակադրումով. Հայ Եկեղեցին բերել դեպի Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու դավանական սկզբունքներն ու ծիսական ավանդությունները և հայ եկեղեցական հեղինակությունը ենթարկված տեսնել պապական իշխանությանը։

Ես չեմ կարող մանրամասնել այս հարաբերությունների զանազան բնագավառները։ Մեկ այլ տեղում ես վերլուծել եմ դրանց հիմնական ուղղությունները և գնահատել եմ այդ հարաբերության ցցուն կետերն ու բնույթը մեկ ուրիշ հոդվածում։

Անկախ հարաբերության վիճաբանական բնույթից և դավանական հարցերում անպատուղ ելքից, Հայ Եկեղեցու մշակութային և ծիսական բնագավառներն ու գրականությունը մեծ ազդեցություն կրեցին։ Այս բոլոր հարաբերությունների դրական արժեքն այն էր, որ ժամանակի արևմտյան մշակույթը հարստացման մի աղբյուր դարձավ գիտության և արվեստի, ինչպես գրականության, մանրանկարչության–պատկերազարդման, այնպես էլ կյանքի ընկերային պայմանների մակարդակների վրա։

## Գ

Անցյալում Հայ Եկեղեցու էկումենիկ հարաբերությունների որոշ կետերի, հոսանքների ու առանձնահատկությունների այս չատ համառոտ ուրվագծի ավարտին ես այժմ անցնում եմ իմ խոսքի երկրորդ մասին, որը վերաբերում է գերմանա–հայկական հարաբերություններին, հատկապես փոխադարձ անկեղծության, խոսուն արդյունքների և չոչափելի իրագործումների առումով օրինակելի աստվածաբանական գիտական համագործակցությանը։

ԺԹ դարի վերջին Հայ Եկեղեցին, իր հոգևոր կենտրոն Սուրբ Էջմիածնով, էկումենիկ տրամադրության մի նոր էջ բացեց՝ այս անգամ գերմանական աստվածաբանական գիտության ակադեմիական կենտրոնների ու շրջանակների և Գերմանիայի Բողոքական Եկեղեցիների հետ։ Ձեզ առավել հայտնի է, քան ինձ, որ դարի վերջին երեք տասնամյակները գերմանական բողոքական աստվածաբանական մտքում կարևոր շրջադարձ արձանագրեցին։ Քրիստոնեական պատմության վաղ դարերի պատմական ու հայրաբանական ուսումնասիրությունները տեղի տվեցին քրիստոնեական հավատքի էության մի նոր մեկնաբանությանը։ Այս շրջանի բացառիկ դեմքերից մեկը՝ համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական–աստվածաբան Ադոլֆ ֆոն Հառնակն իրական ներդրում ունեցավ Գերմանիայում գերմանական աստվածաբանական մտածողության ուղղվածության մեջ, երբ սկսեց ջատագովել քրիստոնեական հավատքի ազատագրումն իր դոգմատիկ խճողումներից։ Իր ծավալուն աստվածաչնչական ու հայրաբանական ուսումնասիրությունների և մանավորապես իր գլուխգործոցը հանդիսացող յոթ հատորանոց «Դոգմայի պատմության» մեջ (Ամփոփումը հրատարակվեց մեկ հատորով՝ «Դոգմայի պատմության ուրվագիծ» խորագրի տակ) նա ցույց տվեց, որ Ավետարաններով հայտնված Քրիստոսի ուսմունքի պարզությունը մթագնվել և անգամ աղավաղվել էր հունական փիլիսոփայական ու մետաֆիզիկական մտածողության չափանիշներով մոտենալու և մեկնաբանելու պատճառով։ Իր համար Ավետարանի բովանդակության միջուկն իր բնույթով բարոյագիտական է։ Գաղափարաբանական, մտահայեցողական և ռացիոնալիստական մեկնաբանությունները քրիստոնեական հավատքը տարել են դոգմատիկ ձևակերպումների ճանապարհով, որը վնասել է քրիստոնեական կրոնի գոյաբանական բնույթին։ Քրիստոնեական հավատքի կենդանի ու կենսատու զորությունը, որն իր իսկ բնույթով այնքան ուղղակիորեն

երևում է մարդկային անձնավորություններին, մարդկային կյանքին ու փորձառությանը, կորցրել է իր ուժը, վերածվելով, այսպես ասած, ամուլ դոգմայի՝ ձևակերպված ու հռչակված Եկեղեցու հեղինակությունների կողմից և խորապես ազդված ու պայմանավորված մտածողության փիլիսոփայական ռացիոնալիստական նմուշներով։

Այս մասնավոր աստվածաբանական գիտական մթնոլորտում հայտնվեցին երիտասարդ հայ ուսանողները (մեծավ մասամբ ձեռնադրյալ սարկավագներ), ովքեր երիտասարդ հայ ուսանողները (մեծավ մասամբ ձեռնադրյալ սարկավագներ), ովքեր Սուրբ Էջմիածնի Գևորգյան Ճեմարանից եկան Գերմանիա՝ Բեռլին, Լայպցիգ, Հալլե, Տյուբինգեն և այլուր, առաջ տանելու իրենց աստվածաբանական կրթությունը՝ բարձրագույն ուսման և հետազոտական աշխատանքի գերմանական կենտրոններում։

Ես չեմ կարող ամբողջական պատկերը տալ այն ամենի, ինչ նրանք ձեռք բերեցին Գերմանիայում ուսանելու ընթացքում, և որ ավելի կարևոր է, թե ինչ ձեռքբերում ունեցան իրենց Եկեղեցու կենտրոնն ու իրենց հայրենիքը վերադառնալուց հետո։ Սակայն վստահաբար նրանք մի նոր էջ բացեցին Գերմանիայի և Հայաստանի էկումենիկ հարաբերությունների մեջ՝ գլխավորապես աստվածաբանական հետազոտության, հայրաբանական ուսումնասիրության և քրիստոնեական քարոզության բնագավառներում։

Նման ուսանողների մեծ քանակի միջից (Կարապետ Տեր-Մկրտչյան, Գևորգ Զյորեքչյան, Գարեգին Հովսեփյան, Կոմիտաս վարդապետ, Հուսիկ Զոհրաբյան, Երվանդ Տեր-Մինասյանց և ուրիշներ) ես կկամենայի առանձնացնել երկու անուններ, որոնք մասնավոր արժեք ունեն ինձ համար՝ Կարապետ Տեր-Մկրտչյան և Գարեգին Հովսեփյան։

Առաջինը որոշիչ դեր է ունեցել իմ աստվածաբանական ուսումնասիրությունների մեջ, քանզի իր գրքերն ու հոդվածներն ինձ ոչ միայն մեծ են գիտական իմացության իմաստով, այլև հատկապես աստվածաբանական կողմնորոշման, հետազոտական աշխատանքում առարկայական մեթոդաբանության և ուսումնասիրության նյութի ու առարկաների նկատմամբ մոտեցման իմաստով, որ ես կանվանեի ամբողջական մոտեցում։

Երկրորդը՝ հետագայում Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը, մեկ ուրիշ տեսակի խոր ներդրում ունեցավ իմ անձնական հոգևոր ու մտավոր կազմավորման մեջ, քանզի ես ճանաչեցի նրան Անթիլիասում, երբ շատ երիտասարդ ուսանող էի Դպրեվանքում և միանգամայն բավարար առիթներ ունեի իրեն լսելու ու տեսնելու դասարանում, իր անձնական աշխատասենյակում, եկեղեցու բեմին, դասախոսական ամբիոնին և այնպիսի տեղերում, ինչպես տպարանն ու գրադարանը, ուր նա հաճախ այցելում էր իր գրական գործերի, մասնավորապես իր կոթողային «Ցիշատակարանք ձեռագրաց» աշխատության պատրաստության և հրատարակության առիթով։

Ժամանակը դարձյալ չափազանց կարճ է, որպեսզի ես կարողանամ ինձ թույլ տալ ներկայացնելու ողջ աստվածաբանական ու գիտական աշխատանքը գերմանական գիտական կազմավորում ունեցող այս մեծ գիտնականների, որոնց իրենց ուսումը մեծապես օգնեց Հայ Եկեղեցում իրենց առաքելությունը և հայ մշակույթի մեջ իրենց ծառայությունն առաջ տանելու ընթացքում։

Ես կկամենայի ընդամենը ակնարկել որոշ բնագավառների, անշուշտ շատ ընտրողական և ընդհանրացնող ձևով։

Հայաստան վերադառնալուց հետո՝ 1894-ին և 1897-ին, Կարապետ Տեր-Մկրտչյանն ու Գարեգին Հովսեփյանը ընդգրկվեցին հիմնականում ծառայության չորս տիրույթներում.

ա) Աստվածաբանական կրթություն (Դասավանդում Էջմիածնի Ճեմարանում կատարելով տեսչի և դասախոսի պարտականությունները)։

բ) Կրոնական քարոզչություն խոսքով և գրչով՝ քարոզների և հոդվածների միջոցով, չափահասների կրթության համար, հիմնականում որպես Ամենայն Հայոց կաթողիկոսության «Արարատ» պաշտոնական ամսագրի խմբագիր և աշխատակից։

գ) Վարչական աշխատանք եկեղեցական կենտրոնում և զանազան թեմերում որպես թեմական առաջնորդ կամ հայրապետական պատվիրակ և դպրոցի ուսուցիչ։

դ) Գիտական հետազոտական աշխատանք՝ հայրաբանական գրականության, հայ արվեստի պատմության (ձեռագրեր, մանրանկարչություն, ճարտարապետություն, քանդակագործություն), ազգային պատմության հետ ներհյուսված եկեղեցու պատմության բնագավառներում։

Դուք լավ եք հասկանում, որ անհնարին կլինի սպառիչ կերպով ներկայացնել իրենց աշխատանքն այս բոլոր տիրույթներում։ Այն կարիք կունենա դասախոսությունների, հոդվածների և անգամ հատորների մի երկար շարքի՝ իրենց գրական աշխատանքն ամբողջապես ներկայացնելու համար։ Վստահաբար, ծառայության այս չորս ասպարեզներից ամենաարդյունավետ ու արժեքավոր մասը եղել է վերջինը՝ իրենց կողմից կատարված աստվածաբանական և գիտական աշխատանքը։

Ս. Իրենեոս Լիոնացու հունական բնագիրը կորած «Ճոյցք առաքելական քարոզութեան» գործի հայերեն տարբերակի, նույն Ս. Իրենեոսի «Ընդդէմ հերձուածողաց» կոթողային աշխատության որոշ գրքերի ու պատառիկների, Տիմոթեոս Կուզի «Ընդդէմ ժողովոյն Քաղկեդոնի», վերոհիշյալ «Կնիք հաւատոյ» ժողովածուի հայտնաբերումը Կարապետ Տեր-Մկրտչյանի կողմից, իսկապես էական ներդումներ եղան քրիստոնեական հայրաբանական գիտության մեջ։

Գարեգին Հովսեփյանի կողմից Հայ եկեղեցու Ը դարի հայրերից Խոսրովիկ Թարգմանչի դավանական (քրիստոսաբանական) ճառերի գյուտը և հայ արվեստի պատմության, ձեռագրերի մանրանկարչության ու հիշատակարանների մասին մի շարք գիտական հոդվածներն ու գրքերն, անկասկած, արժեքավոր ծառայություն են մատուցել հայագիտական ուսումնասիրությունների զարգացման գործում։

Ինչը ես կկամենայի նշել իմ այսօրվա խոսքի մեջ, այն է, որ այս երկուսն իրենց ուրիշ ընկերների հետ միասին մտածողության և քրիստոնեական հավատքի մեկնաբանության մի նոր աստվածաբանական ուղղություն ներմուծեցին Արևելյան Հայաստանի Հայ եկեղեցում։ Նրանք ամբողջությամբ օգտագործեցին բոլոր այն առավելությունները, որ իրենք ձեռք էին բերել Գերմանիայում ստացած կրթությամբ։ Իրենցով, իրենց ամուր գիտական աշխատանքով, գիտական մոտեցումը եկավ փոխարինելու աստվածաբանական գրությունների ու կրոնական քարոզության, այսպես ասած, զուտ ավանդական ու ավանդապաշտական նեղ մոտեցմանը։

Հայաստանում իրենց ծառայությունները հիմք դրեցին վերանորոգչական աշխատանքի մի նոր դարաշրջանի՝ առանց վտանգի ենթարկելու իրենց մայրենի եկեղեցու Ավանդության ճշմարիտ, վավերական բնույթն ու կենդանի նկարագիրը։ Ինչպես Կոմիտաս վարդապետը հայ երաժշտությունը մաքրեց հետամուտ անվավեր ու աղավաղող ազդեցություններից ու ձևախեղումներից և վերականգնեց նրա ճշմարիտ պատկերը, այնպես էլ Կարապետ Տեր-Մկրտչյանն ու Գարեգին Հովսեփյանը փորձեցին վերահայտնագործել Հայ Եկեղեցու աստվածաբանական, հոգևոր, մտավոր ու մշակութային ավանդության նախնական դինամիկ առանձնահատկությունները։

Ես հիշում եմ հանգուցյալ կաթոլիկ աստվածաբան հ. Իվ Կոնգարին, ով Վատիկանի Բ ժողովի հրավիրումը բացատրում էր՝ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու

աստվածաբանական բացատրության գաղափարն ու մեծ աշխատանքը վերագրելով երեք գործոնների, որոնց նա ֆրանսերենով անվանում էր «վերաաղբյուրացում» (resourcement).

ա) Վերածնունդ Աստվածաշնչական ուսումնասիրությունների,

բ) Վերածնունդ ծիսական տեքստերի և կենդանի ավանդությունների,

գ) Վերածնունդ հայրաբանական ուսումնասիրությունների։

Հայ Եկեղեցու այս գերմանական կրթություն ստացած սպասավորներն ու գիտնականները փորձեցին պատմական հետազոտության և քննության նույն մեթոդները կիրառել Հայ Եկեղեցու ողջ ավանդության մեջ՝ պարզեցնելու և վերահայտնագործելու Հայ Եկեղեցու ինքնահասկացողության ճշմարիտ պաթոսը՝ այն մաքրելով հետագա միջամտություններից և Եկեղեցու կյանքի ստերեոտիպային, ճահճացած ու ձևապաշտական մտածելակերպից և ձևերից։ Նրանք ցանկանում էին Ավետարանի կենդանի ու կենսատու հոգին և Եկեղեցու Հայրերի մտածողությունը վերակենդանացած տեսնել Եկեղեցու կյանքի առկա շոշափելի պայմաններում։ Նրանք ստիպված էին լրջորեն հաշվի նստելու մարդկային կյանքի ու մշակույթի գիտական նոր, աշխարհայնական հոսանքների հետ։ Անշուշտ, նրանք առողջ մարտահրավերի հանդիպեցին, երբ Գերմանիայում հետ-շարունակում էին իրենց ուսումն այնպիսի պրոֆեսորների, ղեկավար աստվածա-բանների, [illegible] Եկեղեցու պատմաբանների աստվածաբանական մտածողության ներքո, ինչպիսիք էին Ադոլֆ ֆոն Հառնակը, Ֆ. Հ. Լութհարդտը, Թ. ֆոն Զահնը, Հ. Գուիեն, Վ. Վունդտը, Է. Հաուպտը, Ֆրիդրիխ Լուֆսը, Կ. Լամպրեխտը և շատ ուրիշներ։

Անշուշտ, հատկանշական է տեսնել, որ Կարապետ Տեր-Մկրտչյանն այս դարի առաջին երեք տարիներին՝ 1901-1903 թթ., «Արարատ» հանդեսում ինը հոդվածների մի շարք գրեց «Քրիստոնէութեան իսկութիւնը» խորագրի ներքո, գրեթե հետևելով իր հայտնի ուսուցիչ Ադոլֆ ֆոն Հառնակին, որը 1899-1900 թթ. վեցամսյա կիսամյակում «Քրիստոնեության էությունը» թեմայով տասնվեց դասախոսությունների մի շարք էր տվել Բեռլինի համալսարանի տարբեր ֆակուլ-տետների ավելի քան 600 ուսանողների առջև, որն այնքան ուժեղ ներդրում ունեցավ ոչ միայն Գերմանիայում, այլև Եվրոպայի և Ամերիկայի մյուս հատվածներում։ Եկեք լսենք, թե Կարապետ Տեր-Մկրտչյանն ինքը ինչ է ասում այս մասին.

«Աշխարհաբար գիտնական-աստուածաբանը (Ադոլֆ ֆոն Հառնակը) խոսում է ուրեմն այնպիսի մի երիտասարդության հետ, որ ժամանակակից քաղաքա-կրթության բարձրության վրայ է կանգնած և համակուած է ամբողջապէս իւր դարու գաղափարներով։ Նա նպատակ է դնում, ինչպէս նախաբանի մէջ ակնարկում է, պատմագիտական եղանակով՝ զուտ պատմական իրողությունները կշռելով, միջոց տալ «ճանաչելու էականն ու մնայունը երեւոյթների մէջ» և տեսնելու, որ քրիստոնէութիւնը, որչափ և տարբեր համայնքների ու ուղղութիւնների բաժանուած, ներքուստ մի է՝ նոյն կեանքի աղբիւրը բոլոր քրիստոնեաների համար։ Մենք եւս կաշխատենք, քայլ առ քայլ նորան հետեւելով, առանց միշտ նորա մտքերը փոխ առնելու, այլ միայն նորա յարուցած խնդիրները շօշափելով եւ մեր ընթերցողների ըմբռնմանը յարմարուելով՝ ցոյց տալ հետզհետէ մի շարք յօդուածների մէջ, թէ ի՞նչն է քրիստոնէութեան էականն ու մնայունը, եւ ապա, եթէ ժամանակը ներէ, թէ մեր եկեղեցական կեանքի ո՞ր երեւոյթների մէջ եւ ինչ ձեւով արտայայտութիւն է գտնում այդ մնայունն ու էականը. կամ ի՞նչ նոր երեւոյթներ պէտք է յառաջ գան, ինչպէ՞ս ձեւակերպուին, որպէսզի արտայայտութիւն գտնէ» («Քրիստոնէութեան իսկութիւնը», Անթիլիաս, 1993, էջ 28)։

Եվ ապա նա շարունակում է խոսել քրիստոնեական հավատքի սկզբունքային կատեգորիաների կամ հիմնական սկզբունքների մասին՝ կապված մարդկային կյանքի գանազան երեսների հայկական միջավայրի հետ։ Հետևյալ հոդվածների որոշ վերնագրերն ինքնին ավելի քան պերճախոս են այս իմաստով՝ «Ավետարան և աշխարհ», «Ավետարան և աղքատություն», «Ավետարան և հեղինակություն», «Ավետարան և մշակույթ (կամ քաղաքակրթություն)» ևն։

Գարեգին Հովսեփյանն իր կենդանության օրոք (1947) հրատարակեց իր աստվածաբանական ու քարոզխոսական գրությունների, ճառերի և այլ ժողովրդական ելույթների ժողովածուն մեկ հատորի մեջ՝ «Դեպի լույս և կյանք» նշանակալից խորագրով։ Այն գրությունները, որոնք պատկանում են եկեղեցական ծառայության վաղ տարիներին՝ 1897–1918, շոշափում են նույն հարցերը՝ միևնույն գիտական մոտեցումով։ Ահա մի քանի հատկանշական վերնագրեր՝ «Քրիստոնեություն՝ ճանապարհ դեպի կատարելություն», «Կյանքի բանալին», «Գիտություն և եկեղեցի», «Քրիստոնյայի իդեալը», «Եկեղեցու կոչումը պատմության լույսի տակ» ևն։

Գիտնականների մեծ մասը, հայ եկեղեցական այս երկու պատկառելի դեմքերի կյանքն ու գործն ուսումնասիրելիս, սովորաբար իրենց ուշադրությունը կենտրոնացնում են նրանց պատմագրական ու բանասիրական ժառանգության գիտական և հաճախ աշխարհիկ բնագավառների վրա։ Հազվադեպ են նրանք շոշափում նրանց գրական ժառանգության կրոնական, աստվածաբանական և բարոյագիտական երեսները։

Ես կարծում եմ, որ արդարացի կլինեմ, եթե ասեմ, որ գերմանական կրթություն ստացած հոգևորականությունը, որոնց ես հիշեցի իմ խոսքի այս ուրվագծային ծավալման մեջ, և մասնավորապես նրանց մեջ երկու ամենահայտնի դեմքերը՝ կարապետ Տեր-Մկրտչյանն ու Գարեգին Հովսեփյանը, մի նոր էջ բացեցին, որն այսօր ես կանվանեի աստվածաբանական ու եկեղեցական «վերածննդյան շարժում»։ Դժբախտաբար այն կարճ կյանք ունեցավ։ Պետք է ընդունել, որ հոգևոր վերազարթոնքի և աստվածաբանական ոգեղինացման այս նոր հոսանքի նախաձեռնողներն ու ջատագովները չքայլեցին «ի վայրի դալարուղի» և չնավարկեցին «ի ջուրս հանգստեան» (Սաղմ. ԻԲ 2)՝ Աստվածաշնչյան Սաղմոսների լեզվով ասած։ Ավանդապաշտ հատվածները կոտրվելու համար բավական ամուր էին։ Նրանք ընդհանրապես պատկերվեցին և մեղադրվեցին գերմանական բողոքական աստվածաբանական մտածողությունից խորապես ազդված լինելու և իրենց Հայրերի հավատարմությանն ու հայ ուղղափառ ավանդությանը դավաճանած լինելու մեջ։

Սակայն ներդրումն արված էր, և նրանց գործը նույնիսկ այսօր ներշնչման աղբյուր է դարձել հոգևորականության նոր սերնդի համար, որ պատրաստվում է Սուրբ Էջմիածնում՝ Հայաստանի ազատության ու անկախության այս տարիներին և Հայ Եկեղեցու վերականգնման այս որոշիչ ու ճակատագրական ժամանակներում։

Դ

Այսօր մենք մի «նոր իրադրության» առջև ենք գտնվում համաշխարհային քրիստոնեության մեջ՝ և՛ այստեղ՝ Գերմանիայում, և՛ իմ մայրենի երկիր Հայաստանում։ Եթե ես ճիշտ եմ կարդում «ժամանակի նշանները»՝ Աստվածաշնչի խոսքերով ասած, աստվածաբանական մտածողության ու հոգևոր կյանքի նոր հոսանքներ կան։ Էկումենիկ շարժումն անցնում է ամենադժվարին ու պատասխանատու ժամանակահատվածի միջով։ Մերօրյա գիտական, արդյունաբերական,

տեխնոլոգիական գյուտերն ու հայտնագործությունները ոչ միայն ազդել են մեր հասարակությունների ֆիզիկական կամ նյութական կողմերի, այլև մեր մարդկային կյանքի հոգևոր, բարոյական ու ընկերային տիրույթների վրա։ Բարոյական վարքի նոր օրենքներ, հոգևոր որոնումների նոր շարժումներ, ծայրահեղ աշխարհայնական կողմնորոշման նոր մտածելակերպեր են ի հայտ եկել, որոնք մեզ դնում են մի նոր օրակարգի առջև՝ և՛ մեր Եկեղեցիներում, և՛ մեր էկումենիկ հանդիպումներում։ Եկեղեցիները մեկ անգամ ևս մարտահրավերի առջև էին։ Նրանք դարձյալ կոչված են մեկ անգամ ևս հայացք նետելու իրենց սեփական ինքնահասկացողության վրա՝ Ավետարանի և Եկեղեցու վավերական Ավանդության, ինչպես նաև մարդկության կյանքի ժամանակակից հոսանքների լույսի տակ։

Խորհրդային համակարգի փլուզմամբ, ուրիշ կենդանի գլոնների հետ հանդիպումների միջոցով մեզ ներկայացված մարտահրավերներով, Արևելյան Եվրոպայի երկրներում հոգևոր կյանքի ու մարդկային ազատության ձգտումի վերազարթոնքով և շատ ուրիշ նոր իրավիճակներով, որոնց հանդիպում ենք երկրորդ հազարամյակի վերջին, մենք դաժան կարիքն ունենք զորացնելու և խորացնելու մեր ընդհանուր էկումենիկ մասնակցությունը։

Վերջին երեք տարիներին, որ ես անցկացրեցի Հայաստանում՝ ազատ ու անկախ պետականության նոր պայմաններում, որտեղ Եկեղեցին վերագտել է քարոզելու և ծառայելու իր ազատությունը, և կոչվելով ծանրագույն ու ծայրագույն հոգևոր պատասխանատվության որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ես տեսնում եմ մեր Հայ Առաքելական Եկեղեցու վկայությունը վերաբորբոքելու մեծ կարիքը։ Մենք դեռ նոր ենք դուրս գալիս հարձակողական անաստվածության տիրապետության յոթանասուն տարիների շրջանից, որն այնքան զորավոր դրոշմ է թողել մեր ժողովրդի, ինչպես և մյուս ժողովուրդների մտքի ու կյանքի վրա, ովքեր նման իրավիճակների միջով անցան, երբ ամեն փորձ արվում էր մարդկային կյանքի հյուսվածքից կրոնի բնաջնջումն ապահովելու համար։

Նաև անձնապես ներգրավված լինելով էկումենիկ շարժման մեջ իմ ծառայության ավելի քան քառասուն տարիների ընթացքում, ես գիտեմ, թե որքան կարևոր է և որքան օգտակար կարող է լինել միմյանց նկատմամբ տրամադրվածությունը, մեր կոչման «ընդհանրությունը» և մեր ջանքերի ներդաշնակումը՝ մեր ժամանակների նոր մարտահրավերներին դիմագրավելու մեջ։ Էկումենիկ շարժումն աստվածաբանական ու հոգևոր հարստացման աղբյուր է եղել ինձ և շատ ուրիշների համար, ովքեր անկեղծորեն և պատրաստակամորեն ներգրավվել են դրա մեջ։ Հակառակ բոլոր նոր դժվարությունների, երբեմն նույնիսկ ճգնաժամերի, մենք մեր Տիրոջ և Իր պատվիրանի համաձայն պարտավոր ենք հետամուտ լինելու բարեկամությանն ու երկխոսությանը՝ ոչ միայն պաղատարների, գիտելիքի ու տեղեկատվության փոխանակման առումով, այլև հատկապես մեր սեփական ավանդություններն ու կյանքի փորձառությունները միմյանց հետ կիսելու իմաստով։ «Բանավեճի» ժամանակն անցել է։ Նոր հրամայականը ճշմարիտ, անկեղծ և ընդհանուր «երկխոսության» կոչն է։

Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և Սփյուռքում մենք մի նոր խնդրի առջև ենք գտնվում։ Այն կայանում է Քրիստոսի հավատքի «էական ու հավիտենական» ծավալումների և մեր Հայրերի ուսուցումների, այն սերունդների ոգին ու հավատարմությունը վերակենդանացնելու մեջ, ովքեր իրենց որբակյաց կենցաղով ու գործով ապրեցին այդ հավատքը՝ դարերի հալածանքների ու փորձությունների միջով։

Մոդեռնիստական, անգամ հետ–մոդեռնիստական, ծայրահեղ աշխարհայնական և ապակրոնական ազդեցության հոսանքների մարտահրավերն իսկապես շատ լուրջ

*է։ Հոգևոր արժեքների ձգտումն այստեղ է։ Ժողովուրդը դաժան կարիքի մեջ է։ Ժողովրդի ավետարանական պատկերը նույնքան իրական է այսօր, ինչպես մեր Տիրոջ ժամանակ։* «Հունձը առատ է, իսկ մշակները՝ սակաւ։ արդ, աղաչեցէք հնձի Տիրոջը, որ մշակներ հանի իր հնձի համար» (*ՄԱՏԹ. Թ 37–38*)։ *Սակայն եթե ձախողվենք դրան ճիշտ և համարժեք պատասխան տալու մեջ, մենք աստվածապարգև հնարավորությունը բաց թողած կլինենք։ Այդպիսով, ստեղծված դատարկությունը անպայմանորեն կլցվի մեր քրիստոնեական հավատքին խորթ և անդամ հակառակ տարրերով։*

*Եվ այստեղ, գերագույն կարևորության և հրատապ բնույթի այս խնդրի մեջ մենք ուրիշ եկեղեցիների ու երկրների (ներառյալ Գերմանիայի) մեր քրիստոնյա եղբայրների ու քույրերի համերաշխության կարիքն ունենք։ Մենք այժմ ակտիվորեն ներգրավված ենք եկեղեցու ծառայողների՝ հոգևորականների ու աշխարհականների, տղամարդկանց ու կանանց նոր սերունդ պատրաստելու անմիջական կենսական գործի մեջ, ովքեր կկարողանան առաջ տանել եկեղեցու Քրիստոսատուր առաքելությունը և այն ժողովրդի համար դարձնել մատչելի, ընդունելի և արժագանքելի։*

*Մի խոսքով, մենք կարիքն ունենք նման մի սերունդ կազմավորելու գործընթացի մեջ մտնելու, որը կկարողանա վերստեղծել պատկերը և վերակենդանացնել ոգին և մտավոր ու բարոյական կերպարը այնպիսի դեմքերի, ինչպիսիք են Կարապետ Տեր-Մկրտչյանն ու Գարեգին Հովսեփյանը։ Անկեղծ էկումենիկ հարաբերության մի նոր ուղի պետք է սկսվի Հայաստանի մեր եկեղեցու և գերմանական կաթոլիկ ու Բողոքական եկեղեցիների միջև։ Ես անկեղծորեն հույս ունեմ, որ համաշխարհային հաղորդակցության նոր դյուրությունները մեզ օգնելու են նման մի համագործակցության հեռանկար լինելու մեջ՝ ի բարօրություն մեր համապատասխան եկեղեցիների և ի խնդիր Քրիստոսի Եկեղեցու միության ու առաքելության։*

*Ամեն ինչ կախված է մեր կամեցողությունից ու անկեղծությունից, մեր էկումենիկ մասնակցության վավերականությունից, հաստատակամությունից և համառությունից։ Անցյալի փորձառությունը չպետք է մնա որպես «արված բաների» հիշողություն, այլ պետք է ներշնչման աղբյուր դառնա «արվելիք բաների» համար և պետք է արվի ընդհանուր վճռական մասնակցությամբ՝ ներկայումս և ապագայի հեռանկարով ու տեսիլքով։*

## *ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱԼԼԵԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՄՈՐԻԹՍԲՈՒՐԳ ԹԱՆԳԱՐԱՆ, ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԼԱՈՒՍ ՌԱՈՒԵՆԻ՝ ՀԵՏ*

*Այստեղից Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով առաքնորդվեց դեպի Հալլե քաղաքի հնագույն Մորիթսբուրգ թանգարան։ Բարձրաստիճան հյուրերին թանգարանի մուտքի մոտ դիմավորեց քաղաքապետ Կլաուս Ռաուենը։ Գեղեցիկ և հարուստ ցուցադրանքներով ձևավորված սենյակներից մեկում տիար Ռաուենը բարիգալստյան ջերմ խոսքեր ասաց Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին, շնորհավորեց համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի բարձրագույն տիտղոսին արժանանալու համար, ապա անդրադարձավ հայ-գերմանական հարաբերություններին, ի մասնավորի՝ Հալլե քաղաքի և Հայաստանի միջև գոյություն ունեցող մշակութային կապերին, և խոսքն ավարտեց հայերեն նախադասությամբ. «Բարի գալուստ, վեհափառ Տեր, Հալլե քաղաք»։*

*Սպա Նորին Սրբությունը փոխադարձեց իր կգացումները և արտահայտեց ուրախությունն այսքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար, միաժամանակ նշեց, որ թանգարանը մեծ հարստություն է ամբարել իր պատերի ներսում: Եվ այցելել Հալլե և չլինել Մորիթսբուրգում, նշանակում է շատ արժեքավոր բան կորցնել:*

*Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ: Նորին Սրբությանն այստեղ հանձնվեցին հնատիպ ու արժեքավոր գրքեր:*

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՉԻՍԿՅԱՆ (FRANCKISCHE STIFTUNG) ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

*Մորիթսբուրգ թանգարանից Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով, պրոֆեսոր Հերման Գոլցի ուղեկցությամբ, այցելեց Հալլե քաղաքի Ֆրանչիսկյան Հիմնարկություն (Franckische Stiftung), ուր նս դիմավորվեց առանձին սիրով և ջերմությամբ: Այստեղ Վեհափառ Հայրապետը շրջեց սրահներով, դիտեց ապգերի այբուբենների ցուցատախտակը, ուր մյուսների շարքում իր ուրույն տեղն է գբաղեցնում Հայոց Մեսրոպարար այբուբենը՝ գեղարվեստորեն նկարապարդված տառերով:*

*Ֆրանչիսկյան Հիմնարկությունում նույնպես հանդիպումն ավարտվեց հուշանվերների հանձնումով: Հայոց Հայրապետին այս անգամ նս նվիրեցին հնատիպ ու արժեքավոր գրքեր:*

*Երեկոյան Գարեգին Ա Կաթողիկոսն իր շքախմբով վերադարձավ Քյոլն:*

### ԱՅԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

*Հունվարի 29-ի հինգշաբթի օրը նս Նորին Սրբության համար հագեցած էր աշխատանքային եռուզեռով: Առավոտյան Քյոլնում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցավ Եվրոպական Խորհրդարանի ներկայացուցիչների հետ, որոնց Նորին Սրբությունը ճանաչում էր դեռևս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, երբ նրանք այցելել էին Հայաստան:*

*Հանդիպումների ընթացքում ծավալվեց մտերմիկ զրույց, շոշափվեցին երկկողմանի հետաքրքրություններ ներկայացնող հարցեր: Առանձնակի շեշտվեց Հայ Եկեղեցու և նրա առաջնորդի կատարած մեծ աշխատանքը Եկեղեցիների համեղբայրության շրջանակներում, ինչպես նաև հայ ժողովրդի հոգևոր վերապարթոնքի ուրախառիթ փաստը:*

*Հանդիպումներից հետո Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրանոցի իր հարկաբաժնում մի շարք հարցազրույցներ տվեց տեղական լրատվական ծառայությունների ներկայացուցիչներին:*

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԼ ԼԵՀՄԱՆԻ ՀԵՏ

*Օրվա երկրորդ կեսին, ժամը 14.00-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով մեկնեց Բոնն, ուր հանդիպում ունեցավ Գերմանիայի*

*Կաթողիկե Եկեղեցու եպիսկոպոսական ժողովի նախագահ պրոֆեսոր դոկտոր Կարլ արքեպիսկոպոս Լեհմանի* (Erzbischof Prof. Dr. Karl Lehmann) *հետ:*

*Բարեողջույնից հետո, Կարլ Լեհմանը Նորին Սրբությանը նախ ծանոթացրեց ներկաներին՝ եպիսկոպոսական ժողովի քարտուղար, Թրիերի եպիսկոպոս Լեո Շվարցը* (Leo Schwarz), *միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Սվգուստ Կորց* (August Gordz) *եպիսկոպոսը, ուսումնական հանձնախմբի պատասխանատու Հայր Բոքենհարդը* (Pater Bockenhard), *արտաքին հարաբերությունների պատասխանատու Վիսմենը* (Wissmenn), *պրոֆեսոր Լեհմանի փոխանորդ և քարտուղար Լանգենդորֆերը* (Langendörfer):

*Պրոֆեսոր Լեհմանից հետո իրեն ուղեկցողներին ներկայացրեց նաև Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությանն ընկերակցում էին Գարեգին և Նորվան եպիսկոպոսները, ինչպես նաև Առաջնորդարանի դիվանապետ Վազրիկ Բաչիլը:*

*Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը ներկայացրեց Հայ Եկեղեցու ներկա իրավիճակը 70 տարիների համայնավարական կարգերից հետո, մտահոգություն հայտնեց Հայաստանում աշխուժացած աղանդավորական շարժումների առիթով, որոնց հիմնական նպատակը մարդորսությունն է և հավատափոխությանն ուղղված աշխատանքը: Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև Հայաստանում մեր Եկեղեցու ներկա պահանջներին: Իբրև ասվածի արձագանք, Կաթողիկե Եկեղեցու ներկայացուցիչները խոստացան օժանդակել Հայ Եկեղեցու վարդապետության տարածմանը՝ հոգևոր գրականության տպագրման ճանապարհով:*

*Հանդիպման վերջում, ի պատիվ Նորին Սուրբ Օծության, եպիսկոպոս Լեհմանի կողմից Դրեսեն հյուրանոցի սրահում տրվեց պաշտոնական ճաշ:*

### *ՀԱՆԴԻՊՈՒՄ ՅՈՀԱՆՆԵՍ ՌԱՈՒԻ ՀԵՏ

*Հունվարի 30-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.00-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունեց Հյուսիսային Հռենոսի և Արևելյան Ֆալիա նահանգի նահանգապետ տիար Յոհաննես Ռաուին* (Johannes Rau):

*Խոսակցության թեման երկու երկրների, քույր Եկեղեցիների համագործակցության խորացումն էր, Գերմանիայի տվյալ նահանգում իրենց բնակությունը հաստատած հայ ժողովրդի կավակների հետ առնչվող խնդիրները, ինչպես նաև Եկեղեցիների համեղբայրությունը:*

*Անդրադարձ եղավ նաև Հայաստանի նորանկախացյալ Հանրապետության ներկա կացութաձևին, Հայ Եկեղեցու այսօրվա դերին, ինչպես նաև հոգևոր վերապարթոնքի ուղին բռնած ժողովրդի առջև ծառացած խնդիրներին:*

*Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:*

### *ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԼԱՈՒՍ ՔԻՆԿԵԼԻ ՀԵՏ

*Քիչ ուշ, ժամը 11.00-ին Նորին Սրբությանն ընդունեց Գերմանիայի Դաշնության Արտաքին գործերի նախարար տիար Քլաուս Քինկելը* (Klaus Kinkel):

Զրույցի ընթացքում, ինչպես նախորդ հանդիպմանը, խոսվեց Հայաստանի ներկա իրավիճակի և խնդիրների, Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ ճանապարհով կարգավորման հարցերի շուրջ:

Քննարկվեցին նաև հայ-գերմանական կապերի ամրապնդմանը վերաբերող հարցեր, Հայաստանին հուզող խնդիրները, շոշափվեցին թե՛ քաղաքական, թե՛ մշակութային երկկողմանի հարաբերություններին առնչվող թեմաներ:

Երկու հանդիպումների ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գեր. Տ. Գարեգին եպս. Բեգչյանը, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի առաջնորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, հոգևոր հայրեր և ազգայիններ:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ, ապա Հայոց Հայրապետը, արտգործնախարար պարոն Քինկելի խնդրանքը, աղոթեց վերջինիս համար:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ << ԴԵՍՊԱՆԱՏԱՆԸ

Նույն օրը, երեկոյան, ի պատիվ Նորին Սրբության, Բոննում, Հայաստանի Հանրապետության դեսպանատանը, տրվեց պաշտոնական ճաշ:

Մինչ հանդիսությունը, Վեհափառ Հայրապետը մուտք գործեց դեսպանատուն, օրհնեց ավանդական աղն ու հացը:

Ապա Գերմանիայում Հայաստանի արտակարգ և լիապտիճ դեսպան տիար Աշոտ Ոսկանյանը հակիրճ տեղեկություններ տվեց դեսպանատան գործունեության մասին:

Շքեղ սրահում կազմակերպված հյուրասիրությանը ներկա էին 200-ից ավելի հրավիրվածներ, այդ թվում՝ << Դեսպանության աշխատակազմը, Գերմանիայում հավատարմագրված տարբեր երկրների արտակարգ և լիապտիճ դեսպաններ, դիվանագիտական այրեր, Քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, նշանավոր ազգայիններ, հյուրեր:

Ճաշկերույթն սկսվեց Տերունական աղոթքով, ապա << Արտակարգ և լիապտիճ դեսպանը ողջույնի խոսք ուղղեց ներկաներին, մեկ անգամ ևս բարի գալուստ մաղթելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ օրհնաբեր այս այցելության համար:

Նորին Սուրբ Օծությունը, շնորհակալական խոսք ուղղելով << Դեսպանությանը իրեն տրված պատվի և հյուրասիրության համար, միաժամանակ իր հովվապետական այցելությունն ի Գերմանիա, ընորոշեց այսպես.

«Կու գամ ճանչնալու մեր ժողովուրդը և ճանչցվելու իմ ժողովուրդեն» և ավելացրեց.

«...Ինձի համար այս պահը մասնավոր նշանակություն ունի ամբողջ հովվապետական այցելության իմ շրջանին: ... Իմ նախորդներից ոչ մեկը, սրանից դարեր նույնիսկ առաջ, երբ ուրիշ երկիր էին գնում, իրենք իրենց երկրի, իրենց ժողովրդի, իրենց պետության դեսպանատան մեջ երբեք չէին ընդունվում: Ես ալ, եթե յոթը տարի առաջ եկած լինեի, ես էլ պիտի չունենայի մեր Հարգարժան դեսպանը, և մենք այսօր Աստծուն փառք ենք

ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ՔԼԱՈՒՍ ՔԻՆԿԵԼԻ ՀԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

*տալիս, որ վերագտա՞նք, Աստուծո օգնությամբ վերագտանք մեր երկրի ազատությունը և անկախությունը, որ Աստուծո տված տուրքն է ու օրհնությունը: Հետևաբար ես իմ շնորհակալություններն եմ հայտնում պարոն Ոսկանյանին, որ ձեզ բոլորը հրավիրեց, որ ես տեսնեմ, թե դուք էլ Հայոց երկրի անկախությունը ողջունում եք և գնահատում եք:*

*Այս երկրում՝ Գերմանիայում, եվրոպական ուրիշ երկրներում առհասարակ Հայության մասին այն գաղափարը կա, որ մենք ջարդվել ենք, հալածվել ենք, ցեղասպանության ենթարկվել ենք, մի խոսքով Հայը գաղթականի պատկեր է ցույց ավել աշխարհում: Փառք Աստուծո, այսօր մենք 20-րդ դարը վերջացնում ենք արևը տեսնելով մեր երկրում, ազատության և անկախության արևը, որովհետև մենք դարի սկզբին տեսանք խավարը, մութը, արյունը, լացը: Եվ այսօր տեսնում ենք Աստուծո աչքը պայծառ հսկում է մեր երկնքում: Ես իմ շնորհակալությունը Հայտնեցի այս երկրի վարչապետ դոկտոր Հելմուտ Քոլին, նաև այսօր արտաքին գործոց նախարարին՝ պարոն Քինկելին և նաև ձեր անձերի միջոցով, դեսպանների միջոցով իմ շնորհակալություններն եմ Հայտնում ձեր երկրների ղեկավարներին, որոնք այս նորածին, նորաբույս մեր Հանրապետության զորավիգ կանգնեցին:*

*Աշխարհը պետք ունի խաղաղության և արդարության: Մանավանդ այդ տարածաշրջանին՝ Կովկասյան աշխարհում: Եկեք բոլորս միասին ձեռք-ձեռքի տանք, որ պատերազմ չլինի, զինական բախումներ չլինեն և մարդու պատիվ բերող եղանակներով լուծվեն բոլոր հարցերը: Թող Աստված օրհնի Գերմանիան և ձեր բոլոր երկրները»:*

*Ներկաներին իր ողջույնի խոսքը հղեց նաև պրոֆեսոր տիկին Անդրեա Շմիտը և խոսքի վերջում Վեհափառ Հայրապետին նվիրեց կիլիկյան շրջանի 12-րդ դարի մի ձեռագիր Ավետարանի գիտական հրատարակությունը, որում տպագրված են վերոհիշյալ ձեռագիր Ավետարանում պատկերազարդված մանրանկարներից և գունավոր պատկերներից:*

*Ընդունելության ընթացքում հյուրերին սրտի խոսք ասաց նաև Բոնն քաղաքի փոխքաղաքապետը:*

*Հանդիսությունն ավարտվեց հուշանվերների փոխանակումով:*

## *ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔՅՈԼՆԻ ԿԱՐԴԻՆԱԼ ԵՈԱԽԻՄ ՄԱՅԶՆԵՐԻ ՀԵՏ*

*Հունվարի 31-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9.00-ին, Նորին Սուրբ Օծությունը հանդիպեց Քյոլնի կարդինալ Եոախիմ Մայզների* (Joachim Meisner) *հետ:*

*Վեհափառ Հորն ընկերակցում էին Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը, Գյուտ և Նորվան Սրբազանները, թեմի հոգևոր դասը, ինչպես նաև հայ համայնքի ներկայացուցիչներ:*

*Զրույցի ընթացքում կարևորվեց միջեկեղեցական հարաբերությունների և քրիստոնեական եղբայրության անհրաժեշտությունը: Խոսակցության նյութ դարձան նաև Գերմանիայի Առաջնորդությունն ու նրա առջև ծառացած խնդիրները, Հայաստանի տնտեսական ու*

քաղաքական ներկա կացությունը, Հայ Եկեղեցու դերը՝ հոգևոր վերապարթոնք ապրող հայ ժողովրդի կյանքում:

Հանդիպման վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

### ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ՔՅՈԼՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Պաշտոնական ընդունելությունից հետո, Նորին Սրբությունն իր շքախմբով, ինչպես նաև կարդինալ Եռախիմ Մայկների ընկերակցությամբ, առաջնորդվեց դեպի Քյոլնի փառավոր Մայր Տաճար:

Կանոնական աղոթքից հետո, հայ հոգևորական դասը երգեց «Ուրախ լեր» շարականը:

Հավարտ էկումենիկ աղոթքի, Վեհափառ Հայրապետը հոգվոց կարդաց Տաճարում թաղված, իրեն նախկինում ծանոթ կարդինալ Ֆրինսկի դամբարանի առջև՝ հանգուցյալի հոգու խաղաղության համար:

Այնուհետև հոյակերտ Տաճարի վերջին ճարտարապետը Հայոց Հայրապետին ի մոտո ծանոթացրեց Տաճարի ճարտարապետական լուծումներին, մանրամասն բացատրություններ տվեց, և ապա պատվարժան հյուրերը դիտեցին Տաճարի առավել կարևոր ու նշանավոր հատվածները:

### ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը, Գերմանիայի Հայոց Առաջնորդարանի նախաձեռնությամբ, Քյոլնի հայ համայնքի սրահում հանդիպում ունեցավ գերմանահայ երիտասարդության հետ:

Նախ բացման խոսքով հանդես եկավ Քյոլնի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Մյուոոն քահանա Սարգսյանը և, հանուն գերմանահայ երիտասարդության, բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին՝ իր օրհնաբեր այցելության ուրախ առիթով:

Այնուհետև Նորին Սրբությունն իր հայրապետական պատգամը հղեց երիտասարդներին՝ հորդորելով մշտապես հավատարիմ մնալ նախնյաց ավանդին, Հայ Առաքելական Եկեղեցուն և Հայրենիքին: Հայը հարատևել է իր լեզվով ու երկաթագիր գրերով: «Աչխարհի որ ծագում էլ ապրելիս լինեք,- շեշտեց Նորին Սրբությունը,- երբեք մի՛ մոռացեք մայրենի լեզուն ու մայր Հայրենիքը»:

Իր պատգամից հետո, Գարեգին Ա Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին:

Հավարտ հանդիպման, երիտասարդները, որպես գեղեցիկ հուշ, նկարվեցին իրենց հոգևոր առաջնորդի հետ:

Հոգեհույզ հանդիպումն ավարտվեց Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով:

### ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇ՝ ՔՅՈԼՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Երիտասարդության հետ հանդիպումից հետո, Գերմանիայի Հայոց Առաջնորդության Թեմական խորհրդի կողմից, ի պատիվ Նորին

Սրբության, Մարիթիվ հյուրանոցի շքեղ սրահում տրվեց հրաժեշտի ճաշ, որին ներկա էին ոչ միայն Թեմական խորհրդի անդամները, այլև Գերմանահայոց հոգևոր դասը, քույր Եկեղեցիների և տեղական իշխանությունների ներկայացուցիչները, պաշտոնատար այլ անձինք:

Ճաշի ընթացքում իրենց սրտի խոսքը Հայոց Հայրապետին հղեցին Թեմական խորհրդի ատենապետ դոկտոր Սարգիս Քեհյայանը, գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը:

Սպա ջերմ ընդունելության համար իր խորին շնորհակալությունը ներկաներին հայտնեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով նրանց հարատևություն և հաջողություններ:

Հրաժեշտի ճաշի վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Փետրվարի 1-ին, կիրակի օրը, շարունակելով իր հովվապետական այցը Գերմանիա, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Գերմանիայի նորահռչակ մայրաքաղաք Բեռլին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանը, Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ և Լիոնի առաջնորդ գերաշնորհ Տ. Նորվան եպս. Զաքարյանը, գավազանակիր հոգեշնորհ Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը:

Նորին Սրբությանը դիմավորեցին Հյուս. Գերմանիայի հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը, Բեռլինի հայ համայնքի ներկայացուցիչները, Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու պատվելի Մանֆրեդ Ռիխթերը, Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Ոսկանյանը, լրագրող Համո Պետրոսյանը, տեղական իշխանությունների ներկայացուցիչները, պաշտոնատար այլ անձինք:

Բարեողջույնի խոսքերից հետո, շքախումբն առաջնորդվեց դեպի Բեռլինի Ավետարանական Եկեղեցու Մայր Տաճար:

## ՀԱՅԱԾԵՍ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԲԵՌԼԻՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայր Տաճարի մուտքի մոտ Նորին Սրբությանը դիմավորեց տաճարի քարոզիչ Մարթին Բերը (Martin Beer): Բարի գալուստյան խոսքից հետո, շքախումբն առաջնորդվեց դեպի Ավագ Խորան, ուր, ձեռամբ Տ. Նորվան եպս. Զաքարյանի, մատուցվեց հայածես Սուրբ և անմահ Պատարագ:

«Հայր մեր»-ից առաջ ներկա հավատացյալներին իր հայրապետական պատգամը հղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր քարոզում անդրադառնալով Բեռլին քաղաքում բնակվող հայության վերջին հայրուրամյակի պատմությանը, բախտին ու ճակատագրին, քաջալերեց նրանց պատվախնդիր գործունեությունը: Շարունակելով իր խոսքը, Վեհափառ Հայրապետն ավելացրեց, որ ինքը «որպես Հայոց Հայրապետ չի գար երկրե մը, ուր կտիրե լացը, ցավը, սովը: Այլ կուգա երկրե մը, որը վերագտած է իր անկախությունն ու ազատությունը: Այսօր բացառիկ և անկրկնելի պատմական օր է բեռլինահայ գաղութի և Հայ Կաթողիկոսների պատմության մեջ: Մեր նախորդներեն

*Բեռլին եկած էր Խրիմյան Հայրիկը՝ ջարգված, արյունաքամված Հայաստանեն: Այսօր առաջին անգամը ըլլալով, Հայոց Հայրապետը կուգա ձեզի ազատ, անկախ Հայաստանեն»: Վեհափառ Հայրապետն այսպես բնորոշելով հովվապետական իր այցելությունն ի Բեռլին՝ վերանորոգության ու վերակարգոնքի կոչ արեց բեռլինահայությանը:*

*Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի, Նորին Սրբությունը հայոց Մեծ եղեռնի և համաշխարհային երկրորդ պատերազմի զոհերի հիշատակի ծաղկեպսակ կետեղեց Բեռլինի բոնապոհերի հուշարձանկոթողին և «Հոգւոց» կարդաց նրանց հոգիների խաղաղության համար:*

## *ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՂՈԹՔ ԵՎ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԿԱՌՈՒՅՑՎՈՂ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ*

*Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցավ միասնական աղոթք՝ Կաթողիկե, Սվետարանական և Ուղղափառ քույր եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ: Համատեղ աղոթքի ընթացքում հանգանակվեց գումար, որը հատկացվեց քաղաքամայր Երևանում կառուցվող Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու շինարարությանը:*

*Ապա հյուրընկալների կողմից ողջույնի ու բարիգալստյան խոսք ասաց Բեռլին-Բրանդենբուրգի Սվետարանական Եկեղեցու եպիսկոպոս պատվելի Վոլֆգանգ Հյուբերը (Wolfgang Huber): Նա խորին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ հրավերքին ընդառաջելու համար:*

*Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Քրիստոնյա Եկեղեցիներում այսօր իշխող եղբայրության ոգին, ինչպես նաև նրանց համատեղման, միասնական ու բարյացակամ հարաբերությունները և ընդգծեց.*

*«Անցյալ դարուն Խրիմյան Հայրիկը եկավ Բեռլին՝ մասնակցելու գագաթաժողովի մը: Ան ո՛չ գերմաներեն գիտեր, ո՛չ ֆրանսերեն, ո՛չ անգլերեն...: Սակայն ան գիտեր բոլորին հասկանալի լեզուն, որ լացի ու բողոքի լեզուն էր: Որովհետև ան կուգար կոտորածի, ջարդի, ցավի Հայաստանեն: Դժբախտաբար սակայն քաղաքագետները այդ չէին հասկնար: Ահավասիկ այսօր ես կուգամ նույն երկրեն, նույն ազգեն, նույն եկեղեցիեն և ունիմ լեզու մը, որ նորեն հասկնալի է բոլորին. դա էկումենիկ շարժման միութենական լեզուն է, քանի որ ես այսօր կուգամ անկախացած, հարություն առած երկրե մը...»:*

*Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ ապագայում միջեկեղեցական շարժումները առավել մեծ ծավալների պիտի հասնեն Աստուծո փառքի և ժողովուրդների բարօրության համար:*

## *ՃԱՇ ԲԵՌԼԻՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ*

*Համատեղ աղոթքից հետո, ի պատիվ Նորին Սուրբ Օծության, Բեռլինի հայ համայնքի կողմից տրվեց ճաշ, որին մասնակցում էին հայ*

հոգևորականաց դասը, քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, Կաթողիկե Եկեղեցու կարդինալ Շթերցինսկին (Sterzinsky), Բրանդենբուրգի սենատի ներկայացուցիչ Ալմութ Բերգերը (Almuth Berger), սենատի մշակութային գործերով երեսփոխան Փաթերմանը (Patermann), Բեռլին-Բրանդենբուրգի օտար համայնքների պատասխանատու պատվելի Քրիստֆրիդ Բերգերը (Christfried Berger), ինչպես նաև մեծաթիվ հայորդիներ:

Հոնթացս ճաշկերույթի բարեողջույնի խոսքեր ասացին առաջնորդ սրբազան հայրը, հոգեշնորհ Տ. Սերովբե վրդ. Իսահակյանը, տիկին Սոնա Այբերը և պատվելի Մանֆրեդ Ռիխթերը (Manfred Richter):

Նորին Սրբությունը, գնահատելով տիկին Սոնա Այբերի երկարամյա և անձնվեր ծառայությունը համայնքի վարչությունում, նրան պարգևատրեց «Ներսես Շնորհալի» շքանշանով: Նույն պարգևին արժանացավ նաև Ավետարանական Եկեղեցու հովիվ պատվելի Մանֆրեդ Ռիխթերը՝ համայնքին ցուցաբերած օժանդակությունների, ինչպես նաև Ղարաբաղի հիմնահարցին վերաբերվող գրքի հրատարակության համար:

Վեհափառ Հայրապետն այնուհետև «Օրհնության գրեր» շնորհեց Գերմանահայ երիտասարդական առաջին միության կազմակերպիչ և հայոց լեզվի ուսուցչուհի տիկին Երանուհի Հարթմանին և համայնքի խորհրդի վարչության անդամ և գերմանահայ մամուլի աշխատակից պարոն Համո Պետրոսյանին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ՄԱՆՖՐԵԴ ՇԹՈԼԲԵԻ ՀԵՏ

Փետրվարի 2-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Պոտսդամ քաղաք, ուր հանդիպում ունեցավ Բրանդենբուրգի նահանգապետ տիար Մանֆրեդ Շթոլբեի (Manfred Stolpe) հետ:

Հանդիպմանը ներկա էր նաև Պոտսդամի մշակույթի նախարար Ռայխեն (Reiche): Խոսակցության հիմնական թեման Պոտսդամում գտնվող հայ ժողովրդի մեծ բարեկամ, աստվածաբան, քաղաքագետ և գրող Յոհաննես Լեփսիուսի (1858–1926) բնակարանը տուն-թանգարանի, ինչպես նաև հայ մշակույթի օջախի վերածելն էր:

## ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԿԴԱՌՆԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

Ծավալված ջերմ զրույցն ավարտվեց փոխհամաձայնությամբ: Նահանգապետն ու մշակույթի նախարարը խոստացան անել ամեն ինչ, որպեսզի իրականություն դառնա Ամենայն Հայոց Հայրապետի և գերմանահայ համայնքի առաջարկը:

Նախատեսվեց նաև Լեփսիուսի տուն-թանգարան կամ հայկական մշակույթի կենտրոն տեղափոխել Յոհաննես Լեփսիուսի անձնական արխիվը՝ շուրջ 30 հազար փաստաթղթերով: Արխիվը ցարդ պահվում է Հալլե քաղաքի Մարթին Լյութեր համալսարանում, հայագետ պրոֆեսոր Հերման Գոցի հսկողության ներքո:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊՈՏՍԴԱՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԴՈԿՏՈՐ ԳՐԵՄԼԻԽԻ ՀԵՏ

*Այս օգտաշատ հանդիպումից հետո Նորին Սուրբ Օծությանն ընդունեց Պոտսդամի քաղաքապետ դոկտոր Գրեմլիխը (Dr. Gremlich):*

*Ողջագուրանքից հետո, այստեղ ևս ծավալվեց նույն մտերմիկ կրոյցը: Խոսակցության թեման դարձյալ Լեփսիուսի տուն-թանգարանն էր և հայկական մշակույթի կենտրոնը:*

*Քաղաքապետ դոկտոր Գրեմլիխը նույնպես հավանություն տվեց առաջարկին՝ խոստանալով գումարներ հատկացնել տուն-թանգարանի վերանորոգության համար:*

*Հանդիպման վերջում Վեհափառ Հայրապետն ու իր շքախմբի անդամները գրառում կատարեցին պատվո հյուրերի և տպավորությունների հուշամատյանում:*

## ՅՈՀԱՆՆԵՍ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

*Քաղաքապետի հետ ունեցած հանդիպումից անմիջապես հետո, Նորին Սուրբ Օծությունն առաջնորդվեց դեպի Պոտսդամ քաղաքի Բորնշտեդտեր նոր թաղամաս, որի փողոցներից մեկը կոչվելու էր հայոց Մեծ եղեռնից մազապուրծ հայության անմոռաց պաշտպանի՝ Յոհաննես Լեփսիուսի անվամբ, և ուր պետք է կատարվեր բացման ու անվանակոչության հանդիսավոր արարողությունը:*

*Մինչ փողոցը երիկող ժապավենի հատումը, բացման հանդիսավոր խոսք ուղղեց ներկաներին Պոտսդամ քաղաքի Ավետարանական Եկեղեցիների վերատեսուչ Նորին Սրբություն Հանց Ուլրիխ Շուլցը* (Hans Ulrich Schulz).

*«Ձերդ Սրբություն,*
*Մեծահարգ տիար քաղաքապետ,*
*Սիրելի հյուրեր և համաքաղաքացիներ.*

*Ուշ, շատ ուշ, սակայն ամեն պարագայի մինչև այս հարյուրամյակի ավարտն է Պոտսդամ քաղաքը մտաբերում իր կարևոր համաքաղաքացիներից մեկին՝ պոտսդամցի դոկտոր Յոհաննես Լեփսիուսին: Քաղաքի հետ միասին, նաև եկեղեցին է Պոտսդամում մտաբերում իր հոգևորականներից մեկին՝ եղբայր Լեփսիուսին:*

*Գրեթե իր մահվան 62-րդ տարելիցի օրը (վաղը նրա մահվան օրն է: Նա մահացել է 1926 թ. մարտի 3-ին) ի վերջո Յոհաննես Լեփսիուսը պետք է պատվվի հրապարակավ՝ Հայաստանից դուրս, իր նախընտրած գործելավայրում, որտեղ մի նոր փողոց կկրի նրա անունը:*

*Պոտսդամի քաղաքային որոշադիր ժողովից, եկեղեցուց դուրս կամ ներս, որոշ համաքաղաքացիների համար սա մի հաղորդություն է՝ նրա հիշատակի համար իրենց հաստատակամ ու եռանդուն աշխատանքի մեջ: Նրանք չէին ուզում բավարարվել նրանով, որ Յոհաննես Լեփսիուսի կյանքն ու գործը մնա միայն Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» գրքի ընթերցողների և պատմության ու գիտության հետ առնչված մի քանի անձանց տեղեկությունը: Այս նոր փողոցի բնակիչները՝ աշակերտներն ու վարորդները, ուսուցիչներն ու Պոտսդամի հյուրերը այսուհետ պետք է որ չհարցնեն.*

ՄԻ ՊԱՀ ԼԵՓՍԻՈՒՍԻ ՓՈՂՈՑԻ
ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

ԲԵՌԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

«Ո՞վ էր այս Յոհաննես Լեփսիուսը, և ինչո՞ւ է նրա անունը հիշատակվում Պոտսդամում և աշխարհում»: Մեր երեխաներն այլևս պետք է որ չամաչեն Երևանի և ողջ աշխարհով տարածված սփյուռքահայ երեխաների առջև, ովքեր որպես Ցեղասպանության վերապրողներ, Յոհաննես Լեփսիուսի անունը կրում են իրենց սրտերում, ովքեր նրան բարեկամ ու Հայր են կոչում և սիրում այնպես, ինչպես մարդ սիրում է իր պահապան հրեշտակին:

Յոհաննես Լեփսիուսը այստեղից մի վճռական, բայց նաև հուսահատեցնող ու միայնակ պայքար է մղել հողագնդի հնագույն քրիստոնյա մշակույթն ունեցող ժողովրդի կյանքի իրավունքի և արժանապատվության համար:

Գերմանիայի դաշնակից Օսմանյան կայսրության Երիտթուրք իշխանավորները, այսպես կոչված, հայկական հարցի վերջնալուծումը ծրագրեցին և աներևակայելի դաժանությամբ ի գործ դրեցին: Լեփսիուսը ընդդիմանում է Գերմանիայում պետականորեն կանխորոշված լռությանը:

Արտաքին գործոց նախարարությունում Հայոց Ցեղասպանությունը ցինիկորեն կոչվում է ներթուրքական վարչական գործ, և տեղեկագրությունները, լուսանկարներն ու կոչերը անհետանում էին նախարարության գզրոցներում: Լեփսիուսը, խոցված ու վիրավորված, փչրվեց նաև իր սեփական Եկեղեցու տգիտությունից, որն անգամ ի գիտություն չկարողացավ կամ չուզեց ընդունել, որ Ցեղասպանությունը միաժամանակ նաև քրիստոնյաների բոլոր ժամանակների մեծագույն և ամենադաժան հալածանքն է: Այնուհանդերձ նա չի դադարում լինել մահվան դատապարտվածների փաստաբանը և մարդասպանների ամբաստանողը: Օձի խելագիտությամբ, բայց աղավնու անմեղությամբ, չարի կենտրոնում որպես Աստծու ներկայացուցիչ, ձեռնարկում է գործի՝ ունենալով կոչման և անփոխարինելի լինելու գիտակցությունը:

Ինչպես ժամանակին Մովսեսը Հայտնվեց փարավոնի առջև, նա ևս չի վարանում՝ թակել վերին դռները և էնվեր փաշայից պահանջել. «Արձակի՛ր իմ ժողովրդին» (տե՛ս ԵԼԻՑ Ե 1): Հրեական օրենքների համաձայն, մարդ պետք է Յոհաննես Լեփսիուսին Զատիկ կոչի, մի իրավարար: Ինչ է նա, Ձերդ Սրբություն, Ձեր և Ձեր ժողովրդի համար նշանակում, մարդ կարող է վստահաբար միայն սրտերի հարաբերություն արտահայտությանը պատշաճեցնել: Այս պոտսդամցին մոտ է կանգնած Ձեր ժողովրդին՝ որպես մի սիրված որդի: Մեզ՝ Ավետարանական քրիստոնյաներիս համար, նա պետք է արժևորվի որպես մեկը, ում խղճմտանքը զորացրեց և դատողությունը զորաշարժի ենթարկեց մի խորը բարեսրտություն, որպես մեկը, ով իր Տիրոջ հաղորդության մեջ ուժ առավ՝ ընդդիմանալու և կարեկցելու: Եվ Պոտսդամի ողջ բնակչությունը, հայացք նետելով Յոհաննես Լեփսիուս փողոցին, պարտավոր է հիշել, որ իրականում ոտար ցավ չկա այս աշխարհում»:

Հայոց Հայրապետն իր ուրախությունը հայտնեց այդ խորհրդավոր արարողության համար, ջերմությամբ հիշեց մեծ հայասերի անունը, շեշտեց, որ նրա հիշատակն անմահացնող գործերը ոսկյա տառերով են արձանագրված հայ ժողովրդի ճակատագրի դժվարին շրջանը բնութագրող պատմության էջերում, իսկ այս նոր փողոցի բացումը Գերմանիայի և Հայաստանի փոխհարաբերությունների նոր էջն է, որ գրվելու է երկու ժողովուրդների նորօրյա պատմության մեջ՝ կերած արցունքներից, ցավից ու հալածանքից:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ՝ Պոտսդամի քաղաքապետի գլխավորությամբ, Լեփսիուսի արխիվի տնօրեն պրոֆեսոր Հերման Գոլցը, պատմաբաններ, դասախոսներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, մեծաթիվ քաղաքացիներ:

Ասենք նաև, որ Յոհաննես Լեփսիուսի անունը կրող փողոցի վրա մոտ ապագայում կառուցվելու է դպրոց և դարձյալ կրելու է հայ ժողովրդի երախտավորի անունը:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲԵՌԼԻՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԷԲԵՐՀԱՐԴ ԴԻՓԳԵՆԻ ՀԵՏ

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Բեռլինի քաղաքապետ Էբերհարդ Դիփգենի (Eberhard Diepgen) հետ:

Քառասունհինգ րոպե տևած հանդիպման ընթացքում շոշափվեցին կարևոր շատ հարցեր: Խոսակցության հիմնական թեման, սակայն, առնչվում էր Բեռլինի հայ համայնքին, նրա գործունեությանն ու առկա խնդիրներին և ընդհանրապես հայ Սփյուռքին:

Թե՛ քաղաքապետը և թե՛ Հայոց Հայրապետը երկուստեք խոստացան անել հնարավոր ամեն ինչ՝ հայապգի կավակների առավել բարօրության, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում ունեցած դժվարությունները համատեղ ուժերով հաղթահարելու համար:

Հանդիպումից անմիջապես հետո, Նորին Սրբությունն իր շքախմբով ուղևորվեց դեպի Շտուտգարդ:

## ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՅՈՒ «DIAKONISCHES WERK» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով Շտուտգարդ ժամանեց օրվա երկրորդ կեսին, ժամը 15.00-ին՝ հանդիպելու Ավետարանական Եկեղեցու «Diakonishes» բարեսիրական կազմակերպության ներկայացուցիչներին:

Վեհափառ Հայրապետին Շտուտգարդի օդանավակայանում դիմավորեց կազմակերպության «Աշխարհին հաց» հանձնախմբի ատենապետ դոկտոր Հահնը (Dr. Hahn), պաշտոնատար այլ անձինք:

Կազմակերպության կենտրոնում Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեցին բոլոր հանձնախմբերի ներկայացուցիչները՝ կազմակերպության նախագահ Յուրգեն Գոհդեն (Jürgen Gohde), Վյուրթենբերգի նահանգային եկեղեցու անունից Մանֆրեդ Վագները (Manfred Wagner) և ուրիշներ:

Կազմակերպության «Սղետ» հանձնախմբի պատասխանատու Հանալոր Հենցելեն (Hanalore Hentzelen) Վեհափառ Հայրապետին ներկայացրեց 1988-ի ահեղ երկրաշարժից հետո Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնությունների տեղեկագիրը:

Իր պատասխան խոսքում Գարեգին Ա Կաթողիկոսը նախ խորին շնորհակալություն հայտնեց 1988 թ. երկրաշարժից հետո կատարված բոլոր օժանդակությունների, ինչպես նաև կազմակերպության կողմից Հայաստանից եկած ուսանողներին հովանավորելու համար, ապա

*շեշտեց, որ մեծ ներդրում էր Էջմիածնի շրջանում կառուցված կահույքի գործարանը, որի եկամուտները տրամադրվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:*

*Հանդիպումն ավարտվեց հրաժեշտի ջերմ խոսքերով, և Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբով մեկնեց Գյոպինգեն (Göppingen):*

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՅՈՓԻՆԳԵՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

*Նույն օրը, ուշ երեկոյան, Վեհափառ Հայրապետն այցելեց Գյոպինգենի Հայ Առաքելական Սուրբ Խաչ եկեղեցի, որն առաջին հայաբնակ հավատքի տունն է Գերմանիայում:*

*Այստեղ Նորին Սրբությանը դիմավորեցին Կաթողիկե, Ավետարանական և Ուղղափառ Եկեղեցիների ու տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համարյա ամբողջ հայ հավատացյալները:*

*Հայոց Հայրապետը թափորով և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ մուտք գործեց եկեղեցի և առաջնորդվեց դեպի Ավագ Խորան: Կանոնական աղոթքից հետո, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդը բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հորը և հրավիրեց իր հայրապետական պատգամը տալու ներկա հավատացյալներին:*

*Գարեգին Ա Կաթողիկոսը խրախուսեց հավատացյալ ժողովրդին՝ հավատարիմ մնալ քրիստոնեական հավատքին, Եկեղեցուն կապվածությամբ հաստատ պահել հայրերի նվիրական ավանդություններն ու սեփական ինքնությունը, չմոռանալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու մայր Հայրենիքը, որ, լինելով ապատ ու անկախ մի պետություն, նաև աշխարհասփյուռ ողջ հայության անկուգական Հայրենիքն է:*

*Հանդիպումը հավատացյալ հայորդիների հետ ավարտվեց «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ:*

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱԼԱԽ (SALACH) ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՐԱՀԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ

*Սուրբ Խաչ եկեղեցուց Նորին Սրբությունն իր շքախմբով առաջնորդվեց դեպի հայ համայնքին բոլորովին վերջերս տրամադրված սրահ, որը գտնվում է Զալախ քաղաքում, ուր Հայոց Հայրապետին դիմավորեցին մեծ շուքով և ավանդական աղ ու հացով:*

*Լեփ-լեցուն սրահում Հայոց Հայրապետը նախ կատարեց օրհնության արարողությունը՝ մաղթելով, որ հայոց այս տունը մարդաշատ լինի, ինչպես այդ պահին, և որ այստեղ եկող ամեն մի հայորդի մշտապես ջգա Մայր Հայրենիքի և Մայր Եկեղեցու ներկայությունը: Ապա Նորին Սրբությունը ամենքին հաջողություն մաղթեց՝ սկսած գործը հաջող ավարտին հասցնելու համար:*

*Վերջում, ի պատիվ Նորին Սրբության, տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին քաղաքապետ պարոն Իլգը (Ilg), որ այս սրահը չնչին միջոցներով էր տրամադրել հայ համայնքին, տեղական իշխանությունների այլ ներկայացուցիչներ, մեծաթիվ համայնքայիններ:*

*Ուշ երեկոյան Հայոց Հայրապետն իր շքախմբով վերադարձավ Ֆրանկֆուրտ:*

## ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՍԵՆԻ ՆԱՀԱՆԳ

Փետրվարի 3-ին, առավոտյան, Նորին Սուրբ Օծությունն իր շքախմբով մեկնեց Հեսենի (Hessen) նահանգ:

Հեսենի մայրաքաղաք Վիսբադենում Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ նահանգի խորհրդարանի նախագահ Կլաուս Պետեր Մյոլլերի (Klaus Peter Möller) հետ:

Խոսակցության ընթացքում շոշափվեցին երկուստեք հետաքրքրող հարցեր: Նորին Սրբությունը ներկայացրեց Հայաստանի ներկա կացությունը, Հայ Եկեղեցու դերը հոգևոր վերակարթոնք ապրող հայ ժողովրդի կյանքում:

Նահանգապետը Հայոց Հայրապետին ծանոթացրեց մոտակա անելիքներին, որոնք առնչվում են նաև նահանգի հայակցի բնակչությանը:

Ուրախություն հայտնելով պետական շրջանակներում ջերմ ընդունելության համար, Նորին Սրբությունը վերջում նշեց, որ իր անձի նկատմամբ ցուցաբերած հարգանքը ինքը նկատում է որպես սեփական ժողովրդի նկատմամբ դրսևորած հարգալից վերաբերմունք ու մեծ պատիվ: Հրաժեշտից առաջ Հայոց Հայրապետը տեղեկություններ տվեց նաև Հայաստանի մասին:

## ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ ՖՐԱՆԿՖՈՒՐՏՈՒՄ

Խորհրդարանի նախագահի հետ ունեցած հանդիպումից հետո, Նորին Սուրբ Օծությունը վերադարձավ Ֆրանկֆուրտ, ուր հանդիպում ունեցավ կանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

Մամլո ասուլիսին ներկա էին նաև Կաթողիկե հիսուսյան հայր Հանս Լանգենդորֆերը (Hans Langendorfer) և Ավետարանական Եկեղեցու եպիսկոպոս գերաշնորհ Տ. Քոփփեն (Koppe):

Ավելի քան քսան թղթակիցների հետ ունեցած հարցապրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը սպառիչ պատասխաններ տվեց բոլոր հարցերին, որոնք առնչվում էին Հայաստանի Հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական խնդիրներին, Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ լուծման ուղիներին, Եկեղեցիների համեղբայրությանը և այդ ուղղությամբ Հայաստանյայց Եկեղեցու արած և անելիք աշխատանքներին, ինչպես նաև հոգևոր վերակարթոնք ապրող հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կատարած դերին:

## ՓԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՀԱՆԱՈՒԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հետկեսօրին, ժամը 16.00-ին, Նորին Սրբությունն իր շքախմբով այցելեց Հանաուի Ավետարանական Եկեղեցու Մայր տաճար, ուր տեղի ունեցավ փառաբանական աղոթք:

Ամենայն Հայոց Հայրեպետը նախ մուտքի մոտ օրհնեց ավանդական աղ ու հացը, ապա դպրաց և հոգևոր դասի ուղեկցությամբ և «Հրաշափառ»-ի երգեցողությամբ մուտք գործեց տաճար:

Փառաբանական աղոթքին մասնակցում էին նաև Գարեգին և Նորվան արբպանները, գավազանակիր Արտակ աբեղան, Հանաուի

*հոգևոր հովիվ Տ. Հակոբ ավագ քահանա Գյոկչյանը, Քյոլնի հոգևոր հովիվ Տ. Մյուռոն քահանա Սարգիսյանը, մեծաթիվ հյուրեր, քույր Եկեղեցիների և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, բազմահոծ հայ հավատացյալներ:*

*Աղոթքից հետո, հանուն տեղի հայ ժողովրդի, բարիգալստյան խոսք ասաց Նորին Սրբությանը Տ. Հակոբ ավագ քահանա Գյոկչյանը, վերջում Վեհափառ Հորը հանձնեց արծաթյա ափսե, որի վրա փորագրված էին իրենց հոգևոր հորն ուղղված տեղի հավատացյալների բարեմաղթանքները:*

*Հայոց Հայրապետի օրհնաբեր այցելության առիթով բարիգալստյան խոսք ասաց նաև Հանաուի Ավետարանական Եկեղեցու ավագ երեց Գերհարդ Փաուլին* (Gerhard Pauli)*:*

*Ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին Ավետարանական Եկեղեցու հյուրընկալ հարկի ներքո, պատվելի Հակոբ Ջամբազյանն այսպես շարադրեց իր ասելիքը.*

*«Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Կաթողիկոս,*

*Մարտին Լյութեր, Իոհան Սեբաստիան Բախ, Գյոթե, Շիլլեր. բարեկարգիչներու, երաժիշտներու, գիտնականներու, այսօր մարդկանց ջատագով դեմոկրատական Գերմանիա մեջ, հայորդիներս այս երկրին ներկա հսկայական մեքենայական կույր ուժերու, առևտրական կառույցներու, դիվանագիտական միջազգային շարժումներու մեջ, կարծեք, «մոլոխ»-ի մը պողպատյա ատամներուն մեջ փչրվող ու մանրվող տարրին նման, աստանդական հայերս կզարմանանք, թե ի՞նչ կպատահի մեզի. բազմագույն ջա՞րդ, թե՝ անգույն ջարդ...*

*Մենք ակամա զոհը կըլլանք պարտվողական հոգեբանության, պարտականություններե խուսափումի սառն կեցվածքին, անզգա, անտարբեր և անհաղորդ մեր սրբազան եկեղեցվո ոսկեդարյան ժառանգության հանդեպ: Մեր այս շվարումին մեջ ահա Ձեր հովվապետական այցելությամբ հույսի, հայրական սիրո և քաջալերական խոսքերով կկանչիք մեզ հայրենասիրության, եկեղեցանվիրման և աստվածապաշտության:*

*Հեսեն նահանգի սիրելի հայրենակիցներ,*

*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետը Մեսրոպ Մաշտոցի և մեր ոսկեդարյան ժառանգության արժեքները Հայության գիտակցության մեջ դրոշմող Կաթողիկոսն է:*

*Խոր տպավորություն ձգած է վրաս այն այցելությունը, որ եղբայրս՝ վերապատվելի Գերճ և ես Մեծի Տանն Կիլիկիո Վեհարանին մեջ ունեցանք: Վեհափառը մեծ գրասեղանին առջև կանգնած, տրցակներով թուղթերն ու ձեռագիրները առջևը, հայ գրականության ճակատամարտի դաշտին վրա պատերազմի իջած հրամանատարի մը նման կգրեր, կսրբագրեր, կհրահանգեր գրաշարին... և ահա հոն և այստեղ, գիշերը ցորեկին խառնելով, Վեհափառը գիրքերու լույսը առնել կուտար և անցյալի փոշիին տակեն մեր մշակույթի գոհարները դուրս եկան ոչ միայն եկեղեցիներու, կիրակնօրյա դպրոցներու, այլ մանավանդ մեր ինտելիգենցիային՝ գրողներու, բանաստեղծներու, ուսուցիչներու, լրագրողներու սեղաններուն վրա և ապա՝ թերթերու, ամսաթերթերու և գիրքերու մեջ կհրատարակվին մինչև այսօր:*

*Սուրբ Մեսրոպ Մաշտոցի և Հայ գիրի ու գրականության ավանդը մեր սրբազան Հայրերուն հավատքը, այո՛, Վեհափառ Հայրապետը լուսավորիչ Կաթողիկոս է:*

«Խորհե և մտիր» կարգախոսով Վեհափառը Առաքյալին «ինձի նմանող եղէք ինչպես ես Քրիստոսի» բարի օրինակով խանդավառեց Լիբանանի (Մերձավոր Արևելքի) Երիտասարդները «Աստվածային օրինաց ուխտյալ պաշտոնյաները» ըլլալու, միաժամանակ ճանապարհներ բացեց՝ եկեղեցական սրբազան ծառայության համար պետք եղած մասնագիտական ուսում ստանալու:

Գարեգին Ա Կաթողիկոսը Եկեղեցվո տնտեսական դրությունը այնպիսի նոր հիմերու վրա դրաց, որ քննադատներու հեգնանքները իրենց կոկորդին մեջ մնացին, և Եկեղեցվո պաշտոններն ու պաշտոնյաները վերաստացան իրենց արժանի վեհությունը: Այո՛, Վեհափառ Հայրապետը բարեկարգիչ Կաթողիկոս է:

Լիբանանի մեջ հայկական թերթերը հպարտանքով կդրեն Վեհափառին Մերձավոր Արևելքի Եկեղեցիներու միության, տալա Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի նիստերուն ոչ միայն ներկա ըլլալը, այլ մանավանդ Վեհափառին ձգած դրական ազդեցությունը, ժողովները, ատենապետելն ու միջեկեղեցական ուղղություններ տալը: Ան իր գիտաստվածաբանական, կրոնա-դիվանագիտական մոտեցումներով, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին միջազգային մեծ եկեղեցիներու շարքին բարձրացուց, ավելին՝ միջազգային եկեղեցիներու հարգանքն ու հիացումը բերեց Սուրբ Էջմիածին: Այսօր անոնք ակնածանքով կարտահայտվին փոքրիկ ածու Հայ քրիստոնյա ժողովուրդին նվիրումին, մարտիրոսության և աստվածաբանական-եկեղեցական ճոխ ժառանգության վրա:

Համաշխարհային ամբիոններու վրա, բայց և ժողովուրդին այնքա՞ն մոտ է Վեհափառը:

Լիբանանի քաղաքացիական անողորմ կռիվներու ատեն, ռումբերու կատաղի հարվածներուն տակ ժողովուրդին կողքին կեցավ, մխիթարեց ան, որ անկե ազդարարեց: Ու այսպես Դպրեվանքի սաներուն և ազգային ջոջերուն կենդանի օրինակը տվավ՝ զոհվելու իսկ պատրաստ ըլլալ մեր ջաջարի Հայրերուն նման «Վասն Քրիստոսի և վասն Հայրենյաց»:

Իսկ մեծ երկրաշարժի աղետի ցնցման օրերուն Վեհափառը թե՛ սուգի օր հռչակեց, թե՛ աղոթեց և թե՛ գործնական օգնություն կազմակերպեց: Քանիցս Հայրենիք երթալով՝ զորակցեցավ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսին՝ ազգին հոգնած ու վիրավորվածները մխիթարելու համար:

Երկու տարի առաջ, Սուրբ Էջմիածնի Վեհարանի մեջ Հայրապետը մեզի ցույց տվավ փոքրիկ քարտ մը, որու վրա «Հայր մեր»-ը տպել տված էր և ըսավ. «Հովվապետական այցելության ընթացքին շրջաններու մեջ կտեսնեմ ցավ ի սրտի, որ շատեր չեն կրնար ընկերակցիլ ինձի աղոթքի ատեն... Կես միլիոն օրինակ տպել տվի: Չի բավեր 70 տարվա համայնավարության պատճառավ ժողովուրդին մոտ քրիստոնեական հավատքի դիտելիքներուն պակասը, ուստարազգի աղանդներ կշահագործեն այս վիճակը... Եհովայի վկաներեն մինչև հարի քրիչնա աղանդավորներ կշփոթեցնեն ու կմոլորցնեն հավատացյալ մեր ժողովուրդը»:

Իր մեսրոպաշունչ գիրքերով, Առաքելական-Ավետարանական քարոզություններով և միջազգային գետնի վրա տարած միջեկեղեցական փոխհարաբերություններով և կրոնա-քաղաքական ու դիվանագիտական իր հանդիպումներով Վեհափառը մեր օրերու «Խրիմյան Հայրիկ» Կաթողիկոսը եղավ, Խրիմյան Հայրիկ, որ նաև դրական և ուրախալի արդյունքներով կվերադառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

*Վեհափառ Տեր,*

*Ձեր հովվապետական այս այցելությամբ մեզ խանդավառեցիք ու մենք կշնանք ուխտել, որպես գերմանահայություն, մեր լավագույնը ընել՝ Ձերդ Սրբության օկսած բարեգործությունը իր լրումին հասցնելու Ձեր գոհաբերման ջանքերուն նաև մեր բաժինը բերել, մինչև որ Լուսավորիչին կանթեղը ամբողջ Հայաստանի և սփյուռքահայության վրա լուսավորե ի փառս Աստուծո և ի պատիվ հայ ժողովուրդին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին. Ամեն»:*

*Այնուհետև ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Սմենայն Հայոց Հայրապետը՝ պատգամելով մանուկ և պատանի դպիրներին կապված մնալ Հայ Եկեղեցուն.*

*«Սիրեցյալ եղբայրներ և քույրեր ի Քրիստոս, որ չեք խոսում հայերեն, ինչպես որ ես չեմ խոսում գերմաներեն: Ի խորոց սրտի և քրիստոնեական սիրով ողջունում եմ ձեզ: Ձեր ներկայությունն այսօր այս եկեղեցում մեր հայ ժողովրդի հավատացյալ զավակների հետ միասին իրոք էկումենիկ պաշտամունք, էկումենիկ երևույթ է, որովհետև գոյություն ունի քրիստոնեական պատկանելության հոգևոր զգացողություն, որովհետև դուք հանգես եք բերում ձեր սերը, հարգանքը և համակրանքը Հայաստանի Եկեղեցու և հայության հանդեպ:*

*Քիչ առաջ ես հայերեն լեզվով ասացի, թե Աստծու գործերը անիմանալի, անբացատրելի և անքննելի են: 46 տարի Եկեղեցուն սպասավորությանս ընթացքում ես երբեք չէի կարող պատկերացնել, թե օրերից մի օր կայցելեմ Հանաուի մեր հայոց համայնքին և կողջունեմ սերունդների բազմությանը մեր հայրերի ու պապերի, որոնք գաղթեցին տարբեր երկրներից, հիմնականում՝ Թուրքիայից, և այստեղ, այս երկրում՝ Գերմանիայում, հանձինս գերմանացի ժողովրդի, ձեռք բերեցին եղբայրներ և քույրեր: Այսօր ես ձեզ եմ բերել նոր չունչը, նոր ոգին մեր նոր ժողովրդի նոր դարաշրջանի, որ ծագել է հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ:*

*Իմ սիրելի գերմանացի եղբայրը, որ ելույթ էր ունենում, ասաց, թե դուք տեղյակ եք հայ ժողովրդի երկար, տառապալի պատմությանը: Դա պատմության միայն մի կողմն է: Մյուս կողմն այն է, որ մենք միշտ ապրել և ինքնահաստատվել ենք, այլ ոչ թե լոկ վերապրել: Անձամբ ես բոլորովին չեմ սիրում այդ բառը՝ վերապրել: Ահա թե ինչու այսօր ես խորապես երախտապարտ եմ Աստծուն և սրտիս խորքում ծնկի եմ իջնում Նրա առաջ այն բանի համար, որ Նա չնորհեց ինձ այն մեծ պատիվը, որին ես երբեք չէի արժանանա. դառնալ առաջին կաթողիկոսը, որն ընտրվել է ազատ և անկախ երկրում՝ մեր հայրենիքում՝ Հայաստանում: Այսօր մենք թե՛ ծառաները և թե՛ տերերն ենք այն երկրի, որ մեր հայրերն ավանդեցին մեզ պահել, ինչպես նաև ավանդեցին հաստատ պահել մեր քրիստոնեական հավատքը, որն, ըստ 5-րդ դարի մի հայ գրող-աստվածաբանի՝ «ոչ թե մեր մարմնի վրա եղած հագուստի, այլ մեր մորթի գույնն է՝ անփոփոխ»:*

*Այժմ, վերագտնելով մեր ազատությունն ու անկախությունը, մենք պետք է մեզ պատասխանատու զգանք:*

*Այսօր մենք այլևս այն ժողովուրդը չենք, որը լոկ հիշում է պատմությունը, այլ մի ժողովուրդ ենք, որ կերտում է պատմություն: Այսօր պատմությունը յուրաքանչյուր հայի, որտեղ էլ որ նա լինի, պատասխանատվությունն է: Այսօր մենք պետք է հասկանանք այդ ազատության*

իմաստը: Այսօր ես կցանկանայի իմ գնահատանքն արտահայտել իմ բարեկամներից մեկին, մի անձնավորության, որը մեծ սեր և համակրանք էր տածում Հայ Եկեղեցու և հայ ազգի հանդեպ: Նա իմ բարեկամներից մեկն է եղել և զբաղեցրել է բարձր պաշտոններ էկումենիկ շարժման ասպարեզում: Այդ անձնավորությունն է Հայր Ֆիլիպ Փոթերը, որը տարիներ շարունակ թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում արտահայտում էր իր համերաշխությունը Հայ Եկեղեցուն ամենատարբեր միջոցներով ու եղանակներով, որոնք ես այս պահին չեմ կարող լիարժեք ներկայացնել:

Ես նաև իմ գնահատանքն եմ արտահայտում մեր ներկայացուցչին, որն այստեղ մեզ հետ չէր լինի, եթե ես այցելած լինեի ձեզ, ասենք, 7 տարի առաջ: Այդ անձնավորությունն է Գերմանիայի Հանրապետությունում մեր երկրի՝ Հայաստանի Հանրապետության դեսպանատան ներկայացուցիչը:

Ես կցանկանայի նաև իմ խորին երախտագիտությունն արտահայտել մեր կառավարությանը մեր Եկեղեցու ամրացման համար, նաև այն բանի համար, որ նա ճանաչեց Հայ Եկեղեցին ու խղճի լիակատար ազատությունը և ամրագրեց այն մեր սահմանադրությամբ:

Սիրեցյալ եղբայրներ և քույրեր, կարծում եմ, որ դուք պետք է սովորեք ձեր մայրենին՝ ձեր Եկեղեցու և ձեր ազգի լեզուն»:

Խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը մի գեղեցիկ հիշատակ թողեց այստեղ՝ ասելով.

«Սիրեցյալ ժողովուրդ, սա 13-րդ դարի մի հայկական մանրանկարի վերարտադրությունն է, ուր պատկերված է արքայական մի ընտանիք՝ թագավորը և թագուհին իրենց զավակներով, որոնք Աստծու՝ մեր բոլորիս երկնավոր Հոր շնորհն են ստանում: Թող այս մանրանկարը լինի մի փոքրիկ հիշատակ Հանուի մեր հայոց համայնքի հայկական եկեղեցուն»:

## ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇ՝ Ի ՊԱՏԻՎ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅԱՆ

Հետփառաբանական աղոթքի, «Մարիոթ» հյուրանոցի փառավոր ճաշասրահում, ի պատիվ Նորին Սուրբ Օծության, Հեսենի եկեղեցական համայնքի, Հեսենի, Գիսենի և Մայնցի մշակութային միությունների կողմից տրվեց հրաժեշտի ճաշ, որին ներկա էին Հայ Եկեղեցու հոգևոր դասը, քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչ Փոթերը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, դիվանագիտական այրեր, հայ համայնքի մեծաթիվ ներկայացուցիչներ, ինչպես նաև Գերմանիայի հրեա համայնքի նախագահ Իգնաց Պուպիսը:

Հեսենի և շրջակայքի հայ համայնքների ու միությունների անունից ողջույնի ու բարիգալստյան խոսքով հանդես եկավ Հեսենի հայ մշակութային միության ատենապետ տիար Մասիս Նահապետյանը՝ ի մասնավորի ասելով.

«Վեհափառ Տեր,
Գերաշնորհ Սրբազան հայրեր,
Հարգարժան հյուրեր, տիկնայք և պարոնայք.
Ինձ համար մեծ պատիվ է այսօր ձեզ Հեսենի և շրջակայքի հայ համայնքների և միությունների կողմից բարի գալուստ մաղթելը:
Բարի եկաք Հեսեն, բարի եկաք Ֆրանկֆուրտ:

*Վեհափառ Տեր.*

*Չնայած Ձեր ունեցած ժամանակի սղությանը, Դուք ընդունեցիք մեր հրավերը և Ֆրանկֆուրտ ժամանեցիք: Սա ցույց է տալիս, որ Ձեզ համար կարևոր է Հայաստանի հարաբերությունները Հեսեն նահանգի հետ:*

*Հեսենի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո համայնքները, երեսուն տարիներ գոյություն ունեցող Հեսենի մշակութային միությունը, ինչպես նաև Հեսենի և շրջակայքի մյուս հայկական կազմակերպությունները փորձում են ամեն կերպ մեր գերմանացի բարեկամներին ծանոթացնել հայ մշակույթը, պատմությունը և եկեղեցին: Միայն այս ձևով է, որ հայերն ու գերմանացիներն իրար նկատմամբ փոխհասկացություն կարող են ցուցաբերել:*

*Միաժամանակ փորձում են միջազգային հետաքրքրությունը արթնացնել մեր սոցիալ և մշակութային պատմության նկատմամբ: Այսպես կարելի է նոր ցեղային խտրականության և հալածանքի առաջը առնել:*

*Վեհափառ Տեր,*

*Գերաշնորհ Հայրեր,*

*Հարգարժան տիկնայք և պարոնայք.*

*Ձեր ներկայությունը խթան է մեզ համար, որ ավելի մեծ ներդրումով աշխատենք ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության համար»:*

*Կազմակերպված էր նաև գրական-գեղարվեստական հայտագիր, որի ընթացքում իրենց գեղեցիկ երաժշտական ծրագրով հանդես եկան քույր և եղբայր Սերգեյ և Լուսինե Խաչատրյանները:*

*Ապա Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Բեգչյանի հրավերով և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ գնահատանքի արժանացան մի շարք համայնքայիններ:*

*Հայ Եկեղեցուն և համայնքին մատուցած ծառայությունների՝ թե՛ նյութական և թե՛ բարոյական օժանդակությունների համար «Օրհնության գրի» արժանացան Պետրոս սարկավագ Ստրյանը, դոկտոր Նուրի Եաղեն, տիարք Հարություն և Հովհաննես Քյուբելյանները:*

*Այնուհետև Վեհափառ Հայրապետը ներկաներին տվեց իր հայրապետական պատգամը՝ մտերմորեն ասելով. «Այսօր իմ վերջին օրն է իմ հովվապետական անդրանիկ այցելության ի Գերմանիա: Առաջին օրը ժամանեցի Ֆրանկֆուրտ և ինձի առին տարին Քյոլն: Ես ալ ըսի, որ աս երկրեն պիտի չերթամ, մինչև չտեսնեմ Ֆրանկֆուրտի իմ ժողովուրդն ու բարեկամները...»: Ապա Նորին Սրբությունը պատգամեց իր հոտին հավատարիմ մնալ նախնյաց հավատքին ու հարազատ Եկեղեցու ավանդություններին, մշտավառ պահել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լույսը հոգիներում, անմարելի պահել Մայր Հայաստանի հանդեպ սերն ու նվիրումը և անտարբեր չմնալ Գերմանիայի հայ գաղութի և Առաջնորդության ծավալած աշխատանքների նկատմամբ:*

***ՎԵՐԱԴԱՐՁ ՀԱՅՐԵՆԻՔ,***
***ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ***

*Ավարտելով իր անդրանիկ հովվապետական այցը Եգիպտոս և Գերմանիա, փետրվարի 4-ին, չորեքշաբթի օրը, ուշ երեկոյան, Ամստերդամով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը*

վերադարձավ մայր Հայրենիք՝ իր հետ հայոց հինավուրց երկիրը բերելով նաև տարաշխարհներում բնակվող Հայ Եկեղեցու հարապատ պատվանաց կարոտն ու անաւի սերը:

Նորին Սրբությանը «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները, պաշտոնատար այլ անձինք:

## ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Կեսգիշերին Մայր Տաճարում, Իջման Սուրբ Սեղանի առջև, Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհաբանական աղոթքն առաքեց առ Բարձրյալը, ապա ներկաներին հակիրճ տեղեկություն տվեց այցելության մասին՝ ներկայացնելով իր հանդիպումները այցելած երկրների հոգևոր պետերի, ղեկավար անձանց ու հավատացյալ ժողովրդի հետ:

Վեհափառ Հայրապետը կարևորեց հովվապետական այցելությունները, շեշտելով, որ դրանք նպաստում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և իր հավատացյալների միջև կենդանի հաղորդության ստեղծմանը, ինչպես նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացմանը:

Հայաստանյան վերջին իրադարձությունների առիթով Նորին Սրբությունն ասաց. «Վերջին մի քանի օրերին մեր Հայրենիքում տեղի ունեցած ծանոթ իրադարձությունների հանդեպ պետք է արտահայտել քաղաքացիական բարձր աստիճանի գիտակցություն և քաղաքակիրթ աղգին հատուկ արժանավայել կեցվածք՝ հարգելով օրինականությունը և ամեն բանից վեր դասելով Հայրենիքի և ժողովրդի, Եկեղեցու և պետության միասնական շահերը»:

Մ. Վ.